

900
350-75





200.

~~268~~ ¹⁷⁹⁶ ~~g.~~

281

6-63

1138-684

мк

200

350-264-

~~800~~

~~350-26~~ ԿԵՐՈՎՈՒՄ

ԸՆԴՈՒՆՈՒՅԻՆ ԱՐԴՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԵՂԱԳ ՀԵՅԱՑ

ԹՈՒ Զ Թ Բ Կ Դ Ա Կ Ր Ա Կ Ա Կ

ԱՐ

ՀԱՅՈՐՔԻ ՀԱՅԱՍՏԱՆ Ա.Հ.Կ.Ա.



Դ ՎԵՐԵՍԻԿ

Դ ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՅ ԴԱԶԱՐՈՒ

ՅԱՄԻ 1830 ԹՄՀԹ

281
35-028
009

281

281

281

281

ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆԻՐԱԿԱՆ

ՆԵՐՍԻ ՄԵ

Կ Ե Թ Ա Տ Գ Դ Ի Կ Ա Ս Բ Հ Ա Յ Ա Ց

Ա Մ ՀԱՄՈՐՔՆ ՀԱՅԱՍՏԱՆ Ա Զ Ի Ն Ս

ՈՐՈՑ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՏԱՁԱԿ ՆՄԱ 'Ի ՏԵԱՄԱՆԻ

Կ Ե Ր Ս Կ Ս Ճ Ա Ռ Ա յ Վ Յ Թ ի , և ողորմութք նորին
կաթուղիկոս Հ այոց , ընդհանուր հաւատացելոց այ
հայկականացդ սեռից , որք յարեւելս՝ ի սեպհական
աշխարհդ հայաստանեաց բնակեալք , և որք յարեւ
մբտեան կողմանսդ սահեալք նշգեհութք , և որք՝ ի
մէջերկրեայս՝ ի մէջ այլալեզու ազանց տարբերեալք ,
և որք յիւրաքանչիւր եզերս աշխարհաց ըստ մեղաց
մերոց ցրուեալք՝ ի քաղաքս և՝ ի դղեակս՝ ի գեւզս
և յագարակս . որոց այդոցիկ ամենեցուն՝ քահանայ-
ապետաց և քահանայից , վանականաց և քաղա-
քայնոց , իշխանաց և իշխեցելոց , զինուորաց դա-
սուց , ձիավարժից և հետեւակաց , դաւառապետաց
և դործակալաց , տանուտերաց և երկրագործաց ,
վաճառականաց և արուեստագիտաց , և որոց մի-
անգամ՝ ի զանազան ճանապարհու ընթանան կենցա-
զոյս , ըստ ընտրուեն կամաց և յօժարուեն՝ արանց և
կանանց , մանկանց և երիտասարդաց , կատարելոց
և ծերոց , որք ըստ օրինաց աշխարհի քաղաքավա-
րեալք , և որք գերաշխարհիկ են վարուք , ողջոյն
սիրոյ և խաղաղուեն հասցէ յածընկալ և փրկական
պըյնշանես , ի հրեղին լեզուաց հոգւոյն ընդունողաց
առաքելական նշխարացս , և ի սուրբ լուսաւորչին
մերոյ աջէս և յաթուոյս :

Որոց առաջի պաղատիմք յաղաճանս որ առ անձ,
յաղագս ոգւոց ձերոց փրկութե՛, բանալ զականջս
մտաց ձերոց՝ յունկնդրութի՞ն ածայնոց բանիցս այսու-
ցիկ, զոր հանդերձեալ եմք՝ ի պատուիրանաց այ դնել
առաջի ձեր : Որպէս զի առաջնորդեալք մեօք՝ ի
շաւիղս արդարութեան, արժանի եղիցի իւրաքանչ
չիւրոք՝ ի ձէնջ՝ միոյ օթեանաց տան հօրն երկնաւորի
լինել ժառանգաւոր : Հայցեմ և ես յամենեցունց
աղօթս առնել և վասն մեր, բարւոք տալ այ զհա-
մար տնտեսութեանն որ վասն ձեր, յորժամ կո-
չեալ պահանջիցէ ՚ի մէնջ :

Դիմութիւն լիցի ամենեցուն ձեզ, զի հայրն մեր
հոգեւոր և եղբայրն ըստ մարմնոյ, սրբազն կա-
թուղիկոսն Գրիգորիոս՝ աթոռակալն և արեանա-
ռուն մեծի լուսաւորչին հայաստանեաց, և համա-
նման նմին մաքրութե անձին և իմաստութե՛, այն՝ որ
բարւոք հովուեաց երկայն ժամանակաւ զհօտդ բա-
նաւոր, զոր ետ ցնա ՚Վ՛՛ ըստ Պիետրոսի՝ թէ արա-
ծեա զոխմարս իմ՝, որոյ հասեալ ՚ի կատարումն հա-
սակի ըստ նահապետացն կարգի, նախ քան զվախ-
ձանն ազդումն եղեալ նմա ՚ի հոգւոյն, կոչեաց զե-
պիսկոպոսունս և զվարդապետս զհարս սոյ լերինն,
և զորս ՚ի յայլ կողմանց : Եւ թէպէտ և մեք՝ ի բա-
զումանգամկոչմանէ նորին յայսոսիկ՝ հրաժարէաք
յառաջին ժամանակսն, անարժան զանձն վարկա-
նելով, սակայն յայժմուս ակամայ բռնազրուելով
զմեղ՝ ինքն և ժողովք եպիսկոպոսացն, ձեռնա-
դրեաց զմերս անարժանութիւն յաթոռ կաթուղիւ-
կոսութեան ազգի Հայկայ և տան ինորդոմայ :

Եւ իբրև կատարեաց զգործ հրամանին՝ որ ազ-
գեցաւ նմա ՚ի վերուստ, յետ երից ամսոց փոխե-
ցաւ իբր կոչմամք առ ՚Վ՛՛, դասաւորելովլինդ հար-
սըն՝ հայրապետն. ընդ առաքեալսն՝ երկոտասանիցն
լրումն. ընդ հալածեալսն վասն արդարութե՛ համ-
բերօղն ՚ի հալածանս, և ՚ի զանազան փորձութիս
՚ի հակառակացն շշմարտութեան . ընդ փառաւո-
րեալսն՝ պատուեալսն յայ և ՚ի մարդկանէ ՚ի կեանս:
Որոյ և մահն պատուական եղեւ առաջի տն ըստ դե-
րագունից սոյցն, զորոց ասէ մարդարէնս: Խնդիննաւու-

հաւատոյ ընդ ծովլ աշխարհիս՝ հովմով հոգւոյն ուղղակի նաւապետեալ ձշմարտութ և առաքինութեալ, էջաս անշնաս յանքոյթ և յառանց ալեաց նաւահանգիստն . և զմեզ եթող՝ ի տաժանելի և յաղձաւոր կեանս, ի մէջ օձից և կարձաց, և զանազան խածանող պազմանաց՝ երեւելեաց և աներեւութից . և ոչ միայն, այլև ծանրութ բեռանց իներքոյ՝ հոգեորաց և մարմնաւորաց : Յորոց կրից թեթևացեալ ինքն թռեաւ յիմանալեայն կայանս . մերումն տկար և անզօր յանձն արարեալ բառնալ թիկանց զծանրութիւն հոգոց ամենայն եկեղեցեաց :

Եւ իմ յայսոսիկ եղեալ զարհուրիմ սարսեալ, զահ և զերկիւղ դատաստանին այ զմտաւ ածելով, որ վասն հովաւաց և առաջնորդաց ի հին և ՚ինոր կտակարանս ասացեալ: Այնչ զի ոչ տալքուն աչաց կամնինջ արտեանաց, յերկիւղէ այսոցիկ չարչարեալ ոգւոյ իմոյ : Վամզի՝ ի բազումն և ՚ի զանազանս անուանին անուանս և իրս մի դործ տեսչութես ոգւոց, որ կոչի կաթուղիկոսութիւ և հայրապետութիւն, եպիսկոպոսութիւ և քահանայութիւն. և մի քան զմի առաւելեալ և նուազեալ: Վամզի որ մեծն է՝ ի սոսա՝ ծանրագունի բեռանց է՝ ՚իներքոյ, որպէս պարունակօղ զամենայնն: Աակայն ըստ գործոյն՝ օրինադրուիլիքն² մի և նոյն են իւրաքանչիւրոցն, քահանայութեն և քահանայապետութեն: Վամզի վերակոչին ծնող, դայեակ, վարդապետ, բժիշկ, դէտ, հովիւ, առաջնորդ, միջնորդ, դատաւոր, և այլ ևս յոլովազոյն անուանս, որովք խորհուրդք անձպաշտութեն կատարի, և օրէնք եկեղեցւոյ Վի ամբողջ մնայ :

Եւ արդ զիարդ օտար եղելոց՝ ի մօրէ՝ կարիցէ լինել ոք ծնող կամ դայեակ ըստ Պաւղոսի, զի ասէ՝ “Որդեակ իմ, զորս երկնեմ վերստին՝ մինչեւ նկարեսցի Վա՞ի ձեզ”, և դարձել՝ “Որպէս դայեակ մի, որ սնուցանիցէ մանկունս, այնպէս, գթայաք՝ ի ձեզ”: Օ ի ծնեալքն բնութ միրեն զծնօղն. և սընեալքն զդայեակին: Խոկ առ որս փոխանակ սիրոյ՝

(1) Եօթն օր. բաժանին :

(2) Եօթն օր. անուանադրութիւնն :

ատելութիւն և օտարութիւն, զի՞նչ յոյս գոյ ծնանելոյ զայնպիսիսն վերստին ածեղէն բանիւն յապաշխարութիւն, կամսնուցանելոյ հայրօրէն՝ ուսմամբ և երկեղիւ տեառն զնոսա :

Ո՞րպէս հնար է լինելվարդապետ և ուսուցիչ, և քարոզ ելանել՝ ը հրամանին այ”ի վեր բարձու լերին Ախովնի, որ է եկեղեցի սուրբ, և բարձրացուցանել զբարբառ աւետարանին և ոչ երկնչել կամ ըստ Պաւղոսի որ առ Տիմոթէոս՝ քարոզել զբանն ’ի ժամու և ’ի տարաժամու, յանդիմաննել, սաստել և միսիթարել ուր աշակերտեալքն ցրուեալք են և ոչ ժողովեալք ’ի վարժարանի. և ոչ սիրօղք վարժից Ճշմարիտ իմաստութէն, այլ ստութէ և նանրուե . և առ չարութին կատարեալք, և ’ի բարեաց տղայացեալք :

Օ իազդ բժշկական գործոյն կարեմք լինել նմանող առ հիւանդայեալ ոգիսն ’ի խայթմանէ կամակոր վիշապին, ’ի բնաւորականաց կամյանբնականացն ախտից բժշկել ջանալով . ուր ախտացեալքն ոչ միայն ոչ են ’ի խնդիր առողջարար արուեստի հոգեոր բժշկաց, այլև գժկամակ՝ լինին յարբումն դեղոյն օգտակարութէն, եթէ ոք մատուցանէ նոցայանդիմանութիւն, կամ խրատ, ըստ ստամբսացաւացն նմաննութէն, որոց գառն մաղձիւք ապականեալք իցեն : Եշ ոչ միայն, այլև ընդդիմաբաննեն ևս նոցին՝ թէ բժիշկ, նախ զանձն քո բժշկեա յայդպիսի ցաւոց, և ապա առիս մատիցես յանդիմանողքո բանիւ :

Կամ զիազդ այնքան հեռացելոց ’ի մէնջ տեղեաւ և սիրով հնար է լինել դէտ, ըստ հրամանին այ՝ որ առ Լազեկիէլ, եթէ “ Որդի մարդոյ, դէտ կացուցի զքեզ տանդ Խորայէլի, զի թէ ոչ աղաղակաւ ազդարացես նոցա զդարանակալութիւն և զասպատակ թշնամոյն, և նոքա սպանցին կամ գերեսցին, զարիւն նոցա ’ի ձեռաց քոց խնդրեցից ” : Ո՞ի միայն ունիմք միսիթարութիւն յայսոսիկ զմիւս բանն զոր ասէ ած առ սոյն մարդարէ, զի թէ զձայն բարբա-

ո՞յ քո լուիցեն , և անզգոյշ եղեալ կորիցեն , դու զանձն քո ապրեցուցեր , ասէ , և արեան իւրեանց ինքեանք լինին պարտականք :

Օ իարդ հնար է մեզ և զչովուութեն օրէն ըսուլ ՚ի վայրի դալարւոջ անձային օրինացն հանգուցանել և կենդանարար ջրով հոգւոյն իմաստութ մնուցանել , զգայլն հալածել , և զիթրաւորսն բժշկել , ՚ի բացեայ լինելով հովուին և հօտից յոյժ հեռաւորութք ՚ի միմեանց :

Օ իարդ կարելի է մեզ լինել առաջնորդ այնպիսեաց , որք ոչ զկնի հետոց առաջնորդին յօժարին ընդ արքունականն ընթանալ ձանապարհ , որ տանի յերկինս . այլ ընդ լայն և արձակ պողոտայն ; որ հասուցանէ յատակս դժոխոց :

Ո՞նդ կարասցուք լինել միջնորդ ՚ի մէջ այ և մարդկան այնոցիկ , որք ոչ կամիցին պահել զդաշինս ուխտին , զոր եդին հոգւոյն ոքյ յաւուրն փրկութեն , զկնի չարին ընթանան յօժարական կամօք բանիւք և գործովք :

Օ իարդ կարիցեմք և զքահանայապետական դատաւորութիւնն ՚ի գործ արկանել առ ազգ այն պիսի , որք ոչ միայն դատաստանի անձային օրինացն ոչ ՚իներքոյ անկեալ հնազանդին , այլև դատաւորաց եկեղեցւոյ նստին դատաւորք անիրաւութեն , և ինքեանք գերանալից ⁽¹⁾ ազօք եղեալք՝ դատին միշտ չարացար բամբասանօք և անդուռն բերանով զշիղ յանցանաց վարուց նոցա :

Եւ արդ վասն զի այսոքիկ այսպէս , զարհուրիմ և գողամ յերկեզէ դատաստանացն այ . մի գուցէ այս գործ տնտեսութեն յանձն եղեալ ինձ յայ , փոխանակ փառաց՝ անարգութեն լիցի պատճառ , և փոխանակ անթառամ պսակացն ըստ խոստմանն՝ ամօթերեսաց : Եւ փոխանակ լսելոյ , թէ ծառայ բարի և հաւատարիմ , որպէս և ծառայքն որ յարգեցին զտուեալ տաղանդմն և շահաբերք եղեն տեառնն ,

(1) Երկու օր . գերանալիք :

զահագինն լսել և զսարսափելին հրաման՝ ընդ ոչ
շահեցելոյ ծառային, թէ ծառայ չար և վատ, պարտ
էր քեզ զարձաթ բանի իմոյ արկանել՝ ի սեղանա-
ւորս, որ են ոգիք մարդկան, և ես եկեալ՝ տոկո-
սեօք պահանջելի զիմն. այս ինքն՝ ընդ բանին որ՝ ի քէն
լսեին, և զգործոցն կատարումն՝ ի լսողացն։ Եւ զի
դու ոչ ետուր քոց ծառայակցացն զկերակուրն հոգ-
ւոց, յորժամ ժամանակ էր լսելոյ, վասն այդորիկ
ասեմ. առ էք ՚ի դմանէ զարձաթ չնորհաց իմոց, և
տուք այնմոր կատարելապէս աճեցոյ զբան իմ, բատ
կատարեալ թուոյ տասն քանքարացն. և զծառայդ՝
անսպիտան եղեալ՝ ՚ի գործ պաշտաման իմոյ, յորում
եղի, հանէք ՚ի խաւարն արտաքին։

Եւ թէ զի՞նչ արարից զի ապրեսցի անձն իմ յա-
հագնալուր սպառնալեաց աստի, տարակուսելի է
ինձ։ Վանզի շրջել առ ամենեսեանընդ ամկողմանս
աշխարհի, և քարոզել զբանն այ՝ ըստ նմանութեն
առաքելոցն սրբոց, անկարելի է՝ յաղագս ժամա-
նակիս չարուեն և բաղմիշնանուեն։ Եւ քաղաք թա-
գաւորական և բազմաժողով ոչ գոյ ազգի մերում,
որպէս զի անդանոր նստելով յաթոռ հայրապետու-
թեն և վարդապետութեն, ուսուցանէաք ժողովրդեան
մերոյ զածային պատուիրանս, ըստ առաջին հայրա-
պետացն և վարդապետացն։ Վ. Ա. Եմք իբրև զայ-
ծեամն յորսորդաց և ՚ի շանց փախուցելք ՚ի քարան-
ձաւս յայս բնակելով. յորում ոչ և մարմնական հար-
կաւոր պիտոյիւք շատացեալք ՚ի գեղից կամ յագա-
րակաց, յորոց ունիմք և ոչ մի։ Եա և ոչ անդաստան
հողոյ, զի վաստակօք և աշխատութք զպէտս մեր
ընուաք, և ոչ օգնուի ուստեք՝ որպէս արժան էր՝ ՚ի
թագաւորաց և յիշխանաց ՚ի Վ. Հաւատացելոց։
Վ. Ա. Միայն ՚ի տնէ այ՝ ըստ մարդարէին խրատու, զի
ասէ. « Ինկեա՚ի տր զհոգս քո, և նա կերակրէ զքեզու։
Եւ գարձեալ. » Վ. յուսացաւ ՚ի տր և յամօթ եղեւ».

Եւ զի այսոքիկ այսպէս, և սպառնալիք դատաս-
տանին աններելիք ՚ի վերայ պղերգացն հովուաց և
հեղգացելոց, որք ոչ արածեն զբանաւոր հօտս Վ. Հ.
յածեղէն նորա վարդապետութիս, և ոչ արբուցա-
նեն զջուրն կենդանի իմաստուեն այ, և զի իմս տար-

տամութեն անկաւ այս վիճակի հոգեւոր անտեսութեն, յորում ոչ է արթնութիւն ոգւոյ, և ոչ զօրութի մարմնոյ, և ոչ պատահումն բարւոյ ժամանակի՝ ըստ վերագրելոցդ, վորոյ անդիտանամ է, թէ զի՞նչ գործեցից: Ուղուլքանելզօտո հովուա, պետին՝ ի խնամոց հովուուեն, և զգաւինսն՝ ի գայլոցն տեսանելով յափշտակեալս, և անտես առնել, անհաւատութեան է նշանակ: մանաւանդ գիտողի զկամն այ և ոչ տգիտի: Քանզի թէ առ տգիտութեան ոք գործէ զանպատշաճն՝ ըմպէ դան, բայց սակաւ, ըստ տէրունական հրամանին: իսկ գիտութեամբն՝ բազումն և սաստկագոյնս: Ուէպէտ և այժմուս ոչ ոք է տգիտ յընտրողութիւն բարւոյն և շարի: թէ և կամաւ ոք տգիտանայ: Խակ փութալ՝ ի խրատել և յուսուցանել՝ ըստ աշտիճանիս գործոյ հարկաւորութեն, և միշտ ձմբէլ լեզուաւ զկամն բանին այ ի բերանս հոգւոց տղայացելոց ի քա, ահա յանհնարիցն է՝ ըստ վերագրելոցդ, այսմ ժամանակի և տեղւոյ անձամբ մերով զայս առնել: Աակայն զի մի ամենեւին անպտուղք եղիցուք առ ձեզ, հաւատացեալ ժողովուրդ մեզ՝ ի հոգւոյն այ, արդարապէտ դատեցաք մեք և որ ընդ մեզ եպիսկոպոսունք և վարդապէտք, յիշեցուցանել, ձեզ զրով զպատուիրեալսն յայ՝ ի հին և՝ ի նոր կտակարանս: Վանելով յայսմիկ մեծի առաքելոցն Պաւղոսի, որ ոչ միայն շրջելով՝ ի տար աշխարհ քարոզէր զաւետարանն, որպէս և ինքն իսկ ասեր, յլշրուսաղեմէ մինչեւ՝ ի իւրիկեա, այլև՝ ի կապանս գոլովլթով հաստատէր զաշակերտեալսն. որպէս և յայտ առնէ դրելովն. « Պղացէմ զձեզ ես որ կապէալս եմ՝ ի տը, արժանի գնալ կոչմանն՝ յոր կոչեցարուք »:

Բնդ նմին և մեք իբրև՝ ի կամաւոր բանտէ և կապանայ, յայսմ տօթագինք քարանձաւի արգելեալք, զրով ձեռին մերոյ խօսիմք ոնդ բերանով ընդ ամենեսին, որ ունիցին ականջն լսելոյ: Ուզ զմեր ինչ բան, այլ զառաքելոցն և զմարդարէիցն և զվարդապետաց եկեղեցւոյ, երկրորդելով զբանից նոյա զօրութի լսելիս ձեր: Օ որս եթէ լուեալյօժարութք՝ ի միտ առնուցուք, որպէս բարի երկիր և ուա-

բարտ, զսերմանեալմն յինքեան, և գործով պտղա-
բերեսջիք այ, անձանց ձերոց փրկութե, և մեզ վար-
ձուց լինիցիք պատճառ։ Ի՞պա թէ ոք ոչ լուիցէ մտա-
դիւրութք, այլ արհամարհիցէ որպէս զապստամբ
յայ, և կամ թէ լուեալ և ոչ պտղաբերեսցէ գոր-
ծով զարդարութիւն, այլ անզեղջ հոգւով և ապա-
ռումն սրտիւ կայ անյուսութք՝ ՚ի մեղս անդարձ
մինչև ՚ի վախճան, մեք անպարտ եմք յարենէ նոր
առաջի ՎՌի, վկայութեամբն այ, և հրեշտակաց նոր,
և ձեր լսողացդ ամենեցուն։ Վանդի ոչ խորշեցաք
կամ արգելաք ՚ի պատմելոյ նմա զբանն այ :

Եւ արդ որպէս ՚ի մասունս մարմնոյ քան զամպա-
տուականագոյն և առաջին գլուխն է, յաղագս տե-
ղոյն բարձրութե և զգայարանացն ՚ի նմա եղելոց,
և ապա այլքն յանդամոյն մի ըստ միոջէ, այսպէս
և յանդամն հոգւոյն՝ մեծ և առաջին իբրև զգլուխն՝
է հաւատոյն ձշմարտութիւն, և ընդ նմին յարմա-
րեալք՝ որպէս անձն ընդ գլխոյ՝ գործք արդարուե-
մեծամեծք և փոքրունք, ըստ պատուիրանացն ՎՌի։
Վասն այսորիկ և մեք նախ և առաջին՝ գլխոյն ամ-
բարութեց՝ զհաւատոյն բուռն հարկանելով դիցուք
առաջի լսողացդ։ Ոչ նորոգ ինչ գրելով, այլ ՚ի վե-
րայ հիման առաքելոց և մարգարեից և հարց սրբոց
շնուրով համառօտ բանիւ։ Օ ՚ի մի յանուսումն տղի-
տաց լսելով բան՝ որ ոչ ըստ ուղղափառ եկեղեցւոյ
դաւանուեն, այլ արտաքոյ անձաշունչ գրոց բարբառին
՚ի կործանումն լսողաց, մոլորիցի ոք ՚ի ձշմարտու-
թէն, այլ զի գիտիցէք թէ յով արդեօք հաւատացէք
՚ի մկրտուեն աւուր, ըստ Պաւղոսի՝ զի ասէ. “ Վի-
տեմ յու հաւատացեալն եմ ”, և կամ թէ որպէս ար-
ժան է ունել ուղղափառ քրիստոնէին զգաւանուեն
հաւատոյն, յորում և սկսանիմք պարզ և յայտնի
բանիւ ցուցանել զհաւատոյ ձշմարտութիւ :

Պարտ և արժան է Վի երկրպագուացն յանուն
ոք երրորդուեն մկրտելոց, խոստովանել համագոյ զե-
րիս անձնաւորութին հօր և որդւոյ և հոգւոյն սր-
բոյ. մի բնուի և մի անձուի և մի իշխանութիւ համա-
պատիւ և զուգափառու։ Ոչ յումեքէ եղելալ, և ոչ
յետոյ սկսեալ, և ոչ ՚ի խոնարհութէ ՚ի բարձրուեն

տմբարձեալ կամ'ի տկարութէ 'ի զօրութի փոփո-
խեալ այլ յառաջ քան զամ յաւիտեանս էր , և
այժմուս է , և յանվախճան յաւիտեանսն եղիցի :
Ինեղ և անմահ էութի , աներեսոյթ 'ի բնութէ և
երեւելի վասն արարածոց . տեսօղ ամենայնի և ան-
տես յամենայնէ :

Հայր անսկիզբն և անծին : Որդի ծնեալ 'ի բնու-
թէ հօր , այլ անժամանակ : Ոչըստ մարդկան ծնըն-
դեանն ախտաւոր և հոսանուատ , զոր և զմտաւ ա-
ծելն է հայհոյութի , թողթէ բարբառել բանիւ . այլ
որպէս լոյս 'ի լուսոյ , և հուր 'ի հրոյ , զի ոչ են օտարք
'ի բաժանիլն , այլ մի ճառագայթ և մի ջերմութի
հրոյն և լուսոյն , ծնելոյն և յորմէ ծնաւն , և մի է բնու-
թի երկաքանչիւրոցն , թէպէտ և բաժանին 'ի մի-
մեանց անձամբ : Լոյնպէս և լոյս որդի 'ի լոյս հօրէ ,
և հուր ածութեն որդւոյ 'ի հրոյ ածութեն հօր յա-
ռաջ եկեալ ծննդեամբ՝ ոչ են այլեայլ , այլ մի և
նոյն բնութեամբ :

Իսկ օրինակ անօրինակ ծննդեանն որդւոյ ոչ այլ
ինչ է բայց որ 'ի մեզ մտացս ծնունդ զբան , թէպէտ
և ոչ ամենայնիւ համեմատի ճշմարտութեն օրի-
նակս : Ա ասն որոյ և բան ասի՝ յաղագս անապական
գոլով ծննդեանն , իսկ որդի՝ զի 'ի հօր բնութենէ ,
և ոչ օտար 'ի նմանէ կամ արարած՝ ըստ հայհոյու-
թեան Արիոսի : Եւ հնար իմանալոյ զանիմանալին
ոչ այլ ինչ է , բայց հաւատալ ասացելոցն 'ի գիրս
սուրբս , և ոչ ընդքննութեամբ արկանել զանքննէ-
լին , որք անհաս մտաց ասացին զածային ծնունդն
և անճառ բանից :

Լոյնպէս և հոգին սուրբ բղիսումն ասի առ 'ի հօ-
րէ , և փառակից որդւոյ . ած կատարեալ ոնկ զհայր
և զօրդի : Մի կամք երից անձնաւորութեն , և մի
զօրութի , և մի արարչութի : Հայր կամեցաւ ստեղ-
ծանել զերեւելի և զաներեսոյթ արարածս , և որդի
գոյացոյց յանգոյից , և հոգին սուրբ՝ զարդարեաց ի-
մաստութք : Եւ նոյն ինքն բանն այ որ արար զմար-
դըն 'ի պատկեր իւր , և երեւեցաւ նմայետ յանցա-
ւորութեն , և ամենայն արդարոցն առաջնոց՝ Լոյի
և Արքահամու և Խաչակայ և Զակովբայ և Յո-

բայ, Վալվիսի և Վհարովինի և Հեսուայ, և այլոց
 մարդարէիցն և, խօսեցաւ ընդ նոսա, 'ի ժամանակս
 վերջինս աւետեօք հրեշտակապետին Գաբրիէլի էջ
 յորովայն կուսին Վարիամու, և առեալ 'ի ընութէ
 նորա մարմին և հոգի և միտս, և խառնեաց նոր և
 անձառելի միաւորութք ընդ ածութէ իւրում, և
 զարդացեալ յորովայնին իննամսեայ ժամանակաւ
 որպէս մանուկ, ծնաւ ած և մարդ կատարեալ,
 անշփոթ էութք, և անբաժանելի միաւորութք, մի
 ՞՛՛, և մի անձնաւորութիւն նորա յերկուց բնու-
 թեց միացելոց: Կաթնասուն եղեւ որպէս զմարդ,
 և 'ի հրեշտակաց փառաւորեցաւ որպէս զած:
 Ը ըջեցաւ յաշնարհի կատարին ամենայնի զամն
 երեսուն, մինչեւ 'ի կատարումն հասակի մարդկու-
 թեն. մկրտեցաւ 'ի ծառայէն որպէս զմարդ, և
 վկայեցաւ 'ի հօրէ և 'ի հոգւոյն որպէս զորդի բարձ-
 րելոյն: Որորձեցաւ 'ի սատանայէ որպէս զմարդ,
 և յաղթեաց փորձողին որպէս զած: Քաղցեաւ և
 ծարաւեցաւ և ննջեաց և արտասուեաց և վաստա-
 կեցաւ որպէս մոտեալ ընդ օրինօք մարմնոյ, և կա-
 տարեաց սքանչելիս և նշանս, և եցոյց զօրութիւնս
 ածայինս որոպէ զած կատարեալ: Եկն կամաւորա-
 բար 'ի չարչարանս և չարչարեցաւ անչարչարելին
 չարչարելի բնութքս 'ի վերայ խացին. մեռաւ ան-
 պարտականն մահու մահկանացու մարմնովս, վասն
 կենդանացուցանելոյ զմեռեալ մեղօք բնութիւնս.
 էջ 'ի գերեզման, և արար աւարումն կրկին դժոխոց:
 Վարդկային հոգւովն միացելովս ընդ ածութեն,
 հոգւոյնոր 'ի դժոխս՝ շնորհելով ազատութի, իսկ
 ածային մարմնոյն յարութքն տալով յարութեն,
 մահկանացու բնութեանս յապականութէ մահու.
 յարեաւ 'ի մեռելոց իշխանաբար յաւուր երրորդի,
 և երեւեցաւ աշակերտաց իւրոց երկոտասանիցն և
 եօթանամնիցն և հինգհարիւրոցն և այլոց բազմաց,
 որք եղեն նորա վկայ և քարոզք ընդ տիեզերս. և
 յաւուրս քառասունս երեւեալ նոցա և խօսէր ընդ
 նոսաւ Եւ 'ի լրումն քառամնեկի աւուրցն վերա-
 ցաւ յերկինս, և նստաւ ընդ աջմէ հօր 'ի բարձունս
 մերով բնութքս, յորմէ անբաժանելի էր ածութքն

և գալոց է նովին մարմնովն՝ փառօք ածութե՛ իւրոյ
և հօր, յարուցանել զմեռեալս և դատել զաշխարհս
արդարութե՛ բարեգործացն զբարեացն տալով ժա-
ռանգութիւն, և զանվախճան թագաւորութիւնն.
իսկ գործողացն չարեաց՝ զամօթն յաւիտենից և ըն-
տանջանս ըստ իւրաքանչիւր գործոցն :

Այս արդ՝ այս դաւանութիւն ճշմարիտ հաւատոյ
հիմն է ածային տաձարին՝ որ 'ի մեզ: Իսկ գործք
բարեացն շինուածն է 'ի վերայ այսր հիման, որպէս
տէրն զգաւանութիւնն Պիետրոսի եղ որպէս զվեմ՝
հիմն իմանալի եկեղեցւոյ իւրում. և զինքն որպէս
զշինող, և զընտրելոց իւրոց բարեգործութիւնս, որ
յամ ազգաց, իբրև զնիւթ շինուածոց՝ փոխանակ
քարի և փայտի և այլոց պիտոյից :

Դարձեալ՝ է նա որպէս զշմարտարապետ, և մեք
իբրև զմշակս հրամանակատարս. ըստ որում ասաց
աշակերտացն, եթէ « Վանց իմոչ ինչ կարէք առ-
նել »: Դրէ և Պաւղոս, եթէ ևս զիմաստութիւնն
այ հիմն եղի՝ որէ Քո, և որ 'ի նա հաւատն ճշմար-
տութե՛. բայց այլ է որ շինէ, այս ինքն, որ էն, և
որ գալոց էն յաշխարհ: Այս շինելն՝ գործովք, զոր
կամի իւրաքանչիւր ոք, եթէ բարի և եթէ չար:
Եթէ ոք շինէ, ասէ, 'ի վերայ հիմանս այսորիկ ոսկի՝
որ է արդարութիւն և ճշմարտութիւն. արծաթ՝ որ է մաք-
րութիւն մտաց և սրբութիւն սրտի. ականս պատուականս՝
որ են մասունք բազմասլատիկ առաքիութե՛ց, սէր,
խոնարհութիւն, ողորմութիւն, անոխակալութիւն, պահք
աղօթք, ժուժկալութիւն: Վայրէիկ և որ նման սոցա՝
են պատուական ակունքն շինեալք յարդարոց ան-
ձանց, 'ի վերայ հիման հաւատոյն: Իսկ մեզսակիրացն
անձինք՝ ոչ 'ի պատուական և 'ի հաստատուն նիւ-
թոցս յայսցանէ, ասէ, շինեն զշինուածս իւրեանց
'ի վերայ հաւատոյն հիման, այլ յանարդաց և 'ի
դիւրավատնելեաց, այս ինքն՝ փայտ խոտ, եղէզն,
Փայտն՝ զթանձրագունից մեզաց ունելով զտեսակ,
զսպանութե՛, զպունկութե՛, զզողութե՛, զյափշտակութե՛,
և որ նման սոցա. խոտն՝ զխորհրդագոցն չարութիւն՝ ժո-

(1) Ութ օր. Հիմէն գործ առանձնութեան:

զովեալս 'ի սրտի. եղէզն՝ զբանիցն գարշութիս նշանակէ , զորս բղխեն մարդիկ 'ի բերանոց՝ զլեզումն գործարան տուեալ սատանայի , թշնամանելով և անարգելով զընկերս զանազան և պէսպէս հայհոյութիք որ ըստ գեղջկացն բարբառոյ՝ իշոցք անուանի , և ըստ դրոց սովորութեն՝ անէծք և թշնամանք և որ այսպիսի են անուանք: Օ որոց և դաւիթ ասէ , թէ՝ անիծիւք և գառնութիք լի են բերանք նոյա : 'ի ա և ստութիւնն և չարախօսութիւնն և մատնութիւնն և այլք , որ յայս յարին բանք անիրաւուեն , յեղեգան են օրինակի :

Եշ զայսոցիկ զերկուց հակառակ շինուածոց նիւթը , որ 'ի պատուականաց և յանարդաց՝ հուրն , ասէ , ընտրեսցէ . քանզի հրովարտնելոց է դատաւորն : Եթէ գործն , զոր շինեաց 'ի վերայ հաւատոյն հիման , ոսկի է և արծաթ և ականս պատուականս , որք ոչ ապականին՝ այլև սրբին 'ի հրոյն , գործողն կեցցէ և վարձս առցէ : Խոկ եթէ խոտ է և եղէզն և փայտ , որ դիւրաւ ապականին 'ի հրոյ անտի , որ գործեացն զայն՝ տուժեսցի : Ա՛նզի , զոր օրինակ ապարանք հիմամբն միայն չեն բաւական լինել 'ի բնակութի մարդկան , այլ պէտս ունին որմոց և ձեղուանց և այլոց շինուածոցն , նոյնպէս և հաւատովն միայն՝ առանց գործոց ոչ ոք կարէ զանձն իւր շինել տաճար այ : Եշ որպէս գլուխ՝ առանց անձին յարմարութեն ոչ կարէ կրել կենդանութի , և ոչ անձն առանց գլխոյ , նոյնպէս և հաւատ առանց գործոց , և գործք առանց հաւատոյ մեռեալ են երկոքին ըստ առաքելոյ :

Ա ասն որոյ՝ աղաւեմ զամենեսեան , զի ընդ հաւատոցդ ձշմարտութեն , զոր ընկալայք 'ի ծննդենէ աւազանին , և ունիք հաստատութիք , յարմարիցէք և զգործս արդարութեն . զի մի միովազօք միայն լուսաւորիցէք զանձինս , այլ և երկոքումբք պայծառանայցէք : Եշ մի վստահանայք 'ի սնոտի յոյս անմտաց , որք ասեն , թէ բաւական է հաւատոյն միայն ձըշմարտութիք քրիստոնէին՝ փրկել 'ի տանջանաց , և արժանաւորել արքայութեն : Օ ի զոր օրինակ մեռեալ անդամչէ ինչ պիտանացու 'ի գործ մարմնոյն ,

նոյնպէս և մեռեալ հաւատ ոչ տայ զօրուի հոգւոյն, այլ մանաւանդ առաւելագոյն տանջանաց պարտական կացուցանէ զունողն իւր : Որպէս այն որ զմի տաղանդն պահեաց, և ոչ շահեցաւ նման ընկերացն : Օ ի տաղանդն՝ հաւատն է, և շահ տաղանդայն՝ գործքն : Եւ թէ վասն էր ասի հաւատ մեռեալ առանց գործոց, յայտնի արասցուք որոց ոչ գիտեն :

Հաւատոյն անուն մի է, բայց կը կին ունի զօրուի : Առաջին՝ դաւանութեն հաւատն, որ է խոստովանուի ի սք երրորդութեն՝ զոր ընկալաւ իւրաքանչիւր ոք յաւազանէն : Երկրորդ հաւատ այն է, որ զբանս՝ զոր հոգին սք խօսեցեալ է բերանով մարդարէիցն և առաքելոցն և եկեղեցւոյ վարդապետօք՝ զոր 'ի գիրս սքս գրեցին, չամարի առասպելս և սուտ. այլ հաւատայ՝ թէ չչմարիտ են և ուղիղ այնպէս՝ որպէս թէ աչօք իւրութ տեսանէ զամ զեղեալսն, և զլինելոցն, և զոր ենն : Եղեալն այն է՝ զոր պատմեն, թէ ամ երեելի և աներեւոյթ բնութի ոչ էին, և յայ հրամանէն ստեղծեալ եղեն . և որ ինչ յետ լինելուե արարածոց սքանչելիք և զօրութիք եղեալք յայ պատմին 'ի գիրս 'ի հնումն և 'ի նորումս : Եւ լինելոցն այն է՝ զոր ասեն, բարեգործացն բարի հատուցումն լինել յայ, և չարագործացն տանջանք և հուր յաւիտենական : Եւ որ ենն այն է, զոր քարոզեն յամբանս իւրեանց, թէ ած մերձաւոր է առ ամենեսեան և ոչ հեռաւոր. և զոր խորհին մարդիկ 'ի միտս իւրեանց բարի կամչար 'ի մանայ զամ, և զոր խօսին բանս լեզուաւ՝ լսէ անսխալ և զոր գործեն մարմնով 'ի ծածուկ՝ տեսանէ յայտնապէս, զի չիք արարած աներեւոյթ առ ՚ի նմանէ :

Արդ՝ որ այսոցիկ 'ի բոլոր սրտէ հաւատայ, նա է որ ունի հաւատ կենդանի : Որ և ոչ երբէք յանդընի կամ խորհել չարութի 'ի սրտի, կամ խօսել անիրաւուի բերանով կամ գործել զմեղս անձամբ իւրովւ : Օ ի թէ 'ի միոյ ուրուք մերձ լինելոյ, արգելուն մարդիկ յանարժանս գործելոյ . յորժամ հաւատայ ոք զած լինել տեսօղ, զիարդ ժալրի կամ խօսել ինչ կամ գործել կամակար՝ մտօք զարութի : Կակ որ

(1) Երկու օր. կամակար մոտ :

բանիւ միայն ունի զառ ՚ի յած խոստովանութին, այլ ոչ գործով, այնպիսոյն հաւատն մեռեալ է :

Եւ արդ՝ վասն զի ընդ բազում տնտեսական գործոցն անուանս, որ հաւատացաւ մեզ ՚ի տեառնե ՚ի ձեռն սրբոյ աթոռոյս սպասաւորուն, է և բժշկական անուն և գործ, վասն որոյ որպէս բժիշկ Ճանաչելով զիւանդացելոյն ախտարար ցաւոյն զպատճառս՝ հրամայէ ՚ի վնասակարացն ՚ի բաց կալ, և զառողջարաբն ընդունել դեղ և կերակուր, այսպէս և մեք զընդհանրական եկեղեցւոյ Քոփի հոգեոր բժշկութե ունելով զփոյթ, տեսանեմք մտաց աչօք, թէ և ոչ զամենեսեան՝ այլ զյոլովագոյն մասն աշխարհի, զի յաղագս մեռելոտի գործոց մեռեալ ունին և զշաւատն . և կամիմք ապէս զբժիշկս ցուցանել ամանձին զմահաբեր ախտից իւրոց զպատճառսն, և զկենդանարար հոգւոց զդեղմն : Օ որ թէ առեալը մաղիցէք առանց դժկամակ լինելոյ, և ՚ի բաց մաքրիցէք յոգւոց ձերոց զդաւոնութի մաղձիցն ապականութե խոստովանութիք և ապաշխարութիք, արժանի լինիք ողորմութեն այ, և առ ՚ի նմանէ խոստացելոց բարութեցն : Խակ որոց ոչ թուին ախորժելի ասացեալքս ՚ի մէնջ, կամ յաղագս ծուլուն և մեզասիրութե, կամ վասն արհամարհէլոյ զմեօք, առ այնպիսին զմարդարէականն ասասցուք, թէ “ Որ անօրինելոյն է անօրինեսցի և որ արդարանալոյն է արդարացի ” : Ո՞ք զոր հրամայեալն է մեզ արացուք, աղաղակելով որպէս դէտ ՚ի բարձր դիտանոցէ զպատուիրանս այ ՚ի լսելիս ձեր : Ծայցուհետե առնելն և ոչ առնելն ՚ի կամս ազատուն իւրաքանչիւր անձին է :

Ծայց միոքեարձիցէ զմէնջթէ իրբեառողջս զմեզ համարելով յախտից մեղաց, ձեզ միայն զբժշկականս զայս մատուցանեմք դեղ որպէս հիւանդացելոց. այլ ծանիցէ ամմոք, զի մեք առաւելքան զամենեսեանս ունիմք պէտս հոգւոց բժշկուն: Ծայց որպէս յիմար հիւանդի է զիւրն առողջութե դեղ՝ զոր մատուցանէ նմա ախտացեալ ոմն բժիշկ՝ ՚ի բաց մերժել, տեսանելով զցաւս մարմնոյ նորա . նոյնպէս իմաստնոց է՝ ոչ զբնութե բժշկին ունել փոյթ, թէ առողջ է և

կամ հիւանդոտ, այլ զդեղին քննել զօգտակարութ, եթէ առողջարար իցէ թէ վնասակար: Ի ըդ և դուք մի վասն մեր անարժանութե և 'ի հոգեորսն պակասուե զօգտակար դեղս հոգւոյ՝ զոր մատուցանեմք ձեզ՝ արշամարհիցէք, և ոչ ընդունիցիք յանձինս: Օ որս աղաւեմք՝ ընկալարուք սիրով և յօժարութ. ոչ վասն մեր ինչ փառաց և պատուոյ, զոր ոչ պահան ջեմք յումեթէ, թէ և էաք արժանաւոր + այլ վասն սիրոյն Վահի, որ կոչեաց զմեզ յիւր արքայութին և 'ի փառս: Օ ի թէպէտ և մեք անարժան եմք, այլ բանս՝ վասն զի անձային է՝ արժանաւոր է ընդունելութե: Եւ ընդունելութին ոչ այլ ինչ եղիցի, այլ կատարումն գործոց:

Վ ասն որոյ աղօթեսցուք 'ի վերաց միմեանց, մեք յաղագս ձեր, որպէս զլուխ վասն անձին, մտադիւրութեամք ընդունել զսերմն անձային բանիս 'ի սիրոտ և պտղաբերել Ի՞Շ՝ մի յերից պտղաբերութեց բարի և պարարտ երկրին: Եւ դուք վասն մեր, ըստ որում անձն վասն գլխոյ, առողջանալ 'ի հոգեոր հիւանդութեց, և զօրանաւ 'ի տկարութէ զգայութեցս: Որպէս զի թէ գերան իցէ 'ի մեզ մերումն տեսարանի կուրացուցիչ, նախ 'ի բաց մաքրել զայն, զի և զայլոց շիզս տեսանել և սրբել կարող լինիցիմք: Ի՞անաւ և զիցեաւ ունկն՝ անձայնոյ ձայնին հնչման ձանապարհ առնելով. և զհոտոտելիս անմահութեան թափեցելոյ իւղոյ անուամբն անուշացուցանել. և զճաշակելիս կենացն հացի քաղցնուլ և ծարաւել, և յագիւանյագութք արդարուե և իմաստութե: և զեղուս որ 'ի փառս այ և 'ի շնուրի լսողաց բանից լինել սպասաւոր, աղ լինելով նեխելոց և լոյս խաւարելոց՝ ըստ հրամանին տեառն, նախ անձին և ապա այլոց: Որով և զերկոսին դնեմք առաջի լսողացդ զանազան կերպարանօք + պայծառացելոց ոգւով զուսափայլ բանից ձառագայթ, և մթացելոց կամ նեխելոց՝ զաղին օրինակ 'ի յանդիմանողական մորմօքումն, որով և սկսանիմք այժմ առորս արժան է, նախակարգել զբանս:

(1) Երեք օր. արժանակար:

ԱՌ ԿՐՈՆԱԿԻՈՒՄ ՈՐ ԴԻ ՎԱՆՈՐԵԱՅՄ :

Եւ արդ՝ առաջին ընդ գերաշխարհիկսդ վարուք և քաղաքավարութե՛ խօսեսցուք առ կրօնաւորադ, որք 'ի վանորեայս և 'ի մենաստանս ընակեք : Որ սիւնք էք աշխարհի և պարիսպ ընդդէմ թշնամւոյն աղօթիւք ձեր և բարի վարուք . հրեշտակք 'ի մարմնի, և աստեղք լուսաւորք յերկրի, յորոց 'ի բարի և 'ի լուսաւոր վարուց փառաւորի միշտ հայր ձեր՝ որյերկինս է : Որ թէպէտ և խրատեալեք յաճաշունց գրոց՝ միշտ 'ի լսելիս ձեր հնչելով, և չունիք ինչ պէտս կարեաց մերոյս դուզնաքեայ բանից, այլ որպէս ծառայք՝ որք զհասարակականն կերակուր հրաման առնուն 'ի տերանց բաշխել, ոչ միայն քաղցելոց՝ այլև յագեցելոցն չնորհեն, նոյն պէս և մեք՝ զի ընդհանուր ծառայակցաց մերոց հրամայեցաք 'ի տեառնէ տալ զբանին կերակուր, հասարակաբար պարտիմք մատակարարել փարթամաց գիտութե՛, և աղքատաց 'ի գիտութէ . զօրաւորաց առաքինութե՛, և տկարագունիցն յառաքինութէ :

Վասն որոյ՝ աղաչեմ զամենեսեան՝ մի նուազութե՛ իւղոյ ողօրմութե՛ և սրբութե՛ աղօտացուցանեք զլոյս հաւատոյ լապտերաց ձերոց, այլ անշիջանելի պահեցէք զՃառագայթս անձուեն մշտավառ առաքինութ յանձինս ձեր : **Վի** վասն սիրոյ նիւթականիս՝ 'ի հրոյ սիրոյն Վ.սի զոր արկյերկիր, և կամի զբորբոքելն վաղվաղակի, ցրտացուցանեք զոգիս : **Վի** տայք տեղի օտար հրոյ ցանկութե՛ 'ի սիրտս ձեր, և այնուխնկարկել այ զաղօթս և զխորհուրդ անձայնոյ պատարագին, որպէս որդիքն Ահարոնի՝ Արաքել Աքիութ . այլ նախ մաքրեսցի իւրաքանչիւր ոք խոստովանութեամբ յանմաքուր խորհրդոց և դործոց, և պատարագ կենդանի զինքն մատուցէ կենդանւոյն այ առաքինութե՛, և ապա 'ի մաքուրն մերձեսցի, և սրբութե՛ որբոցն սպասաւորեայէ . զի մի ըստ նմանութեան նոցա՝ տանջողական հրովար այրեսցի

ներքին մարդն, աստ խղջիւ մտացն, և անդ բոցովն անշիջանելեաւ:

|| Եթի ումեք 'ի ձէնջ յարձան աղի մածնուլ,
որպէս կինն Դ ովտայ յաղագսյետս դառնալոյ յաշ
խարհական իր՝ 'ի հետուիս ախտից կամ 'ի ցան-
կութիս հիւթանիւթից : ՞ անզի զորօրինակ նա
յետ պատուհասին ոչ եղե համեմիչ կերակրոց
իրեւ զաղ, քանզի քար եր, և ոչ 'ի շինուած ինչ
պիտանացու եդաւ որպէս քար, վասն զի աղ եր.
ըստ այսմնմանուե և ամը ոք՝ որ ելանէ յաշխարհէ,
որպէս Դ ովտ 'ի Աոդոմայ, և բարձրանայ 'ի կարգ
կրօնաւորութե՛ որ է հրեշտակական, որպէս նորա
ձանապարհորդեալք ընդ հրեշտակացն 'ի լերինն,
և դառնայ անդրէն 'ի սէր աշխարհիս և յախտս
թաւալի մեղաց, որպէս և կինն այն զի դառնայր
դիմօք 'ի Աոդոմ, ոչ այ է պիտանացու այնպիսին
իրեւ զկրօնաւոր, և ոչ աշխարհի օրինաց որպէս
զաշխարհական . այլ է անսարդ և անսպիտան, կոխան
եղեալ 'ի մարդկանէ որպէս զաղ անհամեալ : ՞ այց
ձեր, որ անփոխ էք յածայինսդ, ամենայն ինչ ըստ
խրատուն առաքելոյ բարեձեռութք և ըստ կարգի
եղիցի: Որ և դարձեալ ասէ . “ Իմաստուք գնաս-
ջիք առ արտաքինսն, գնոյ առեալ զժամանակս ” .
և թէ “ Օ վարս ձեր առաջի հեթանոսաց պարկեշտ
ունիցիք ” :

Եւ արդ՝ մի ոք 'ի ձէնջ զվատթարս խօսելովլե-
զուաւ, կամիրս ինչ անսպատշաճ գործելովլ անձամբ
առաջի արտաքնոյն՝ պատճառ լինիցի բանալոյ զան-
դուռն բերան նոցա 'ի հայհոյութիւն սուրբ հա-
ւատոյս և կարգիս, որովք կրկին դատաստանս տա-
լոց են այնպիսիքն առաջի այ . առաջին՝ ընդ մե-
զանացն, զոր խօսին կամ դորձեն. երկրորդ և մեծ՝
ընդ գայթակղութե լինելոյն պատճառ : || Եթի ոք
զընկերակից կրօնաւորաց թողլովլ զկենակցութի՛
առանձինն բնակիցէ, ոչ յաղագս ճգնողական վա-
րուց որպէս միայնակեացք՝ այլ վասն ադահութե՛
ախտի, զի զանձին իւրոյ աշխատութիւնն ոչ հասա-
րակաց եկեղեցւոյն՝ այլ իւր միայնոյ ամբարիցէ,
յորմէ վասպ բազում հոգւոց . և 'ի միաբանութիւն

օգտուիկ յոլովագոյնք, որպէս ածախօս վարդապետացն ցուցանեն բանք : Օ ի առ բազումն քան զերկեւղն այ առաւել զօրէ ընկերակցացն ամօթոյ երկեւղ, յետս դարձուցանելով զյօժարութիւն մտացն 'ի չար ցանկութեց մեղացն կատարմանէ : Եշ ևս՝ բազմապատիկք են շահիցն հոյլք 'ի միասին եղբարցն բնակութէ, զորս աւելորդ վարկանիմք գիտողացդ երկրորդել : Են ոմանք դարձեալ յաշխարհասէր և 'ի մեղկ կրօնաւորաց, զի ոչ միայն սրտիւք ըստ հնոյն Խորայելի դառնան յեզիպտական գործս խաւարինս, այլև անձամք իսկ ընդ աշխարհականս բնակեն 'ի գեւզս և 'ի քաղաքս, և 'ի բանից բերանոյ գարցութիւնս, և 'ի գործս վատթարուե, և յորովայնամոլութիւնս անպատկառս, և յարբեցութիւնս անառակս, և յամենայն անկարգուեց բերմունս առաւելուն քան զնոսա : Պարտ և արժան էր, զի թէ պատահէր կրօնաւորաց ըստ հարկաւորինչ պատճառի բնակել յաշխարհի, իբրև զլուսատու լինել ածային և ուղիղ վարուքն 'ի մէջնոցա, 'ի փառաց պատճառս անոււանն այ և ոչ 'ի հայհութեան : Օ այնպիսին մանաւանդ յորդորեմք 'ի նոյն, քան թէ արգելումք . զի օրինակաւ բարեացն բազումք լինին բարիք, որպէս և 'ի նախանձուէ չարացն վարուց՝ չարք յոլովագոյնք :

16984
 Արդ՝ հրամանաւն այ և մեր, այս եղիցի կանոնական օրէնք, 'ի վերայ այնպիսեացն . փոխել այսուհետեւ զբնակութիս իւրեանց 'ի վանս, և զվարս իւրեանց ըստ ձեռյն և ըստ կարգին յապաշխարութիւն 'ի սպարկեցութիւն մինչև 'ի վախճան : Խակ եթէ ոք 'ի նոյանէ ոչ լուիցէ ածային օրինացս՝ զոր գրեցաք, և ոչ ելցէ յաշխարհէ՝ այլ կացցէ յամառեալ մինչև 'ի մահ իւր 'ի նոյն, անպարտ եմք մեք 'ի խըզճոյ կորստեան նորա . ինքն եղիցի արեան իւրոյ պարտապան առաջի այ :

Վ. Քահանայից պատուէր տամք, զի թէ մինչ յաշխարհի իցէ այնպիսին, և վախճան մարմնոյ ընդհոգւցն մեռելութեց հասանէ նմա, ոչ հաղորդուե և ոչ օրինաւոր թաղման արժանի առնել զնա, մանաւանդ զայնոսիկ՝ որ միշտ յանդղութեց լինիցին

մինչեւ 'ի մահ։ Խակ եթէ ոք յայնպիսեացն մերձ
եղեալ 'ի մահ զդժասցի, և հայցէ արտասուօք զհա-
ղորդութիւն, և զթաղումն, և խոստովանութեն նո-
րա զիտողք վկայեսցեն, եթէ հաստատեալ էր 'ի
միտս ելանելյաշարհէ եթէ օրհաս մահուն ոչ էր
կանինեալ, այնպիսոյն՝ վասն ողորմութեն այ՝ տացի
թոշակն վերջին, և օրինաւոր թաղումն, ոչ որպէս
քահանայի կամ կրօնաւորի, այլ իբրև զմիոյ յաշ-
խարհականաց։ Ի՞այց՝ մի ոք անընտրողաբար զամե-
նայն որ յաշխարհի մեռանիցին կրօնաւորք՝ հաւա-
սար համարեսցի, զի են բազումք՝ որ հիւրութեամբ
եկեալք յաշխարհ՝ պատահէ նոց վախճան։ և այլք՝
որ ծեր և տկար գոլովմարմնով, և վասն ոչ գտանելոյ
խնամն՝ ի վանորեայս՝ բնակեն յաշխարհի ուղիղ և ոչ
բամբասելի վարուք։ այսոքիկ և սոյնպիսիքս պա-
տուով թաղեսցին, յորժամ հասանէ վախճան,
որպէս զծառայս այ։

Դարձեալզգուշացուցանեմք զշմարտագունիցդ-
երամն յաղագս նոր եղելոյ սովորուեդ՝ ի վանորեայս
'ի մերումժամանակիս, այգեգործ իւրաքանչիւր ոք
լինելով՝ ի կրօնաւորաց որպէս 'ի գեւզս, որ անվայե-
լուչ է կրօնաւորական կարգի և արտաքոյ առաջին
սրբոց հարցն պատուիրանաց։ Օ ի նոքա և զորս
յաշխարհի ունին ժառանգութիս և ստացուածու-
թողին, և թողուլ օրինադրեցին, և զիսաչ առաքի-
նութեն բարձին, և զինի ՚ՎՌ՚ զնացին որպէս և
ինքն հրամայէր մեծատանն, թէ “ Երթ վաճառեա-
զոր ունիս, և տուր աղքատաց։ և գու ան զիսաչքո-
և եկ զինի իմ, և ունիցիս գանձս բազում յերկինս,,
Եւ դարձեալ՝ թէ “ Որ կամիցի զինի իմ գալ, և ոչ
ուրասցի զամենայն՝ զոր ունիցի յաշխարհի, և առցէ
զիսաչ իւր հանապազ, ոչ կարէ իմ աշակերտ լինել,,
Եւ այլ ևս որ այսպիսիք են աւետարամական պա-
տուիրանք աշակերտելոց անձանց, որ էք դուք։ Յո-
րոց բազումք են 'ի ժամանակիս կրօնաւորաց՝ որ
յաշխարհի առանց ժառանգութեն էին, և հարկա-
տուք իշխանաց, և աղքատք 'ի գոյից, և կարօտք
հարկաւորացն, և յորժամ զծե կրօնաւորութեն-
կալան, տեարք եղեն 'ի վանորեայս բազում ժառան-

գուեն, և փարթամացան ստացուածովք. և ոչ միայն հարկաւոր պիտոյիցն եղեն անկարօս, այլև աւելորդաքն լցան. և յաշխարհի հոգովք և երկօք տաժան եալք, և աստ անհոգութք և հեշտութք ստուարացեալք : Եշ զիա՞րդ կարիցէ այնպիսին յաշակերտուելինելկարգի, և ասելորպէս Պետրոս. “Տէր, ահա մեք թողաք զամենայն, և եկաք զինի քո, արդզինչ լինիցի մեղ :” Չայտ է զի ոչ եթող ինչ վասն Վիճի. այլ մանաւանդ զոր ոչ ուներ յաշխարհի, ստացաւ հակառակ Վիճի :

Եշ արդ՝ քանզի ածային պատուիրանք ըստ զօրութենդունողացն եղան յիւրաքանչիւր ժամանակի, տկարագունիցն թեթևագոյնք՝ զի տանելկարիցեն, և զօրաւորացն ծանունք՝ զի յօժարութքառնան : Իստ այսմօրինակի և մեք՝ վասն զի տեսանեմք զբազումն ցամաքեալս յածային սիրոյն, և ոչ մի քան զմի նախանձու բարեաց շարժեալք՝ ’ի բարձրագոյն առաքինութիւն ձեռնարկելով, որպէս առաջին հարքն. այլ մերոյս նախանձ ’ի հակառակն վերաբերինոցա, այսինքն՝ թէ ով քան զընկերս յընդարձակագոյն տեղւոյ և ’ի պարարտ երկրի տընկիցէ այգի, և թէ զիա՞րդ մնուցանիցէ իմաստութք զնորագոյն տունկմն : Եշ փոխանակ զարուեստս առաքինութենուսանելոյ ՚ի միմեանց, զայգեգործուեն հնարս վարժին անհմուտքն ՚ի հմտագունիցն : Վաժան է, ասեն, այսքան և այսպիսի օրինակաւ վաստակել եզամբք, և բրել ձեռամք փայտատօք և բահիք, և զհակառակ տնկոյն զարմատս, և զբոյսս արմատաքի խլել : Օ որ պարտ եր նախ զբարեաց հակառակ բոյսն, որ ՚ի վարս մեր և ’ի բարս, ՚ի բաց հանել ’ի մէնջ, և ապա արտաքնոցն ունել փոյթ : Վայլ յատանելոյն օրինակ զանազանեալ է իւրաքանչիւր տնկոյն սեռից՝ առ իմաստունսն յայնոսիկ. զի զոմանս հուպ յարմատսն, և զայլսն ՚ի բացեայ հատանեն . յոմանս սակաւ զուռսն, և ’ի կէսս յուվագոյնս թողուն. և այս ամենայն՝ որպէս զի յածախագոյնս պտղաբերեսցեն, և յոլովս զգինոյն չափոյ ածեցուսցեն զթիւս : Ոյոզից ասել զպատուաստելոյն հնարս, մի քան զմի առաւելեալ ՚ի համ-

Ճար. և զգործելոյն եռանդն ջերմուե՛, զի ոչ զտիւն ոմանք բաւական համարին ժամանակ գործելոյ, այլև զգիշերն ևս խառնեն ընդ տունջեանն. զոր արժան էր յայգի պատուիրանացն այ զայնքան ունել փոյթ և յօժարութի գործոյ, յորում հրաւիրեցաք'ի քարոզացն, և մտաք'ի զորձ՝ հաւատովք և կրօնիւք, ընդ դաշնեկանին վարձու, որ է պատկերն թագաւորական տուեալ մեզ յայ, յերեկոյանաւ կենցաղոյս ժամանակի, նման լինելով նմա՝ ըստ խոստայելոյն։

Դարձեալ՝ յորժամ պատահեն միմեանց տեարք այգեաց կրօնաւորք յայլ և յայլ տեղեաց, յետ ողջունին՝ ոչ զողջութէ հոգեւոց հարցանեն և զհեւանդուեց ախտից, և ոչ զպատերազմաց դիւաց, և զխաղազութեց, և ոչ թէ զիարդ ստասցուք չնորհս արտասուաց'ի ժամազօթելոյն, այլ թէ յայսմ ամի, ով եղայր, զիարդ է պտղաբերուի քոյին տնկոցն, առաւել է թէ նոււազ։ Եւ նա թախծեալ սրտիւ պատասխանէ. զինչ ասացից, ասէ, զաղէտմն, որ պատահեցան։ զի ոմանք 'ի Ճճեաց վնասեցան, և յոմանց ծաղիկքն թօթափեցան, և այլքն արեւակեղ եղեալ ողկուզացն չորացան, և կեսքն նեխութ ապականեցան. և թէ զինչ արարից՝ անզիտանամ զել վտանգիս եղելոյ։ Եւ ընկերն թելադիր եղեալ նմին՝ խրատ տայ, զոմանս պատուաստել 'ի տնկոցն որք պտղակորյաք լինին, և զայլն զանազան փորձեալ հնարիւք բժշկել 'ի պատահելոց կրիցն։

Եւ քանզի 'ի նիւթականացս ցանկութիւն զբաղումն 'ի կրօնաւորաց ժամանակիս տեսանեմք ըմբռոնեալս, որք զթեթեանալն յայսպիսի ծանրութեն հոգոց դժուարինս վարկանին, և գնալ զհետ խրատուն Վ՛նի, որ հրամայէ ոչ հոգովք պաշարելզանձըն յաղագս հարկաւորացն կերակրոց և զգեստուց, թողթէ վասն աւելորդացն, վասն այնորիկ և մեք ոչ գնեմք օրէնս այսպիսի կրօնաւորաց, ամենելին 'ի բաց կալ 'ի տնկագործութէ, և յամենայն գոյից ստանալոյ, որպէս վայելէ աշակերտաց Վ՛նի, զի մի 'ի լսենց դարձուսցեն զդէման յարեւմնւտս, և խոժոռանալընդ լուր խրատական մեր բանի 'ի բաց գնասցէն, ոնց և մեծատունն այն. այլ զերկրորդն գտեալ

զոր յայսոսիկ հաճոյս իմանամք կամացն այ, և զայն դիցուք ձեղ օրէնս : Եւ դուք թէ և ընդ առաջնո՞ն դժուարանայք, զամենայնն տալ այ, և մերկանալ աշխարհի կամաւնախ քան զմերկ գնելն 'ի գերեզմանի ակամայ, զերկորդ օրինադրութիւնն ընկալարուք ախորժելի կամօք : Օ որ թէ յօժարական սրտիւ առնիցէք, հաւատամք ողբրմութեն այ, զի որպէս զառաջնո՞ն ընկալցի, և 'ի ձեռն երկրորդիս կատարման՝ յառաջնո՞ն առաջնորդեսցէ ձեղ վերանալ յօժարուք, և ոչ բռնուք . և այս է զոր ասելոց եմք :

Յամէ զոր ստանայք, եթէ տունկս և եթէ այլինչ, զախտ աղահութեն 'ի բաց մերժեցէք 'ի նոցանէ, որպէս զբոյս վնասակար 'ի բարի սերմանց, և զաշխատութիւն ձեր՝ որ 'ի նոսա՝ մի վասն յոլովելոյ յինչսն առնիցէք, այլ վասն կամացն այ, և յերկինս գանձելոյ զերկրաւորս, և 'ի մարմնոցդ աշխատութէ՝ հոգւոցդ ամբարել գանձ : Եւ զոր ասեմքս այսպէս եղիցի, որով լինիցին ստացուածք ձեր 'ի հաճոյս այ:

'Վ պտղոցն ժամանակի՝ զալտղաբերացն ձերոց մասն տուք այ՝ 'ի ձեռս աղքատաց և կարօտելոց, և մի դատարկ և ունայն զինդրօզմն պտղոցն դարձուցանիցէք, զի մի և զձեղ անձ յիւր տնկեալդրախտէն ունայն դարձուսցէ : Եւ եթէ տայցէք, մի խոժոռ դիմօք և զայրացեալ սրտիւ և դժկամակ բանիւք փրը և զզո՞չն կայենի՝ որ ոչ հաճոյ այ, այլ և պատճառ զայրացման . այլ զուարթառատ կամօք, որպէս սիրէ և խնդրէ անձ : Եւ 'ի գինւոյն ժամանակի՝ 'ի գինւոյ անտի մասնաւորեցէք զբաժինն այ : Եւ յորժամ առաւելուցու քան զպէտս ձեր, և հարկ լինի վահառուել, 'ի գնոց անտի արծաթոյ՝ առաւել պտղաբերեցէք Կ'սի, տալով տառապելոց և գերելոց . և մի ամբարիցէք յերկրի, և յուսայք յետ մահու՝ այլոց ձեռամք զձերն տալ այ վասն ձեր : Օ ի փոքր է յոյն այն, չասեմք թէ ամենեին ընդունայն, և երկրորդ բարի, և ոչ առաջնո՞ն, 'ի յայլոց ձեռն յուսալ առատագոյն լինել յինչս իւր, և զիւրն կարկամեցուցանել, մինչ իշխան է գոյիցն և տէր : Եւ երկրայելի է այր այնպիսի գտանել, որ երկեղիւն այ

մատակարարիցէ զինչըն ըստ հրամանի գնացելոյն.
զի բազմաց աներկեւղից պատճառ կորսուեան լինի
հոգւոյ ստացուածք մեռելոյն՝ յորժամ ժառանգէ,
անառակ և անկարգ գնացիւք վատնելով զամե-
նայնն , որ վնասու պատճառ փոխանակ փրկութե-
լինիցին ինչքն այն ստացողին իւրում:

Դարձեալ զի թէ և երկիւղած ոք հանդիպեսցի ,
և զամ գոյս մեռելոյն՝ ըստ կամացն այ տնօրինսէ
վան հոգւոյ նորա թողութե մեղաց , նուազ է 'ի
բարեաց և ոչ կատարեալ բարի : Եւ զի այս Ճշմա-
րիտ է՝ 'ի բանից իմաստնոյն ուսանիմք . այն զի ասէ ,
թէ « Որ ողորմի աղքատին , փոխ տայ այ » : Եւ
գիտէ զայս ամոք , զի զվշար փոխոյն ոչ օտարի ու-
րուք , այլ փոխատուին տայ փոխառուն : Ա ան որոյ
աղաւեմ , մի յայլ ոք վստահանայք . այլ գուք տուք
զփոխն ձեռամք ձերով 'ի ձեռս այ : Օ ի թէ զձեզ
Ճանաչիցէ փոխատուս՝ ինդրօղ փոխոյն ած , յաւուր
պայմանի հատուցման իւրց զոր եղ , 'ի ձեռս ձեր
տացէ զվշար փոխոյն : Խակ եթէ ձերոց գոյիցն այլ
ոք լինիցի տուօղ փոխոյ , նոյն և ընկալցի զփոխա-
րէնսն յայ . և ձեզ մասն ինչ թերևս հատուցի ո-
ղորմութե , միջնորդութե տուողին զձերն : Այլ
տէրունական հրամանն , զոր 'ի հրապարակախօս ա-
տենի անդ ասելոց է առ աջակողմանմ , զնոյն նշա-
նակէ : Քանզի ոչ ասէ՝ թէ քաղցեայ , և այլք վամն
ձեր ետուն ինձ ուտել կամ մերկ էի , և այլք վամն
ձեր զգեցուցին զիս . այլ թէ գուք ետուք ինձ ուտել ,
և գուք զգեցուցէք զիս : Եւ արդ՝ թէպէտ և առա-
ջին կամք Քանի այն է , զի ոչ բնաւ ստանայցէ կրօ-
նաւորն ստացուածս՝ ոտղ վերագոյն ասացաք , զի մի
յաղագս նիւթականիս հոգալոյ՝ յածային առաքի-
նութեց աննիւթական հոգոցն խափանեսցի . և բա-
զում վնասուց և ծանրութեց զանձն 'ի ներքոյ ար-
կանիցէ . այլ ունել 'ի միաբանական կենացն կերա-
կուր և հանգերձ ըստ հրամանին առաքելոյ , և
այնու շատանալ : Դայց վամն զի այս ոչ ամենեցուն
է , այլ որք վամն սիրոյն այ ատեցին զաշխարհ , և
ելին յաշխարհէ , և ոչ յաղագս այլ ինչ պատճառի ,
վամն որոյ և մեք այնոցիկ կրօնաւորաց՝ որք երկա-

24

կենցաղ կենդանեաց նմանեալք են, զի են ցամաքայինք՝ վասն ձեզն, և են ծովայինք՝ յաղագս 'ի ծովու աշխարհիս զբաղանաց, զաշխարհայնոցն դեցուք օրէնս, և ոչ զգերաշխարհիցն։ Օ ի մեծ է աղքատանալն վասն ՎՇի, քան ստանալինչ, և տալաղքատաց յաղագս հրամանին ՎՇի, որքան մեծ է ՎՇքան զայն՝ որ ողորմի աղքատին 'ի դէմս ՎՇի։ ՎՇանդի կամաւոր աղքատն որ յաղագս այ՝ նմանօղ ՎՇի է, որ վասն մեր աղքատացաւ, ասացաւ 'ի դիրս. իսկ ողորմածն աղքատին՝ բարեկամ ՎՇի կոչի, այլ ոչ նոյն ինքն ՎՇ։

Եւ արդ զի բոլորովլն լինել ՎՇ՝ մերկանալովն կամաւորութք զամենայն ինչ վասն ՎՇի՝ դժուարին է ամենեցուն, ոչ ասեմթէ անհնարին. զի որք կամին՝ կարօղ են, զոր յայտ առնե բազմացն կատարումն յամենայն ժամանակի. դուք այսուհետեւ որ ստացեալ էք ինչ, զբարեկամացն ՎՇի ընկալարուք զաշտիճան, ողորմելովն աղքատաց, որպէս և ինքն իսկ հրամայեաց տէրն, թէ տուք ողորմութիւն, և ամենայն ինչ ձեր սուրբ է. այս ինքն՝ թէ յորժամ'ի ձերոց ստացեալ գոյիցն տայցէք մասն ողորմութէ աղքատաց՝ յօժարական և առատամիտ կամօք, մնացեալն ամենայն սրբին և անվնաս լինին ձեզ։ Եւ ոչ դատիք իբրև զագահս յաղագս ստանալոյն, այլ ողորմութէ արժանաւորիք յայ՝ որպէս զողորմածս, ըստ ասելոյն տեառն մերոյ, “ Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն ”։

Եակ զայս ևս ասեմք, թէ՝ օրէնք որ եղան կրօնաւորաց՝ անինչ և անստացուածն լինել, թէպէտ և յաղագս անզբաղ լինելոյ է յաշխարհական իրաց, և միայն հոգեորացն պարապել, այլ կատարեալ պատճառն՝ յաղագս կարօտ լինելոյ կրօնաւորին, ոչ միայն յաւելորդացն կերակրոց և ըմպելեաց և զգեստուց, այլև 'ի հարկաւորացն ևս։ Որպէս զի կարօղ լինիցի պատերազմի ցանկուեն, որ զինուորին ընդ դէմ մաքուր կուսութէն, յաղթօղ լինել։ Օ ի որք անխտիք տան զանձինս որկորսութէ և արբեցութէ, թէ և դեք պոռնկութեան գրգռիչս ոչ ունէին ախտից, բաւական է բոցոյ ցանկութէն՝

զառաւելութիւն նիւթոյ որովայնամոլուքն տալն ,
ձգել զսոսա 'ի կատարումն մեղաց : Ա ասն որոյ ա-
ղաշեմ , զի թէպէտ և յոլովս ունիցիք զնիւթ կե-
րակրոյ և ըմպելոյ առ ձեռն և առանին , այլ յո-
դիս ձեր ինայելով մի ագահութեք և որկորստու-
թեամբ յայնոսիկ վարիցիք , այլ պարկեշտութեք և
օրինաւոր ըստ կարգի կրօնաւորաց : Եւ զոր 'ի
ձէնջ պակասեցուցանէք վասն պատուիրանին այ ,
'ի սէր կարօտեալ և չքաւոր եղբարց , և ծերագու-
նից և տկարաց զայնոսիկ 'ի կիր արկանիցէք . յորոց
կրկին ամբարէք 'ի յոդիս ձեր զբարին . զպարկեշ-
տութիւնն անձանց ձերոց , և զսիրով ողորմութին
կարօտելոց :

Ո՞ի ոք գտցի 'ի միջի ձերում , որ զձել կրօնաւո-
րութեք զգեցեալ է , և յառաւելութիւն զինւոյ
տուեալ զանձն իւր՝ զբամբասանս արբեցողաց ըն-
կալցի 'ի կարգն սուրբ . զի միոյն անկարգութեք ամե-
նայն կարգակիցք նոր անգոսնեսցին յաշխարհակա-
նաց և յայլազգեաց : Եւ թէ և այլով ամիւ հնար
էր անբամբասելի լինել այնպիսոյն , արբեցութեն
արտաքս ելցէ յարքայութէն՝ ըստ բանին առաքելոց .
քանզի ասէ՝ « Ո՞ի խաթիք , ոչ սպանողք , ոչ շնա-
ցողք , ոչ արուագէտք , ոչ արբեցողք » և զայն որ
ըստ կարգի թուէ « ոչ ժառանգեսցեն , ասէ , զար-
քայութին Քնի , և այ » : Օ ի որք օրինակ լինել
բարեաց պարտական են ամենայն տեսողաց , և նոքա
զայն ինչ գործեն՝ զոր արգելուն գիրք որք 'ի յաշ-
խարհականաց , զինչ յոյս աշխարհականին կայցէ ,
և կամ ովլ համարձակեսցի առ նոսա յաղագս վատ-
թար ինչ գործոց՝ յանդիմանութեն ինչ խօսել բան :
Որք և ընդդիմաբանեն զկարգաւորաց ոմանց զա-
նազան անկարգութիս : Ոչ զամենեցուն ասեմք , զի
բազումք 'ի ձէնջ և ոչ հացիւ և ջրով յագին վասն
սիրոյն այ , թող թէ աւելորդ կերակրովք և գի-
նեաւ : Ի յլ յաղագս անխրատիցն և ծուլից , զորս և
գուք՝ որ կատարեալքդ էք , խրատեցէք զնոսա որ
ստահակսն գնայցեն , զի ուղղեսցին : Իսկ որք յա-
մառեալք՝ 'ի նոյն բերին հանապազ 'ի լոյծ և 'ի մեղկ
կեանս , յետ բազում անգամ խրատելոյն և ոչ ան-

սալոյն, 'ի բաց հատեք զանթժկելի անդամնն 'ի մարմնոյ եկեղեցւոյ, զի մի փոքր խմօրն՝ զամենայն զանդուածն ապականիցէ, չարն՝ չարեաց լինելով օրինակ :

Իսկ եթէ ոք յեղբարցն ջատագովէ այնպիսումն, վասն մարմնաւոր ընտանութեն, կամ վասն սիրելութեն, որպէս զի ախտացեալ անդամն 'ի կարգ առողջին պահեսցի, լրբաբար գործելով զանպատշաճն, և մերձակայիցն պատճառ լինելով հիւանդութեն՝ զիւրն հոգւոյ ախտ 'ի նոսա փոփոխելով որպէս զբոր, կորստեան հոգւոյ նորին և այլոցն՝ որ նովաւ, օգնականն նորա տացէ պատասխանի առաջի ՎՇի՛ եթէ առաջնորդն իցէ, և թէ այլ ոք յընկերակցացն : Օ ի թէ տէրն զաջակն հրամայէ խլել, և զձեռն աջոյ և զոտն հատանել, զի՞նչ լինիցին՝ որք զգայթագղեցուցիչն առ գայթագղեալմն պնդեալ պահեն 'ի վնաս երկաքանիւրոցն ոգւոց, հիւանդացն՝ աներկիւղ գործելով զվատթարն, և առողջիցն՝ գայթագղելովն և բամբասելով : Իսկ եթէ յետ 'ի բաց գնալոյն և զզջացեալ դարձցի յուղղութիւն այնպիսին շնորհօքն այ, և ողջասցի ապաշխարութք, ճշմարտութք և ոչ¹ կեղծաւորութք, ընկացի վերստին յառողջ անդամոցն ՎՇի միաւորութիւն :


Դարձեալ և զայս պատուիրեմք, զի թէ հնարիցէ՝ փոփոխել ձեզ 'ի փոփոխական բարուց, վանաց 'ի վանս շրջելով. զի վասն դոյզն պատճառի թողուլ զառաջնորդն իւր, և զկենակից եղբարմն՝ անհաստատութեն բարուց է նշանակ : Ա ասն զի բաց 'ի հոգւոց վնասուէ՝ որ հրամայեալ է 'ի գիրս թողուլ և զնալ, յաղագս մարմնաւոր ինչ պատճառի ոչ թողացուցանեն զփոխումն 'ի տեղւոջէն : Եւ յայսմ պատճառէ՝ յազգի մերոյ կրօնաւորաց զբազումն տեսանեմք անհրահանգս, և անխրատս, և անհնազանդս աւագագունից. և գրեթէ զբովանդակն՝ բաց 'ի սակաւուց : Օ ի յորժամ յանպատշաճն կամ 'ի գործս կամ 'ի խօսս՝ որ անվայելուէ է կրօնաւու

(1) Չորս օր. իւղակաբնութէ :

բաց՝ տեսանիցեն զոք եղեալ առաջնորդն, կամ վարդապետն, կամ ոք՝ ի ծերագունիցն, և յանդիմանող բանիւ սաստիցէ, վաղվաղակի զիշերագնաց եղեալ, իբրև ծառայ փախուցեալ՝ ի տեառնէ՝ փախչի զայրացեալ սրտիւ յանձային խրատուէ անտի: Եւ զի առաջնորդն երկնչի՝ մի՛ գուցէ՝ ի գնալ եղթարց յաղագս այսպիսի պատճառի, գործոյ եկեղեցւոյն պակասումն լինիցի, ներող լինի ամենայն ստահակ եղթօր կալ մնալ անթժկելի՝ ի բարս և՝ ի գործս ստահակութե. և այսու աղագաւ՝ անխրատս և անհրահանգըս մնան այնպիսիքն մինչ՝ ի վախճան:

Ա, ա և ևս ծանրագոյն յիմարութեան բանք, զոր պատասխանեն նոքա խրատուաց իւրեանց՝ մի՛ լինել շատաշրջօղս. ասեն՝ ած աղատ արար զմեզ, և ինքնիշխանս, զիարդ զաղատութիւնս մեր դիցուք՝ ի ծառայութիւն մարդկան, Եւ երանի թէ զաղատութին՝ զոր ետ ած բնուես, բարւոք՝ ի կիր արկանէին, այսինքն՝ ի յախտից լինել աղատս: Ա ատթար ծառայութիւն և վնասակար՝ մեղաց ծառայութին է, որպէս ասաց ՚Ի՞՛, թէ՝ « Որ առնէ զմեղս, ծառայ է մեղաց »: Խոկ այ ծառայութիւնն, և վասն այ՝ եկեղեցւոյն, և վասն եկեղեցւոյն՝ առաջնորդին, արդարութիւն է և ոչ մեղք. զոր և առաքեալ օրինադրէ, թէ՝ « ՚Օ առայեցէք միմեանց՝ երկեղիւն ՚Ի՞՛, և ինքն ՚Ի՞՛ հրամայէ, թէ՝ « Որ կամիցի մեծ լինել, եղիցի ամենեցուն ծառայ », ՚Ի՞՛ և սքնիարսէզ՝ ի կրօնաւորաց սահմանն, թէ ամենայն ժուժկալութի և առաքինութիւն այնմ՝ որ զհնաղանգութիւն առաջնորդին ոչ ունիցի՝ անօգուտք են, և յոչ ինչ պէտս համարեալ:

Ո՞ի ոք յեղթարց տրտնջող լինիցի զառաջնորդէ իւրմէ յինչ և իցէ պատճառս տրտնջման. թէ և արդար գտանիցի՝ ի տրտնջէլն, զի մի՛ զվարձմն՝ որ յայ՝ կորուսանիցէ, և ընդ այդւոյն մշակացն առաջնոց գատեսցի, վասն տրտնջէլոյն զտեառնէն անիրաւաբար: Օ ի թէ մարմնաւոր ծառայից հրամայէ առաքեալ հնաղանգ լինելըստ մարմնոյ տերանց, ոչ առականէ ծառայելով՝ այլ միամժութք սրտիւ որպէս այ, զի՝ ի տեառնէ, ասէ, ընդունիցիք զվարձմն, բանի



ևս պահանջէ ած 'ի հոգեորացդ, առաւելքան զնոցայն ցուցանել հնազանդութիւն և համբերութիւն և միամտուի եկեղեցւոյ հոգեոր առաջնորդաց : Օ ի ոչ միայն ընդ պահոցն և աղօթից, և որ նման սոցին՝ մասանց առաքինութեց՝ տայ ած զվարձս վաստակոց գործողաց 'ի յայդի պատուիրանի նորա, այլ առաւելընդհաւատարիմլինելն եկեղեցւոյ'ի գործս և յաշնատութիւնս և յամենայն իրս :

Իսկ զգողսն և զկծիծմն և զհատուան՝ քան զարտաքինսն 'ի սոյն յանցանս գտեալս՝ առաւելապէս դատի ած, որպէս զգիտող կամաց տեառն ծառայ, քան զայն՝ որ ոչն գիտէ : Օ ի զորօրինակ զսուրբ կերակուրս և զըմպէլիս պիղծ կայտառք անկեալք 'ի նոսա և հեղձեալք ապականեն, սոյնպէս և յարդար վաստակս՝ յորժամ ձեռն գողոց մերձենան 'ի կըծծուի, ինքեանց բարեգործութիւն հեղձնուն 'ի հոգիս իւրեանց որպէս զմկունս, և զմնացեալստացուածսն պղծեն անիրաւութիւն : Հորմէ զգուշանալ աղաւեմ; և սուրբ պահել զծեռս 'ի վնասակար և յանիծաբերանձին ախտիցս: Բանզի անէծք ցաւագինք վասն այլ մեղաց ոչ ևս շարժին 'ի մէջ եկեղեցւոյ, քան յաղագս գողութեն: Այւ մի ոք փոքր համարեսցի զսա 'ի կարդս մեղաց, քանզի 'ի քարեղէն տախտակնն՝ 'ի գրեալ օրէնսն մատամբն այ՝ երրորդն է սա կարդեալ յետ սպանութիւն և շնութիւն: Այւ մի ոք կարծիցէ՝ թէ մեծագոյն իրաց յափշտակութիւնն է 'ի գողութեն համարի, և փոքրն ոչ: Ծանիցէ այնպիսին, զի թէպէտ և 'ի տուգանսն զանազանութիւն է, քանզի չորեքպատիկ հատուցանելը յօրէնսն հրամայեցաւ զգողութեն վճարումն, և տասն դաշեկանի չափոյն՝ չորեքպատիկն, կամ հարիւրին կամ հազարին՝ առաւելէ քան զմիոյն կմզգերկուցն, սակայն անունն մի ևնոյն է մեծին և փոքրուն, բազմին և սակաւուն: Օ ի ոչ թէ որ զմեծագոյն իրս կամ զւագումս գողանայ՝ նա միայն կոչի գող, և որ զփոքրունս և զսակաւս՝ յայլինչ անուն վերաձայնի, այլ համանունաբար 'ի վերայ ամգողոց է զգողուն անուն և պատիժ, որ զբազում գողանայ և որ զսակաւսն: Այւ սահման՝ որ ընդ գողութեն անուան և բամբասանօք

արկանէ զմարդ՝ այսչափ է. ամենայն ոք՝ որ զձեռւսիւր ձգէ յառնոււլզինչ և իցէ իրս, և աւօքն այսր և անդը հայեսցի, զի մի տեսցէ կամտէր դոյին՝ և ըմբռնեսցէ զնա, կամօտար ոք՝ և հայհոյեսցէ, գողէ այնպիսին, և գողութի է զոր առնուն :

Եւ մի ոք ինքն ինքեան իրաւունս առնիցէ, կամ աշխատութէ իւրոյ վարձ ասելով զգողացեալն, և կամ այլինչ ցուրտ պատճառս յօդելով անպատիժ համարի լինել զինքն՝ ի դատաստանին այ . ՚ի նախնի եղեալ օրինակէն զգաստասցի այնպիսին Անանիայ և Ափիրայ : Ո՞թէ անձին աշխատութի էր դողացեալն յիրաց այլոց՝ որպէս և քոյդ . ոչ, այլ՝ ի սեպհական իւրեանց գեղջն գնոց, և ՚ի հայրենի ժառանգութէ՝ զոր վաճառեալ արծաթոյ, և սակաւ ինչ խորեալ՝ յաղագս առանձնական իւրեանց պիտոյից, և զրազումն առ ոտն եղեալ Պիետրոսի, տես զիարդ մահու եղեն պարտականք, ՚ի վիմին հաւատոյ արդար իրաւանց պատուհասեալք . ոչ վասն արծաթոյն ինչ կարեաց, զորմէ ոչ ինչ փոյթ էր Պիետրոսի, այլ վասն ստուեն՝ որպէս և ասէր, ոչ ստեցեր դու մարդոյ, այլ այ : Խսկ առ մերովքս տեսանեմք՝ ոչ միայն գողութի, այլ ստուի վասն գողութին . ոչ լոկբանիւ, այլ մեծամեծ երդմամբ ուրացութի որոյ մեղաց չիք թողութի : Օի և ոչ զղջումն և խոստովանութիւն առ այն՝ յորմէ գողացաւն . զի թողութէ իշխանութի գողոյն՝ յաղագս գողացելոյ իրին, որ տէրն է գողացեալ դոյին՝ ունի, և ոչ օտար ոք խոստովանահայր : Ա ամս որոյ զի ոչ խոստովանի նմա, և ոչ հատուցանէ զոր գողացաւն՝ ՚ի նմանէ և զրկեաց, ոչ ասեմչորեքին ըս մաքսաւորին : Օ աքէի, այլ ոչ զոր էառն, ոչ ընդունի թողութի յաւիտեան :

Են դարձեալ ոմանք՝ ՚ի պակասամիտ կրօնաւորաց՝ որք թէպէտ և ոչ զարտաքին իրս, այլ զանձին իւրեանց զօրուի և զաջողուի գողանան յեկեղեցւոյն, ՚ի յիւրեանց առանձնական գործս արի և արթուն լինելով, և ՚ի հասարակացն հեղզ և պղերդ . ոչ անպատիժս ՚ի դատաստանէ այ մնան այնպիսիքն, ընդթերահաւատուեն առաւել՝ քան ընդ պղերդուեն : Օի ոչ հաւատան զալիսատութէն վարձ ՚ի տեառնէ

Ընդունել, այլ զմարդկայինն միայն համարին համացումն, որոց յորժամ ըստ կամաց զպէտուն տայ առաջնորդն, արիանան՝ ի վաստակին . իսկ յորժամ փոքր մի նուազանալ հանդիպի, ընդ հեղգութեան գործոյն և զտրտունցն ևս յաւելուն :

Ինդ այսոսիկ՝ որ գործոց գրեցան պատուիրանք յաջաշունչ գրոց, և շրթանց և լեզուոյ դնել դրունս աղաչեմք, և դռնապանս . որպէս զի զօգտակարն՝ ի բանից և զբարին թողացուսցեն ելանել. իսկ զւարս և զվասակարս և զանօգուտոս՝ ի սրտին որպէս ՚ի բանտի արգեցեն, ոչ թոյլ տալով մտացն ծնանել զւար մանկունսն, այլ մանաւանդ հեղձուցանելինքեան զսերմանեալ յղութին՝ սատանայէ : Եւ արդ՝ մի ոք դատեսցի զընկեր իւր, զի մի և ինքն դատեսցի յարդարադատն այ, որպէս և ասաց տէրն .

“ Ո՞ի դատիք և ոչ դատիցիք ” :

Ո՞ի ոք ՚ի բամբասանս յօժարեսցի, թէ և ուղիղ իցէ, թող թէ զրահետ վարեալ : Օ ի զի՞նչ օգտեցուցանես զեղսայրն՝ բամբասելովն զնա առ այլս . զքեզ վնասեցեր ՚ի բամբասելն, և նա ոչինչ օգտեցաւ : Եթէ կամիս օգտեցուցանել զնա և զքեզ, տէրունսականաւն վարիցիր խրատով : Քանդիմանեա զնա սիրով, որպէս զհիւանդացեալ անդամ սպեղանեօք, նախ առանձնաբար, եթէ ոչ անսայցէ՝ առաջի երկուց և երից վկայից : Եթէ և ՚ի նոցանէ ոչ պատկառեսցի դառնալ յուղղութի, ասասնը յեկեղեցւոյն . և թէ և յեկեղեցւոյն՝ ի հրապարականախատ լինելոյն ոչ զղասցի, յայնժամ համարեսցի քեզ և բամբասեսցի իրաւապէս իբրև զհեթանոսս և զմաքսաւոր :

Եւ արդ՝ մի ոք սովորեցուսցէ ՚ի կրօնաւորաց զեղու իւր կամքարախօսել՝ ի զուր զումեքէ, կամքանիծանել վայրապար, կի՞ հակառակել ընդդէմքանից հակառակողաց յանօգուտ կռիւս, և ՚ի վնասակար վիճաբանուիս, կամ՝ ի վիճելն՝ թշնամանաց և անարդանաց բանս բարբառել որպէս զաշխարհականս, որ ոչ վայելէ սրբոց : Օ ի թէ ընդ դատարկ բանից՝ համարս պահանջէ ՚ի՞ն, որպէս և հրամայեաց, զի՞նչ լինիցին՝ որք դարշելի և վատթար բանիւք վարին

անխտրապեար : || Պանաւանդ որք 'ի խեղկատակութի
սովորեցուսցեն զլեզուս և 'ի ծիծաղական բանս,
նման լինելով խաղալկացն և հացկատակաց , և որք
'ի ծիծաղեն այլայլեն զգէմն և կարկաջեն անմտա-
բար : || Ասն որոյ աղաչեմ , զի բանք ձեր ոչ լինիցին
անհամ և անսալ որպէս զռամկաց անմտաց , այլ ոոկ
աղիւ համեմեալ ըստ խրատուն առաքելոյ , 'ի շահ և
'ի չնորհս տալ լսողաց , և ոչ 'ի գայթագութի , և 'ի
զազրուի լինել լսելեաց : Լոյլենոյն ինքն շահաւետ
և օգտակար բանքն՝ մի յաճախութք և առանց դիւ
պոյ ժամու եղիցին խօսեցեալ յայնմանէ՝ որ խօսելն
զիտիցէ իմաստութք , զի մի ձանձրացեալ նողկտայ-
ցեն լսողքն , և դսրովանս դիցեն ատեցողք բարի
բանից , այլ սակաւք եղիցին , և այն հեղութեամք
և հանդարտութք :

Եւ գլխաւորելով զբանս որ առ մաքրագունիցդ
երամք , ասեմք զայս՝ եթէ խորհուրդք և բանք և
գործք ձեր , և ամենայն շարժումն հոգւոյ և մարմնոյ ,
այնպէս եղիցին պարկեշտք և ածավայելուչք , ոոկ
զի անոււանն այ , և ձեռյ կրօնաւորութեղ՝ մի հայ-
հոյուե և պարսաւանաց , այլ գովուե և փառաւորե-
լոյ լինիցին պատճառք 'ի տեսողաց և 'ի լսողաց : Օ ի
մի լիցի ումեք 'ի ձէնջ ընդ հնոյն Խարայելլ լսել յայ
մարգարէիւն , թէ Լոյնուն իմ վասն ձեր հայհոյի 'ի
մէջ հեթանոսաց . այլ մանաւանդ տէրունական բա-
նին որ առ աշակերտան , արժանաւոր առնիցէք զան-
ձինս՝ պայծառ առաքինութք թէ , “ Լոյնպէս լուսա-
ւորեսցի լոյս ձեր առաջի մարդկան , որպէս զի տես-
ցեն զգործս ձեր բարիս , և փառաւորեսցեն զհայր
ձեր որ յերկինս է ” : Եւ այս ինչ սակաւուք առ
աշակերտեալ եղբարսդ ասացեալ 'ի մէնջ 'ի փառս
այ աւարտեսցին :

ԱՌ ԱՌԱՋՆՈՐԴՄ ՍՐԲՈՅ ՈՒԽՏԻՅ ՎԵՆԱԿԱՆԱՅ:

ՓՈՔՐ ինչ և առաջնորդացդ՝ ի յերկինս ճանապարհորդելոցն՝ տացուք ծառայակցաբար զհոգեռը ական և զանային բանին կերակուր, որք զաւաց ունիք գործ և սպասաւորութիւն մարմնոյ եկեղեցւոյ։ Օ ի զոր օրինակ աչք առաջնորդեն անձին յամենայն շարժումն՝ ի լաւագոյնսն կամ՝ ի վատթարագոյնսն, ըստ այսմ նմանութեան և առաջնորդք առաջնորդելոցն։ Խւ որպէս բիբք աչացն եթէ մաքուր լինիցին՝ ի յախտից ինչ՝ ի ներքս անկելոց, սրատեսութեն անմոլար առաջնորդէ անձին յուղիղ ճանապարհն։ իսկ եթէ շամանդաղք մթինք զերակսն լուսոյ՝ որ՝ ի գլխոյ անտի յաչսն իջանեն, խնուն՝ անտեսութեն սխալէ, և ընդ ինքեան՝ ի խորխորատ մահու զբոլոր անձն իւր արկանէ, ըստ այսմ օրինակի և առաջնորդք եկեղեցւոյ, որ ոք երկոքումք աչօք լուսաւորեալ իցէ, այս ինքն գիտութեամբ անձաշունչ գրոց, և առաքինասէր գործովք, անբժութեն, և սրբութեն, և ամենայն արդարութեն, զոր պատուիրանքն այ ուսուցանեն, այնպիսին որպէս անձին իւրոյ, սոյնպէս և համօքէն եղբայրութեն բարւոք առաջնորդէ յանայինսն։ Խսկ որ զմի յաչացն բաց ունիցի, և միւսովն կափուցեալ իցէ, այս ինքն՝ որ կամ գիտութիւն առանց գործոց առաքինութեն, և կամ առաքինութիւն առանց գիտութեն ունիցի, թերի է՝ ի բարեաց, և ոչ կատարեալ։ քանզի միականեաց նմանի այնպիսին։ Օ ի թեպէտ և որ զիմաստութիւնն ունիցի՝ գիտէ զշաւիզս արդարութեն ճանապարհին ուղիղ ուսուցանել բանիւ, այլ ինքեան ոչ գնալովն ընդ նոյն գործով, ոչ կարէ հաւանեցուցանել զայլս գնալ։ լոյնպէս և այն՝ որ սրբութեն վարուք իցէ միայն առանց գիտութեն գրոց, թէպէտ և անձամբ իւրով գնայ ընդ ճանապարհ օրինացն այ, բայց զի այլոց որպէս արժանէ ոչ գիտէ իմաստութեն առաջնորդել վասն այնորիկ բազում անկարգութիւնս մտանէ յեկեղեցի։

Խակ այնոքիկ՝ որք զերկոսեան տեսարանս աշաց խաւարեալս ունիցին՝ ի լուսոյ, այս ինքն զի են տը- գէտք ածային գիտութեց, և են պղերգք յամենայն գործս արդարութե՛, մանաւանդ թէ և հակառա- կօքն լցեալք, և յանդգնին տալ զանձինս յառաջ- նորդութիւն եկեղեցւոյ, որ և զբազումն տեսանեմք յայսպիսեաց՝ ի մերումս թշուառացեալ ժամանակի ձեռնամուխս եղեալ յայսոսիկ, լինին այնպիսիքն ըստ տէրունական առակին. « Այսը կուրի յորժամ առաջնորդէ, ասէ, երկոքին՝ ի խորխորատ անկա- նիցին », որք ոչ յայ, այլ՝ ի սատանայէ շարժեալք՝ դիմեն յառաջնորդութիւնն յայն, ՚ի կորուստ ին- քեանց և առաջնորդելոցն: Ա ան այնորիկ և մեք զածայինս բանի խրատու սերմ յայնց առաջնոր- դաց ողիս սերմանեսցուք, որք օրինօքն այ վարեալ յօժարին զառաջնորդութիւնս իւրեանց, որք աս- տուծով սկսանին, և առ ած կատարեսցին: Ե՞ս որս և ասեմք.

Ո՞ի անփոյթ առնիցէք զաշակերտելոց եղբարցն՝ ՚ի հոգւոյ ինչ վտանգս անկեալուրուք կամ՝ ՚ի մարմ- նոյ, քանզի համարս տալոց էք ընդ իւրաքանչիւրոց: Ո՞ի զնիւթականին գործոյ միայն պահանջել զկա- տարումն անթերի, և զնոգեոր գործոյ՝ զառ՝ ՚ի նո- ցանէն կատարելոց՝ անփոյթ առնել. այլ՝ ի վատթա- րաց զգուշանալ, և լաւագունիցն պատկառ կալ միշտ խրատ տալով: զոր մանաւանդ պահանջել ձեն և կարգն՝ զոր ընկալան: Ա ան զի այսմ կարգի է մեռեալ լինել աշխարհի և աշխարհական իրաց, և կենդանի միակ և նորին պատուիրանացն՝ ըստ խրա- տուն Պաւղոսի. զի զայդի օրինացն կոչեցան գոր- ծել և ոչ զարտաքնոցն մշակութե գործ: Եւ որ զայն միայն գործէ աստ, և՝ ՚ի հոգեորացն ոչ բնաւ, կամ զնիւթականսն՝ ի բոլոր սրտէ, և զաննիւթն՝ ՚ի հարկէ և առ աչս մարդկան, ոչ եղև լսելի ներքին ականջօք տէրունական հրամանին, թէ « Պարծե- ցէք՝ մի զկորստական կերակուրն, այլ զայն՝ որ տա- նի՝ ՚ի կեանմն յաւիտենից »:

Պարծել արժան է և զայս, քանզի դատարկու- թիւնն լար է՝ որպէս և Պաւղոս խրատ տայ, մանա-

ւանդ զի և օրէնս դնէ , եթէ որ գործիցէ ոչ , և կերիցէ մի . զոր և ինքն կատարէր յասելն՝ “ Օ ցայդ և զցերեկ գործէաք , առ ՚ի չծանրանալոյ ումեք ” . և եթէ “ Ձեռքս այս սլաշտեցին զիս , և որ ընդ իսն էին , : Ռայց յաղագս մարմնական գործոյն զհոգեւորմն անտես առնել իբրև զաւելորդ իրս , յոյժ վատթարագոյն է աշակերտելոց բանին : ՚Ի՞անզի պարտ է՝ որպէս երկրորդ է մարմինն հոգւոյն , առաջին զհոգւոյն հոգալ կերակրոց ” , որ են աղօթք և ամենայն բարեգործութիւնք , և ապա զմարմնոյն և զմարմնականաց : Օ ի և առ մարդիկ՝ նախ տէրն կերակրի սպասաւորեալ՝ ՚ի ծառայիցն , և ապա ծառայքն ՚ի նշխարէ տէրանցն : ՚Ճւ՚ի մեզ քանզի մարմինն ծառայական է , և հոգին տիրական , և կամք մտացն դատողական , արժան է դատողականին՝ ՚ի կարգի պահէլ զերկաքանչիւրսն : ՚Յառաջագոյն զհոգին կերակրել հոգեւորական կերակրօք՝ ՚ի ձեռն մարմնոյն սպասաւորութե՛ , և ապա զմարմնականացն հոգալ հոգւոյն իմաստութք և տնօրէնութք : ՚Ճրդ՝ յայսոսիկ և որ նման սոցա բարեկարգութիւնս , պահէս զիք զմիաբանութիւն եղայրութեան ձերոյ :

՚Կարձեալ մի կողմնաւոր բարուք զոմանս սիրել ջոկս առնելով , և զոմանս անտես առնել . ոմանց աւելորդօք բերիլ՝ ՚ի պէտան , և այլոց և ոչ հարկաւորօքն բաւականանալ . այլ սէրն հասարակաց եղիցի՝ ըստ սրբոյն ՚Կարսզի կանոնագրութեն , և պատիւն՝ որոց վայելէ :

՚Խակ կերակրոցն բաշխումն՝ ըստ չափոյ աշխատութեն առ իւրաքանչիւրսն լիցի , առաւելութք և նուազութք : Օ ծերացեալսն և զվտանգեալսն , որք զմանկութե՛ ժամանակն և զցօրութի անձանց՝ ՚ի յաշխատութիս եկեղեցւոյն ծախեցին , մի բարձի թողի առնիցէք՝ որպէս ոչ ժամանակին պիտանացուք , զի մի բարկասցի տէր : ՚Ի՞անզի թէ օտարաց վտանգելոց , նա և թշնամեաց խնամց տանել հրամայէ ՚Ի՞ո և ողորմել , և պատուհաս սպառնայ՝ որք ոչն առնեն , քանի՛ ևս եղայրոյն և անդամոց եկեղեցւոյն : ՚Ասն որոյ՝ զծերս սպատուեցէք և ծերա-

տածեցէք ըստ հրամանին առաքելոյ, և զտկարացեալսն խնամարկեցէք տեսչութեք, և պիտօյից նոցա պատրաստութեք ըստ չափոյ զօրութեան ձերոյ : Գրիտեմք՝ զի այսպիսեաց բարեկարգութեց խափանելոյ՝ աղքատութիւն ժամանակիս է պատճառ, բայց ոչ զառաւելն՝ այլ զյօժարութիւն կամացն և զկարն պահանջնէ ած :

Ո՞վ զնուիրեալն յեկեղեցիս, կամ կենդանեաց միաբանութեան կամ մեռելոց յիշատակի, անձին միայնոյ սեպհականեսցէ առաջնորդն . այլ՚ի պէտս եկեղեցւոյն ծախիցէ զնոյն, և հատուցանէ եկեղեցեաւն զհոգեօր պարտսն, զի մի յարդար դատաստանին աւուր՝ պահանջնէսցէ իւրաքանչիւր ոք զտուեալն, և զի ոչ ունիցի յայնժամ հատուցանէլ, զիւրն ասեալ բարեգործութիւն փոխարէն տացեն : Եշ թէ առաջնորդն առաջին զոր առ յաւուրս իւր, 'ի ծախս եկեղեցւոյն վատնեաց հաստատուն վկայիւք, և ոչ ժամանեաց յաղագս օրհասին մահու կանխելց՝ հատուցանէլ զպարտսն, երկրորդն՝ որ զինի նորա ժառանգէ զառաջնորդութիւն եղբայրութեն, պարտական է վճարելոյ . և եթէ անտես առնէ, ունի տոկոսեօք վճարել առաջի ՎՌՇի : Խակ եթէ ոք ոչ վկայեն նմա 'ի պէտս եկեղեցւոյն առնէլ զառեալն, ինքն'որ էառն՝ հատուցէ 'ի հանգերձելումն :

Ո՞վ ոք ինքնակամ ախտիւ շարժեալ՝ կաշառանօք աւագաց՝ յափշտակեսցէ զառաջնորդութիւն վանց, առանց ժամանակին առաջնորդի քննութեն և հրամանի : Վանզի երկուք են պատճառ իրաւացի փոխելոյ զվանաց առաջնորդս . կմ վասն զանարժանս գործելոյ արտաքոյ օրինացն այ, և այն ճշմարիտ վկայիւք, կամ եկեղեցւոյն ոչ շինութեն՝ այլ աւերման լինելոյ պատճառ : Եշ առանց այսոցիկ եթէ յանդզնի ոք հակառակ յառնէլ մեղանչէ յօրէնս այ :

Եշ զոր ինչ միանգամ կանոնեալք են, և եղեալ 'ի բանս սրբոց հարցն յաղագս առաջնորդաց՝ առ 'ի խրատ և յուղղութիւն 'ի բանս 'ի գործս, և յամենայն բարեձեռութիւս կարգաւորութեց, զամենայն

բարեացն զտիսլն և զօրինակմն փութասջիք յան-
ձինս ձեր նկարագրել։ Այս թէ զամենայնն ոչ էք
բաւական կատարել, յաղագս ձմեռն գոլով 'ի բա-
րեաց ժամանակիս, գոնեա զյոլովմն գործով կատա-
րեցէք, և առ պակասեալմն՝ զյօժարութիւն կամաց
ունիցիք, և զդումն և տրտմութիւն վասն պակա-
սութեանն։ Օ 'ի յորժամ յայսոսիկ հաստատիցէք
զմիտս, հակառակ բարւոյ չարն ոչ կարէ տեղի գտա-
նել յոգիս ձեր։ Ա ասն որոյ և մեք ազաշեացուք
զտէր, զի առաջնորդացդ և առաջնորդելոցդ յա-
ջողեսցէ 'ի յերկնայինն հետեւել ճանապարհ մեօք
հանդերձ, զի ամենեքեան արժանասցուք խոստացե-
լոց բարեացն, որ 'ի ՎՌ ՅՌ :

ԱՌ ԱՌԱՋՆՈՐԴՄ ԵԿԵՂԵՑԻՈՅ՝ՈՐ ԵՆ ՑԱՇԽԱՐՀԻ,
ՈՐ ԿՈՉԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՔ:

ԽՈՍԵՍՑՈՒՔ և առ դասս եպիսկոպոսաց սրբոց,
որ էք տեսուչք կարգեալք յայ հոգւոց հաւատացե-
լոց, որ են յաշխարհի: Որ թէպէտ և ըստ կարգի
երկրորդ եղաք, յաղագս բարեկարգուեն նախ առ
վանականն և ապա առ որս յաշխարհի են առաջ-
նորդք՝ խօսելով, սակայն ըստ աստիճանի առաջնն
էք: Օ որս աղազեմնախքան զամենայն՝ի միտոս ձեր
գալ, և Ճանաչել իմաստութք զաշտիճանիդ՝ զոր
ունիք՝ զբարձրութիւն և զգործ, եթէ ուստի սկսաւ,
և վան էլլ եղաւ, և զի՞նչ հրամայեցաւ առնել
յայնցանէ՝ յորոց հաստատեցին զսա: Օ խ յորժամ
զայսոսիկ գիտիցէ ոք որպէս պարտն իցէ գիտել, մի
'ի յերից աստի շահիցի: Լամ Ճանաչելովն զծան-
րութիւն սորա և զդժուարակրութիւն, և ոչ յօժա-
րութք գիմել իբր ՚ի դիւրին իրս և'ի հեշտալիս՝ զի-
տելով զիւր տկարութիւն, այլ ՚ի բաց հրաժարել՝
թէ և բռնադատիցի յիւրոց մտացն ախտից կամ ՚ի
մերձակայից, որպէս և առաջնն սուրբքն արարին
և ուսուցին: Լամ թէ յանձն առցէ զլինելն, փու-
թայ ըստ հաճնիցն այ կատարել զտնտեսութիւն
զործոյն: Լամ թէ ոչ արասցէ զարժանն, Ճանաչէ
զպակասութիւն բարւոյն եղեալյինքեան, և ըզ-
վնամն, և խոշիւ մտաց իւրոց՝ դատէ զանձն, յան-
ցաւոր զինքն համարելով: Ի՞րդ՝ թէ ուստի սկսաւ՝
ասացուք:

Վկիզեն եպիսկոպոսութեան եղել յայնմանէ, որ
երդմամբ առ զքահանայութիւն՝ի հօրէ՝ ըստ կար-
գին Վելքիսեգեկի: ոչ ըստ ածութեանն, այլ ըստ
մարդկութիւն: ոչ յանբանից մատուցանելով պա-
տարագ ըստ ահարոնեան քահանայութեանն, այլ
զանձն իւր մատոյց կամաւոր պատարագ՝ ՚ի վերայ
խացին հօր՝ վասն ընդ մեզ հաշտութեն: Եւ զնոյն
քահանայապետութիւն, զոր ինքն՝ի հօրէ ընկալաւ
յաղագս խացին մահու՝ի վերայ այնոցիկ՝ զորս դը-

նեաց արեամբ իւրով, չնորհեաց աշակերտաց իւրով՝ ի ժամանակի համբառնալոյն յերկինս ըստ աւետարանին Պ ուկայ, թէ “Եղ ձեռու ՚ի վերայ նոցա, և օրհնեաց զնոսա. և ապա ինքն, ասէ, վերանայր յերկինս „: Օ նոյն օրինակ պահանջելով և ՚ի նոցանէ, թէ որպէս ես ոչ հեշտութե՛ այլ չարչարանօք և մահուամբ ընկալայ զքահանայութիւն՝ ի վերայ ազգի մարդկան, և դուք նմանապէս մահուչափ նահատակեցարուք ՚ի վերայ ոչխարաց հօտի իմոյ, զոր ստացայ արեամբ իմով: Որք և արարին ըստ հրամանին, մեռանելով ՚ի վերայ ժողովրդեանն՝ որ հաւատացաւ նոցա ՚ի տեառնէ: Եշ յորժամ հանդերձեալ էին առաքեալքն Վանի ելանել յաշխարհէ, ընտրէին ՚ի հաւատացելոց անտի արս երկիւղածս և իմաստունս, և կացուցանէին փոխանակ իւրեանց՝ գլուխ ժողովրդեանն՝ ՚ի քաղաքս և ՚ի դաւուս. զորս և եպիսկոպոսս անուանեցին, որ թարգմանի տեսուչ: Վարդ թէ ուստի սկսաւ, ասացաք:

Պարտ է գիտել և զայն՝ թէ յաղագս որո՞յ պատճառի եդաւ՝ ՚ի Վանէ և յառաքելոց նորա այս գործ եպիսկոպոսութեն. յայտ է թէ վասն լինելոց գլուխ և հրամանատար քահանայից և ժողովրդոց, և որպէս զդէտ՝ աննիրհ աչօք մտացն նայել՝ ՚ի վերայ ամենեցուն, զթիւրեալսն ուղղել, և զուղիլըն հաստատուն պահել յուղղութեն: Եշ թէ զի՞նչ հրամայեցաւ եպիսկոպոսին լինել, և կամ զի՞նչ առնել, զայս Պաւղոս յայտ առնէ առ Տիմոթէոս գրելովս, թէ “Պարտ է եպիսկոպոսին անարատ լինել որպէս այ տնտեսի, հեզ, ցած, պարկեշտ, հիւրասէր, բարեսէր, արդար, սուրբ, ժուժկալ, մի արձաթասէր, մի կոռուող, մի հարկանող, այլ հանդարտ և այլն ես:

Վարատ ասելովն, յամենայն արատոյ՝ որ ըստ հոգւոյ և մարմնոյ իցեն՝ մաքուր լինել հրամայէ: Իսկ որպէս այ տնտեսի՝ զայս յայտ առնէ, զի թէ մարդիկ նիւթական գոյից իւրեանց տնտես զանարատսն, ասէ, ընտրեն լինել, այս ինքն՝ որ ոչ գողացի աւաղակապէս և ոչ հեղապայցէ՝ ՚ի ինամ տանելոց գոյիցն և ՚ի պահպանութե՛, քանի՛ ևս արժան

Է անարատութիւն և արթնութիւն, և զգուշութեն
ունել տանն այ տնտեսաց, որ է եկեղեցի սուրբ. ոչ
զնիւթականս ասեմ զեկեղեցւոյ, այլ զհոգիս մարդ-
կան՝ որք շնին տաճար այ կենդանւոյ, զորս պարտ
է՝ որչափ զօրութիւն իցէ այ տնտեսին՝ անխախտե-
լի պահել զշնուածս անձաբնակ տաճարացն, և ոչ
տալ գողանալ սատանայի իւրով պղերգութքն 'ի
հոգեռոր գանձուց անտի, ոչ զիւր և ոչ յորոց զտըն-
տեսութեն ունի գործ. տացէ նոցին օր ըստ օրէ
և զրամանին կերակուր 'ի ժամու, ըստ տէրունական
հրամանին :

Հեղ, ցած, պարկեշտ. հեղութքն յուշ առնե-
նմանող լինել Մովսիսի և Ղաւթի, որք 'ի հնումն
էին հովիւք ժողովրդեանն Խարայելի, թէ նոյնպէս
պարտ է և նորոց հովուացս հեղութքն և հանդար-
տութքն հովուել զժողովուրդս, որպէս և հովիւք
զհօտս, և ոչ Ճոխութքն և սաստկութք ըստ աշխար-
հի իշխանաց : Խակ ասելովն՝ թէ ցած, զխոնարհու-
թին ուսուցանէ. զի անդէպ է եպիսկոպոսին՝ հպար-
առութեամբ և գոռոզութքն լինել առ հնազանդեալ
ժողովուրդսն, որպէս զգործակալս բռնաւորաց,
այլ հեղութքն և խոնարհութք բերիլ առ ամենե-
սեան: Որպէս և Վ՛ոյ յայսոսիկ զինքն տայ օրինակ.
“ Ուսարուք յինէն, ասէ, զի հեղ եմ և խոնարհ
սրտիւ ”: Խւ դարձեալ ցուցանելով զոր 'ի խոնար-
հութին օգուտն, և զառ 'ի հպարտութին վնասն,
ասէ. “ Վմենայն որ բարձրացուցանէ զանձն՝ խոնար-
հեսցի, և որ խոնարհեցուցանէ՝ բարձրասցի ”: Խւ
Պաւղոս զգուշացուցանելով զԾիմութէոս՝ զի մի զան-
կատարսն հոգեռոր և մարմնաւոր հասակաւ վերա-
կուեցէ յաշտիձան եպիսկոպոսութեն, ասէ. “ Վի
մատաղատունկ, զի մի հպարտացեալ 'ի դատաս-
տանս անկցին սատանայի ”: Վանզի սատանայ ընդ-
դէմ արարչին այ հպարտացեալ, և վասն այսորիկ
անկաւ յերկնից, և պարտական է յաւիտենական
դատաստանացն, և մշտնջենաւոր տանջանացն : Վ՛ոյ
որոյ հրամայէ՝ թէ ցած, զի մի նորին ախտիւն ըմ-
բռնեալք՝ նորայն դատաստանի և պատժոց կցորդք
եղիցին :

Պարկեշտ . պարկեշտն անուն մի է , բայց առ ամենայն շարժումն հսկոյ և մարմնոյ պատշաճեալ բերի պարկեշտութիւնն . 'ի բանս՝ մի շատախօս լինել , 'ի կերակուրս և յըմպելիս և 'ի զգեստս՝ մի աշխարհօրէն բերիլ , այլ ըստ նոցա նմանութե՛ որոց խաչեալ է աշխարհ՝ 'ի ա և յընթաց ձանապարհի՞ ոչ երեելի և կազմեալ երիվարօք , և կամ կիսիշօք ամբարձեալ եղիցին 'ի բարձրն կոյս , այլ վասն ըլտկարացեալն մարմնն միայն բառնալց՝ ըստ պատահելոյ կրօղին : Եւ ոչ սրբնթաց ձիովք շահատակել , և շամբք և բազէիւք որսականօք բերիլ առ երէլայրիս և թռչունս , որպէս լսեմք զոմանց թէ իցեն : Որ այնքան պատշաճի այսմ ձեռոյ ունողաց այս գործ , որպէս թէ զգտակ կարմիր դիցէ 'ի գլուխ կրօնաւորն փոխանակ քուսիթային , և զգեստ բեհեղեայ՝ ընդ ասուոյ և այծեաց : Եւ կերակուրքն և ըմպելիքն՝ ոչ յաճախութք և անկարգութք , այլ պարկեշտութք և չափաւորութք եղիցին ըստ ածաշունչ գրոց խրատու : Եւ բանք բերանոյն՝ մի անմտաբար խեղկատակութք , կամ աշխարհօրէն զառականս կամ զանկածութիւնս 'ի լեզուն յեղովկ՝ անարգել զոք , այլ բղխեսցէ սրտիւն զբան բարի՝ ըստ մարգարէին , 'ի յօգուտ և 'ի հնորհս լինել լսողաց՝ ըստ առաքելց , և մի 'ի իմաս և 'ի տաղտկութիւն , և 'ի պատճառս աղարտելց զառաքելականն աշտիճան :

Հիւրասէր՝ ըստ Վարահամու և Պովտայ , և այլոց նահապետացն , որք այնչափ գտան հիւրասիրութքն հաճոյք այ , մինչ զի և զած հանդերձ հրեշտակօք ընկալսն և պատուասիրեցին : Եւ ոչ ասէ հիւրընկալ , այլ հիւրասէր . քանզի հիւրընկալութիւն՝ է երեէք զի 'ի հարկաւոր ինչ պատճառէ լինիցի , կամ 'ի բռնութէ , կամ 'ի պատուոյ երեսաց , կամ գովութիւն և փառս որսալց 'ի պատուասիրելոցն . իսկ սիրով ընդունելութիւնն՝ յայսցանէ յամենեցունց ազատ է , որով և խնդութք ընդունի զեկեալ հիւրմն , և ոչ տրտմութք . և զուարթ ցուցանէ ըլ-

կերպարանս, և ոչ խոժոռ և թախծեալ դէմս . և
ոչ գժդմնելով ինչ բարբառի բանս, այլ ուրախա-
րարս և խրախճանականս, որ յոյժ լաւագոյն է հիւ-
րոցն , քան զկերակուրսն : Ա ասն այսր պատճառի
հրամայէ եպիսկոպոսաց և քահանայից, նա և ամե-
նայն քրիստոնէից, ոչ միայն հիւրընկալ այլ և հիւ-
րասէրս լինել :

Իարեսէր . և որ են բարիքն զորս հրամայէ սի-
րել, ոչ զկարծեցեալ բարիսն, որ են ախտաւոր բա-
րիք մարմնականք կամ հոգեկանք և նիւթք աշխար-
հի, այլ նախ և առաջին զշշմարիտ բարին սիրել
զած՝ որ է սկիզբն և աղքիւր բարութե՛ : Երկրորդ՝
զպատուիրանս նորա, որ է բղխուն յաղթերէն բա-
րեաց՝ յայ, ըստ Դաւթայ, թէ “ Աիրեցի զպատուի-
րանս քո քան զամենայն ոսկի, և զտպազիոն : Եր-
րորդ՝ զորս ’ի մարդկանէ լինին բարիք : Իակ զհա-
կառակ բարուցն զւարն, այս ինքն՝ զսատանայ և զորս
’ի նմանէ սերմանեալ զմեզս, ատել և ’ի բաց դառ-
նալ, ըստ նորուն Դաւթայ՝ թէ “ Օ մեզս ատեցի
և անարդեցի, և զօրէնս քո սիրեցի ” : Ա և զչարա-
սէրն և զանդարձն ատել և ’ի բաց դառնալ . յորոց
յետ բազում անդամ խրատելցն և ոչ դառնալոյն՝
հրաժարել հրամայէ տէրն, և համարել որպէս ըզ-
հէթանոսս և զմաքսաւոր :

Վարդար . արդարութեն անուն մի է, բայց զամե-
նայն պարունակէ յինքեան զմասունս բարեաց որ
ունին զնա : Որպէս և արդարքն առաջինք՝ որք
վկայեցան յայ՝ Յովլ, և Օ աքարիա, և Յով-
սէփ, և այլ բազումք : Յ ստ նոցին օրինակի պարտ
է լինել, ասէ, եպիսկոպոսին արդար և ճշմարիտ ա-
ռաջի այ և մարդկան, և արտաքոյ ստութե՛ և անի-
րաւութե՛ ’ի բանս և ’ի գործս :

Արքը . առաջին սուրբ այն է՝ որ մաքուրն է յա-
մենայն ախտից, որ պատերազմին ընդ ողին, որ ոչ
խոցուածս ընդունիցի ’ի սկզբանն, և ոչ դեղոց կա-
րօտանայցէ : Երկրորդ՝ սուրբ է, որ թէպէտ և
հարկանիցի ինչ նետիւք բծից, ոչ ասեմ մինչ ’ի կա-
տարումն, ոչ լինի ’ի ներքոյ անկեալ թշնամոյն՝ միշտ
խոցութելս զոգին հեշտութեցն ախտից տեղի տու-

եալ, և երկրորդ քնութիւն զնոյն սովորութիւն առ նելով, այլ մանաւանդ զանցեալ խոցուածն բժշկեցէ դեղովք ապաշխարութեն, և յառաջիկայիցն զինուք աղօթից և պահոց, և պահպանութեք զգայարանացն զգուշանսալ, ոչ վերստին խոցոտիլ սովորական նետիւքն այլ այնքան ատել զնոսա, մինչ զի յիշատակ նոցին՝ ոչ հեշտութիւն, այլ տրտմութիւն բերել մտացն: Առդ որ յայսմ մասին է, յառաջնոյն կամ և յերկրորդիս, նա է սուրբ, և յայսմ առաքելական աշտիճանի արժանաւոր: Իսկ որ ախտիցն յօժարութեք տուեալ տեղի, և ոչ պատերազմի ընդ նոսա, այլ և խնամով թաքուցանէ յինքեան զխմորն չարութեան, և միշտ խոցեալ ոգեւով ոչ ատեայ ըզ-խոցմանն պատճառս, այլ և սիրէ ևս, և ոչ բժշկել փութայ զխոցուածն, այլ և օր ըստ օրէ նորոգել զմերսն, ոչ է և ոչ ասի սուրբ այնպիսին, և ոչ ընտրութեն այ կոչի սպասաւորել ածայնոցն, այլ իւրով ախտիւն շարժեալ, ըստ ներելցն այ ձգի յայնոսիկ ՚ի կորուստ անձին, և բազմաց:

Ոչուժկալ. ժուժկալութիւն իբրև նիւթ և տեղի իմն է ամենայն առաքինութեց. զի որ կրէ յինքեան զառ՚ի չարեաց ժուժկալութիւն, կրէ և զբովանդակ մասունս բարեաց. և որ ոչ ունի զաա, անհատատ է յամենայն բարութիւնս: Օ ի թէպէտ և յօժարի ՚ի բարիս և սկսանի, այլ ոչ կատարէ . որպէս այն՝ որ կամեցաւ առանց խորհելց շինել աշտարակ: Եւ ժուժկալութիւն սահման՝ այս ինչ է: Յամենայնէ՝ յորոց օրէնք այ հրաժարեցուցանեն զմեզ, պարտ է ժուժկալ լինել. առաջին խորհրդոցն վատթարաց ոչ տալ տեղի առ միտսն, այլ ընդդէմ կալ ժուժկալութեն, և հալածել՚ի սրտէն, զի մի և կատարումն հետեւեցի: Օ նոյն ժուժկալութիւն պարտ է և աչացն դնել պահպան, ոչ բռնադատել հեշտութեն՝ ի յարատ հայեցուածս, կամ՝ ի չարակնութիւնս, այլ անարատապէս հայել յարարածս այ: Եւ ականջացն ոչ յօժարութեամբ ունկնդիր լինել վնասակարաց բանից, այլ օգտակարացն: Եւ լեզուոյ ոչ խօսել զայն ինչ բանս՝ որով արտաքինքն վարին, որ է անվայելուչ սրոյ

աշտիճանին, այլ զպիտանին և զգովելին։ Եւ սրտի ոչ բարկանալ տարապարտուց, այլ հեղ լինել։ և ձեռաց ոչ յանիրաւի զոք հարկանել, այլ վաստակել զբարիս, և յաղօթս ամբառնալ։ և բերանոյ ոչ մերձենալ տարածամ'ի կերակուրս, այլ պահօք դաստիարակիլ։ և ոտից ոչ ընթանալ'ի շաւիզս գայթագղութե ոգւոց, այլ 'ի ճանապարհս արդարութե։ Եւ ոչ և միոյ անդամոյ թոյլ տայ ժուժկալութին, որ ունի զնա, շարժել'ի վատթարագոյնսն։ Ռոդ այսոքիկ և որ սոցին նման է, ժուժկալութե գործ։

Ո՞չ արծաթասէր. արծաթսիրութին, զոր մայր ասէ Պաւղոս ամենայն չարեաց, թէպէտ և ամենայն ումեք, և յամենայն գործո՝ յորում են մարդիկ՝ վնասակար է, առ թագաւորս, և գատաւորս, և իշխանս, և գործակալս, և առ ամենայն ոք որ յաշխարհի են, բայց առաւել առ հոգեոր առաջնորդութիս։ Վանզի առ աշխարհի իշխանութիս՝ ըստ մարմնոյ առնէ վնաս ումեք, կամ անիրաւ դատելով, կամ զրկելով, կամ յափշտակելով, կամ զրպարտելով, կամ գողանալով, կամ սպանանելով, կամ որ յայսպիսեաց իցեն։ Խակ առ հոգեորս՝ այս զհոգիս վնասէ։ Վանզի յայսմ ախտէ է զանարժանս յառաջ կուել յանուոցն սպասաւորութիւն 'ի կորուստ կոչողացն և կոչեցելոցն, և զարժանաւորս յետս կացուցանել, զպիղծս իբրև զսուրբս, և զսուրբս իբրև զպիղծս վարկանելով։ Եւ բիւրք են առ 'ի նմանէ խառնափնդորեալ կարգք յեկեղեցւոց, որք խոտելիք են այ . զորոց Պաւիթ ասէ հոգեւովն, թէ « Խոտեսցին ոյք ընտրեալ են արծաթով », Ա ասն այնորիկ հրամայէ առաքեալ՝ վասն եպիսկոպոսաց, թէ մի արծաթասէր։ Ո՞չ կը ուուող, մի հարկանող. քանզի թէ Վանի ես աշակերտ, մանաւանդ թէ փոխանակ, զհեղութեան նորին ընկալ զօրինակ, որպէս հրամայէ աշակերտելոցն, թէ « Ուսարուք յինէն, զի հեղ եմ և խոնարհ », զորմէ և Խսայի ասէ թէ ոչ աղաղակեսցէ և ոչ վիճեսցի։ Եւ ինքն իսկ տէրն երանի տայ հեղոց, և խաղաղարաց։ Եւ զի ոչ ամենայնիւ ներող պարտ է

լինել և հեղ առաջնորդին, այլ առ յանցաւորս ըզ-
 սաստն՝ի կիր արկանել, տայ և այնմօրինակ. զի ա-
 ռեալ խարազան և եշան զվաճառականմն՝ի տաճա-
 րէն: Եւ այն զի չուանեայ, և ոչ՝ի կարծր նիւթոց,
 խրատէ զառաջնորդս ոչ զգառնութիւն միայն
 'ի կիր արկանել առ յանցաւորս, այլ քաղցրութիւն
 և ներողութիւն ունել՝ի սաստելն. վասն որոյ յա-
 ւելու ասել, թէ “ Այլ հանդարտ ”: Եւ զհան-
 գարտութեն չափ' տէրունականն ուսուցանէ խրատ,
 որ ոչ միայն զինքն, այլ զդիմակն հանդարտ առնէ:
 Օ ի յետ միոյ դիմաց ապտակին՝ զերկրորդն մա-
 տուցանել հրամայէ առաջի անիրաւին. որով թէ և
 բան զգազանս խստագոյն իցէ, բան զոչնարս հան-
 դարտագոյն լինիցի: Եւ ինքն ՎՇ ոչ աղազակէր,
 և ոչ վիճաբանէր, այլ որպէս զոչնար 'ի սպանդ վա-
 րիւր ըստ Խոսյեայ. զնոյն նմանութիւն պարտ է
 և առաջնորդաց եկեղեցւոյ բերել յինքեանս, բայց
 ոչ առ ամենայն ոք, և ոչ յամենայն ժամանակի:
 Վանզի յիւրոյ անձինն արհամարհութիւն՝ որ յա-
 նիրաւաց, բարւոք է հանդարտութիւն, և վարձուց
 արժանաւոր. իսկ յորժամ զանդային պատուիրանս
 տեսանէ արհամարհեալ յանզգամաց, առ այնպի-
 սիսն ոչ զհանդարտութիւն՝ այլ զբարկութիւն՝ի
 կիր արկանել արժան է, ըստ բարւոյ նախանձուն
 Եղիայի վառելով: Որպէս և տէրն յորժամ առ
 ինքն զնախատանացն ձգէին բանս՝ դիւահար կոչե-
 լով, ներելով տայր զպատախանին, ասելով՝ թէ
 “ Հիս դե ոչ գոյ ”: Իսկ յորժամ առ հայր և հո-
 գին, ցանոյր և վրէժինդիր լինէր. այս ինքն՝ յոր-
 ժամ նոքա որք զգործն սատանայի գործէին՝ հայր
 կոչէին զանդ, ասէր. “ Դուք 'ի հօրէ սատանայէ էք ”.
 և յորժամ զգործս հոգւոյն Բաէղղերուղայ իշխա-
 նին դիւաց տային, ասէր. թէ “ Ամենայն որ ասէ
 բան զորդոյ մարդոյ՝ թողի նմա, բայց որ զհոգին
 սուրբ հայհոյէ, մի թողցի նմա ”: Այսոքիկ և սոյն-
 պիսիքս են բարւոք և ըստ կամացն այ, երբեմն հան-
 դարտութե, և երբեմն ոչ հանդարտութեան օրի-
 նակք. զոր առաքեալ հրամայէ ունել եպիսկո-
 պոսին :

Յաւելու և զայս. «Ա Երակացու, ասէ, լինել քա-
նին վարդապետուե», • այսինքն՝ ուսանել և գիտել և
սպասաւորել ածային օրինացն քարողութեան, և
առաջն զայն ստանալ գործ, և ապա զնիւթակա-
նացն հոգաբարձութիւն. որպէս առաքեալքն արա-
րին և ուսուցին: Վանդի ասէին. «Ոչ է պարտ մեղ
թողուլ զբանն այ, և պաշտել զսեղանս,,+ թէպէտ
և սեղանն այն՝ աղքատաց էր սպասաւորութիւն, և
ոչ անձանց, բայց զի զմարմինս կերակրել զաղքա-
տաց՝ փոքր համարէին՝ ի բարիս, քան զհոգիս աղ-
քատացեալս՝ ի բարեաց՝ հոգեորական կերակրովն,
որ է բան վարդապետութեանն, նորին աղագաւ-
նիւթականին կերակրոց զստեփաննոսեանքն եղին
սպասաւորել ժողովրդոցն. իսկ ինքեանք զբանն այ
քարողէին: Եւ այս է՝ զոր հրամայէ եպիսկոպոսաց՝
վերակացու լինել բանին վարդապետութեան, և
զողամիտոն միաթարել այս ինքն՝ որք ոչ ունիցին
հիւանդութիւն հաւատոյ. որք զաթուն ընդունին
զառաքելական, և զգործն ստանալ զառաքելոցն,
որպէս եղեն հետեղոք նոցին սուրբ հարքն առա-
ջինք: Եւ թէ որք զեպիսկոպոսութեն ունիցին աշ-
տիճան՝ ոչ իցեն վարժեալք վարդապետական բա-
նիւ, պարտ է նոցայանցանէ՝ որք կրթեցան յայս
չնորհ ածային՝ մերձ առ ինքեանս ունել. զի տացեն
ծառայակցացն յիւրաքանչիւր ժամու զբանին այ
զկերակուրս:

Եւ զհակառակորդսն կշտամբել. երկու գործս
դնէ բանին վարդապետութե վերակացու լինելովն
առաջնորդաց: Վուաջին, զծառայակիցմն կերակրե-
լով ըստ աւետարանական հրամանին. երկրորդ,
զթշնամիտն ձշմարտութե՝ որք հակառակին հաւա-
տոյն բանի և օրինաց այ և աւանդութեց եկեղեց-
ւոյ՝ ըմբերանել ածային գիտութեն, զի մի զպար-
զամիտս ՚ի ժողովրդոցն պատիր բանիւքն ձգեսցեն
՚ի կորստեան իւրեանց խորխորատ. ըստ ընտանի
գաղանացն կրկին գործոյ, որք զվայրենի գաղանսն
հալածեն, և զհօտս հովուին պահեն արթնութք,
որպէս կարգեցան: Վարդ՝ որք զառաջինն ընկալան
՚ի ՎՌէ զգործ եպիսկոպոսութեան դասք առաքե-

լոցն, այսպէս արարին ինքեանք, և ուսուցին հետեւողաց իւրեանց նովին օրինակաւ վարիլ։ Իսկ յայժմուս թշուառական ժամանակի՝ այնքան հեռացաք՝ ի բարւոյ նոցին նմանութե՛, մինչ զի ոչ այլ ինչ գործոյ պատճառ գիտել զեպիսկոպոսութիւնն, որը յօժմարին ստանալ զնա, բայց միայն զանազան հնարիւք ինչս ժողովել'ի հնազանդելոցն, և փառս որսալ'ի փառաւորչաց. զոր անարգանս պարտ է ասել և ոչ փառս։ Վանզի ձշմարիտ փառք այն են, որ՝ ի ձեռն բարեաց գործոց՝ անուանն այլ լինիցի ոք փառաւորութե՛ պատճառ, ըստ տեառն հրամանին, թե « Տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւոր արացեն զհայր ձեր՝ որ յերկինս է »։ Իսկ անձին առ՝ ի մարդկանէ փառքն՝ ոչ միայն հակառակ են փառացն այլ, ըստ ասելոյն՝ ի տեառնէ զոմանց, թե « Այրեցին զփառս մարդկան՝ առաւելքան զփառս այլ », այլ և՝ ի գովչացն առ երեսս՝ գորովեալք լինին իբրև զախտաւորս, յորժամ տեսանեն ցանկութեամբ զհետ ընթացեալ գովութեան և փառացն՝ որ՝ ի նոցանէ :

(Ծառայից ասել զես դժնդակագոյնն այսր ժամանակի եպիսկոպոսաց գործ, զի և բազում անարգանաց և տուժից տանին յայլազգեաց, ոչ յաղագս անձային օրինացն՝ որպէս առաջին սուրբքն, զի այն երանութե՛ էր արժանաւոր, այլ վասն մնոտի փառացն յուսոյ. և զգերփեալսն՝ ի հնազանդելոցն պէսպէս հնարիւք և բռնաւորութեամբ, զոր յեկեղեցւոյ պայծառութիւն և յաղքատաց պէտս հրամայեցաւ լինել, զայնոսիկ ժողովեն որպէս զմաքսաւոր, և բռնակալաց աշխարհի նուիրեն։ Առ ոչ թե՝ ի նոցանէ բռնադատելով զայն առնեն, քանզի սոյն իսկ յազգէս մերմէ սկսաւ այս գործ չարութեան, և ծանուցաւ այլազգեաց յաներկիւզից ումանց և՝ ի փառամոլից, որք մի՝ ի միոյ վերայ յառնելով՝ տակաւին աճեցուցանեն զկապալս՝ ի վերայ եկեղեցւոյ Վանի, որպէս զտունս բաժից, կամ զներկոցաց. որոց մեղաց չկը թողութիւն, ըստ առ՝ ի յանձ մեղուցելոյն։ Որ ոչ միայն քահանայապէտութե՛ չեն արժանի՝ որ զայս դաժան գործ սկիզբն արարին

մուծանել յեկեղեցի, և կամ այնոքիկ՝ որք՝ ՚ի հայրապետացն ընկեցեալք յաթոռոյ վասն հոգեորպատճառի, այլազգեաց բռնաւորութեամբ և յաւելուածով կապալացն՝ գարձեալ փութան յափըշտակել զեպիսկոպոսութիւնն, այլ և ոչքըիստոնէութեան հաւատոյ և կարգի, և ոչ օրինաւոր քահանայական թաղման և սրբոյ պատարագին յիշատակի :

Օ ինչ է ասել և զմօրէն այսոցիկ չարեաց՝ ըգյայտնապէս հակառակացն Ճշմարտութե, և սրբոյ աթոռոյ լուսաւորչին, որք ինքնաշարժ ախտիւք և բռնակալաց աշխարհի հրամանօք, զանձինս իւրեանց յայս աշտիճան հոգեորք բարձրութե ձգեն, և ոչ ընտրութեամբ այ և անծանոց արանց համօրէն ազգիս, որպէս օրէնն պահանջէ, որով բիւր նեխութեան և ապականութե անդամոց ՚Վ՛ոհ լինին պատճառ։ Օ ի թէ ՚ի գլուխն ՚Հարովնի իջանեն չնորհք հոգւոյն սրբոյ որ է հայրապետութիւնն, և ՚ի գլխոյն ՚ի մօրուսն՝ յեպիսկոպոսութին, և ՚ի մօրուացն ՚ի գրապանակմն՝ որ է քահանայութիւնն, և ՚ի գրապանացն ՚ի զգեստն՝ որք են ժողովրդեանն դասք, և արդ՝ զոր արդեօք եւդ չնորհաց ունիցին, որք յահարոնեանն գլխոյ օտարացեալք են, և ընդ՚Դադանայ և ՚Հքիրոնի, որք հակառակ կացին մեծին ՚Վովսիսի և ՚Հարովնի, յօդեալք իցեն գործով։ Կամ եթէ զոր կամակորութեամբն մերկացան՝ բաժանեալք և որոշեալք՝ ՚ի չնորհաց, զիարդ կարիցեն զինքեանց կորուսեալն այլոց ընձեռել։

Որք յաղագս սոյն և այսր իրի յանդգնութեան ՚ի ժամանակս ՚Տեառն մերոյ և եղեօր ՚Դրիգորիսի կաթուղիկոսի սրբոյ, ՚ի սուրբ լեառնն՝ մեծաւ սիւն հոգուիւ սուրբք և առաքինեաց արանց ազգիս ՚Այոց ժողովով աւելի քան զերկու հազար և զհինդ հարիւր անձանց, եպիսկոպոսաց, վարդապետաց, հարց վանականաց, և միանձանց սրբոյ լերինն, ՚Նզովեալ ՚Տերքեցան յեկեղեցւոյ ՚Վ՛ոհ, և սրով բանին այ հատեալ ՚ի բաց ընկեցան՝ որպէս զնեխեալ և զիրտեալ անդամ յառողջ մարմնոյ եկեղեցւոյ, անէծս յաւազինս կուտեալ՝ ՚ի զլուխս նոցա։ Որոց ոչ եկեալ

'ի միտս, և ոչ զգացեալ զմահացու ցաւս հոգւոց՝
առնլով զդեղ կենաց 'ի գեղատուէ իմաստնոյ, և
բժշկել զզմամբ. և ապաշխարութեամբ 'ի մահա-
համբոյր պատուհասէն, այլ հանգոյն իժի և քար-
բի խցեալ զլելիս ածային բանին, դեռ ևս յամա-
ռեալ բորբոքին 'ի նոյն չարութեն. արբեալ և յիմա-
րեալ փառամոլ ախտիւ՝ իբրև զգազանս կատաղիս
ոչ դադարէն մուծանել զիսուովութիւն յառագաստ
խաղաղութեան երկնաւոր հարսնարանի փեսայա-
ցեալ բանին, զոր արեամբն գնեալ ազատեաց 'ի չար
մշակութեց բանսարկուին։ Որոց արիւն 'ի գլուխ
իւրեանց եղիցի, և վրէժ չարութեան գործոց նոցին
յանձինս իւրեանց լիցի։

Վ. Ա. Դուք՝ որք Շմարտութեանն էք ջատագովք,
և 'ի նոյն՝ բարեաց հետեւողք, աղաւեմք՝ պատրաստ
լերուք ամենայնիւ 'ի գործ հոգեոր հովուութեղ,
զոր ընկալայք 'ի Շմարիտ հովուապետէն, ամենայն
զգայարանօք ըստ վերոգրեալ սահմանիդ և ըստ
կանոնական խրատու սուրբ առաքելոցն, և նոցին
հետեւողաց։ Որպէս զի համարձակութեք և պարզե-
րես կացջիք առաջի աւանդողին ձեզ զտաղանդ
պատուիրանին, տալով զհամար շահիցն նմա կըրկ-
նապատիկ յաւելուածով։ Յորմէ լսիցէք զբարբառն
երանաւէտ, եթէ՞ Օռառայ բարի և հաւատարիմ;
որով 'ի սակաւուդ հաւատարիմ ես, 'ի վերայ բազ-
մաց կացուցից զքեղ, մուտ յուրախութիւն տեառն
քոյ։ Որում և մեզ լիցի աղօթիւք ձեր հանդի-
պել 'ի Վարիստոս Յիսուս 'ի տէր մեր։

ԱՌ ԴԱՍՍ ՔԱՀԱՆԱՑԻՑ :

ԴԱՐՁՈՒՏՑՈՒԹ այսուհետև զկարդ բանիս առ քասս քահանայիցդ, որք աշտիձանաւ երկրորդ էք եպիսկոպոսացդ, և կարգեալ էք քահանայական գործառնութեամբ՝ նուիրել զամենայն հոգիս այ, ծնանելով զամենեսեան մկրտութեամբ սուրբ աւազանաւն յորդեզրութիւն հօրն երկնաւորի, և 'ի ժառանգակցութի Ք'սի այ, և մեղսաքաւիչ մարմնոյ և արեանն տեառն բաշխմամբ կերակրել զհոգիս նոցա յանմահութիւն :

Եւ արդ՝ աղաւեմ զամենեսեան սիրով Ք'սի, բանաւ զացս մոտաց և զարթնուլ 'ի մահահրաւէր թմբութենէ կենցաղոյս, և Ճանաւել զզօրութիւն երկնային գործոցդ՝ յորս հրաւիրեալ կուցցայք, որև հրեշտակական գերաշխարհիկ զօրութեցն է, գեր 'ի վերոյ այս աշտիձան, որք անարատութի և սրբութեամբ պաշտեն զսա: **Ե**ւ որովհետև արժանի եղէք յերկնայինն գործ մատուցանել զանձինս, մի և մի իւիք պատճառս տայք արատոյ անկանել 'ի պաշտօնդ ձեր, ըստ առաքելոյն խրատու. այլ արիաբար և յօժարամիտ սրտիւ առանց ծուլութե զկանոնեալ սահմանս աղօթից սուրբ հարցն անթերի կատարեցէք, ըստ իւրաքանչիւր ժամու: **Ե**ւ մաքուր հոգւով, և սուրբ սրտիւ, և անարատ հաւատով, և մեծաւ յօւսով, և պարզ մոօք, և կատարեալ սիրով, ահիւ և դողութեամբ սղասաւորեցէք անձային խորհրդոյն, և մի իբրև ջուր ընդ խողովակ անցանէք անմտաբար ընդ խորհրդական բանս աղօթիցն՝ զոր մատուցանէք. եթէ սաղմոներ գութիւնք են, և եթէ ընթերցումն սուրբ գրոց, եթէ պաշտօներգութիւն, և եթէ քահանայական աղօթք սրբոյ պատարագին, և այլոց կարգադրեալ կանոնիցն. այլ յոյժ մատառաբար, և թէ գոյ հընար՝ արտասուօք, և մեծաւ երկեղիւ, որպէս թէ դուք նորոգապէս բղխէք զնոսա 'ի սրտէ և 'ի մատաց ձերոց: **Օ**ք ամենեքեան ինդրուածք են առ անձ,

զանազան և պեսպէս պարդեւաց և բարութեանց մեզ առ'ի նմանէ : Եւ ինքն պարդեւատուն բարեւաց ած , յորժամ տեսանէ զջերմեռանդն հայցուածու խնդրովին , առաւել առատապէս շնորհէ զինդրելին , ըստ այնմ՝ եթէ որ ինդրէ առնու , և որ զինի :

Դիտածջիք , զի յառաջագոյն 'ի ժամանակս առաքելցն մինչդեռ նոր ծաղկեաց գարունն հաւատոյ , ամենեքեան լի էին հոգւով սրբով , և շնորհօք հոգւոյն յինքեանց մտաց խօսեին զբանս ազօթից ըստ ժամուն պիտոյից՝ զպատարագին խորհրդածութեան , և զամենայն կատարողապետութեանց : Խոկ 'ի ժամանակս յետինս քանզի հանդերձեալ էր ձըմեռն մեղացն սառնամանեօք խստութե՛ յրտացուցանել զբորբոքումն առ ած սիրոյն յամենեցունց , և բթացուցանել 'ի շնորհաց սուրբ հոգւոյն , տեսեալ հոգւոյ ակամք սուրբ և հոգեկիր վարդապետք եկեղեցւոյ , և այնոր աղագաւ զրով աւանդեցին զամենայն զինի եկողացս . զի նոքօք անվրէպ և անսայթաք առաջնորդեալք , կատարեսցուք զամենայն կարգաւորութիւնս եկեղեցւոյ : Ա ասն որոյ՝ զսոյն մտաւորաբար պարտ է մատուցանել , և մեծաւ հաւատով և յուսով :

Ուաներուք և զայս , զի կոչումն անուան քահանայութեղ ձերոյ՝ ոչ է 'ի մարդկանէ , և ոչ 'ի ձեռն մարդոյ , այլ յայնմանէ՝ որ կոչեցաւն քահանայ ըստ կարգին Վելքիսեգեկի , որ և ինքն է Ճմարիտ քահանայ , և քահանայապէտ և պատարագ այ հօր . և նա ետ ձեզ զկոչումն անուան իւրոյ , և յանձն արարընդ անուանն և զգործն իւր՝ հովուել զժողովուրդիւր , և ուսուցանել միշտ զգործս բարիս , և տալ զանձն օրինակ բարեաց ամենեցուն . ըստ որում և Պաւղոս գրէր առ Տիմոթէոս , թէ “ Վի անփոյթ առներ զնորհացդ՝ որ տուաւ քեզ 'ի ձեռնադրութենէ երիցութեան ” : Եւ դարձեալ՝ թէ “ Քահանայք կրկին պատուոյ արժանի եղիցին , որք աշխատեսցին բանիւ և վարդապետութք ” : Ա ասն որոյ աղաւեմք , զի ըստ անուանդ կոչման , և զգործն կատարիցէք : Եւ որպէս հարք և ծնողք ժողովը դեան ձերոյ՝ յամենայն ժամ՝ տուք նոցա զհոգեսոր

խրատս, միշտ ուսուցանելով յեկեղեցւոջ, 'ի հրապարակս, և առաջնին զամենայն ոք՝ բատ իւրաքանչչւր հասակի, զգուշացուցանելով և յորդորելով յանձայինսն :

Եւ թէպէտ և ամենայն բարեաց տեսակօք և առաքինութք կատարեալք իցեք, սակայն զեկեղեցւոյ պայծառութենէ, և զրբոյ պատարագին պատւական և մաքուր զգեստուց մի անփոյթ առնեք, որպէս լսեմք զոմանց՝ եթէ հասարակաց զգեստուք, և աղտեղեալ տրեխօք ելանեն 'ի բեմն սուրբ, և զսարսափելի խորհուրդն անխորհրդական զգեստուք կատարեն, և զայն՝ 'ի պարկեշտութի անձանց համարին, հանելով զժողովուրդն արտաքոյ եկեղեցւոյն, և զգուռն ընդդէմ ձգելով. և ոչ միայն, այլև անմտաբար 'ի բամբասանս բերին ոմանց եկեղեցեաց, և 'ի մերս բարեզարդ կարգաւորութիւն :

Եւ արդ՝ մի ոք վայրապար և անխորհուրդ համարեսցի զքահանայականն զգեստ. զի որպէս 'ի հնումն առ Առվակէսիւ նկարեցաւ խորհուրդ սրբոյ պատարագին նախօրինակօք, և 'ի նորումս կատարեցաւ 'ի ՔՌ, նոյնպէս և քահանայք հնոյն՝ նորոյ քահանայութեանս էին տիպք, և պատմուձանն Ահարովի՝ նորոց քահանայիցս զգեստուցն յապացոյ : Օ որ և սուրբ առաքեալքն գործակցութք հոգւոյն սրբոյ կատարելապէս յարդարեցին զլումն եկեղեցւոյ, և յամենայն տեղիս ձեռնադրեալ կարդէին քահանայս և սարկաւագունս, և պատուիրէին ներքին և արտաքին մաքրութեամբ սպասաւորել փրկական խորհրդոյն, որ և ընդ ընաւ աշխարհամեծազարդ ողայծառութք զարդարեալ լինէին եկեղեցիք ընդհանուր ազգաց քրիստոնէից, պայծառագեստ վայելութեամբ սպասաւորեալ սրբութեանցն : Այս ևս առաւել և հայաստանեացս ազգի եկեղեցիք, 'ի սուրբ Առաստառը մերմէ սկըսեալ մինչեւ յաւերումն աշխարհն 'ի հիմանց : Ի այս այսոցիկ բարւոյ աւանդութեանց հակաւակելոյ առաջնոց հարցն սրբոյ, ոչ այլ ինչ է պատճառ՝ քան թէ տգիտութիւն և ինքնօրէն անձնահաճ կամապաշտութիւն, որք ոչ աեսին զառաջին պայծառութիւն,

թիւնն՝ մինչ ողորմութեամբ տեառն լի էր երկիր ,
այլ 'ի հալածանացս ծնեալ ժամանակի՝ ընդ խըսթ-
նատեսակս նայեցան տգեղութիւն, որովք կապեալ
են ամենայն ուրեք ազգ մեր յաղքատութե՛ որպէս
ընդ երկաթոյ՝ 'ի ներքոյ լծոյ ծաւայութե՛ իւրա-
քանչիւր ազգաց , ուր և իցեն : Ոյք և հարկաւոր
պիտոյիցն կարօտ են ըստ մարմնոյ, թող թէ պայ-
ծառութեան եկեղեցւոյ 'ի խնդիր , և ըստ հոգւոյ՝
ամենեին անշարժք 'ի բարիս, զի ցամաքեցաւ սէրն՝
ըստ տէրունական բանին : Ոչ որպէս յառաջին հա-
լածանացն ժամանակին՝ նոր հաւատացեալքն 'ի
Վ՛ս , յորս այնքան զօրանայր սէրն անյ՝ մինչ զի 'ի
հալածանսն առաւել մեծամեծս և վայելուչս տեսա-
նեմք շինեալ 'ի նոցանէ եկեղեցիս , քան մինչ խաղա-
ղութիւն եղեւ եկեղեցւոյ : Եւ արդ՝ տգիտաց ըզ-
խաւարին զայս տեսանելով անկարգութի՝ որ յաղ-
քատութե՛ և յաւերմանէ , և զբարկութիւնս՝ որ
յայ՝ աւանդութիս և օրէնս կարծելով , և նորին
աղագաւ յանդգնին հակառակել անդամանդ հրա-
մանացն :

Այլ մեր 'ի բաց թողեալ զանիմաստ հակառա-
կորդացն զվիշմունս , հնազանդ եղելոցդ օրինաց
այ՝ 'ի վերայ ասացելոցս և զայս աւանդեսցուք պա-
տուիրան՝ որ վասն այսր իրի խնդրոյ : Ոչ ունել քա-
հանայից յայ և 'ի մէնջ հրաման՝ առանց սուրբ-
ծածկութի պատարագամատուցին զգենլոյ՝ մատու-
ցանել զուրբ պատարագն , կամ աւետարան կար-
դալ , կամ խաչ առնուլ 'ի ձեռս , կամ յայլ ինչ
'ի սրբութիւնսն մերձենալ . և այսոքիկ զորս զբե-
ցաք սակաւուք , և որ նման սոյին՝ արտաքին մար-
դոյս զգուշութիւն , որոց հանդերձեալ են սպասա-
ւորել անդայնոցն :

Կսասցուք և յաղագս ներքին մարդոյն , որ և օրի-
նակ է արտաքնոյն զարդ՝ սորին հոգեւոր պայծա-
ռութեանն զարդու : Ո՞ի ոք 'ի ձէնջ անարժանու-
թե՛ անդային խորհրդոյն սպասաւորեացէ , և կամ
զօք 'ի ժողովրդենէն անքննաբար հաղորդեցուցէ ,
զի մի ընդ Հուդայի , և ընդ խաչահանուացն դա-
տապարտեսցի : Ո՞ի ոք ծածկելով յոգի իւր զգործս

մեղաց առանց Ճշմարիտ խոստովանութեան, և այն պէս մատիցէ՝ 'ի տէրունական խորհրդոյն սպասաւութութիւն, զի մի զբարկութիւնն այ շարժեացէ՝ 'ի վերայ ինքեան և աշխարհին, և 'ի բաց ընկեացի յածային հարսանեացն . քանզի վիաւարատեսակ մեղացն զգեցեալ պատմուման՝ եմուտ յեկեղեցի այ, որ է օրինակ վերին հարսարանին, որ և լսելոց է զահագին բարբառն, “ Ինկեր, զիարդ մոեր այսր՝ զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց ” . և թէ հանկը զդա արտաքս, այս է՝ յարքայութենէն, և կըտրեցէք զդա ընդ մէջ, այս ինքն զհաւատն և զշնորհս սուրբ աւազանին և զքահանայութեն՝ 'ի բաց մերկացուցէք, և մասն դորա ոչ ընդ հաւատացեալս, այլ ընդ անհաւատն լիցի: Ի՞անզի ոչ հաւատաց՝ եթէ մարմնոյ և արեան այ սպասաւորէ, այլ հաց լոկ և գինի համարեցաւ, և վասն այնորիկ՝ անարժանութք ժպրհեցաւ մերձենալ, և առանց խոստովանութեան :

Եշտ արդ աղացէմք, մի որպէս մարմնական ինչ դործ վարկանելով զերկնային խորհրդոյն կատարումն, այլ աշիւ և դողութեամք սպասաւորեցէք անձայնոցն. զի թէ Աերովլէն սուրբ յօրինակն ունելեաց կարօտանայր, մերձենալով՝ 'ի կայծակունն՝ որ 'ի վերայ սեղանոյն, մեզ հողեղինացս և մեղաւորացս՝ քանի մաքրութիւն և զգուշութին պիտոյ է յաղագս առ Ճշմարտութիւն այնը օրինակի մերձենալոյ: Ա ամսն որոյ՝ զմիտս և զգայարանս պարտապան էք պարսպել յամենայն մնասակար իրաց սպասաւորքդ սրբոյ խորհրդոյն յամենայն ժամանակի, առաւել յայնմաւուր՝ յորում յած մերձենալ հանդերձեալ իցէք: Օ ի թէ Աովլսիսի ասացաւ յայ՝ ոչ կոխել մեռեալ մորթովք զտեղին ուր երկեցաւ հուր անձութեն, որքան մեզ արժան է լուծանել նախ զմեռելութիւն մեղաց՝ 'ի մէնջ, և ապա յածայինն մերձենալ խորհուրդ: Օ ի ոչ միայն խօսել ընդ այ ըստ Աովլսիսի կայ մեր առաջի, և կամտեսանել զյետոյմն այ, այլը ձեռ օք շօշափել զանցօշափելին, և ըթամբք համբուրել զսէրն, և բերանով ճաշակել զկերակրին ամենայնի, և 'ի սիրտս ընդունել:

և հոգւով միանալընդ նոյն, և լինել ած չնորհօք ընդ այ միաւորելովն : Ա ասն որոյ՝ զտեսանելիս և զլսելիս և զլեզու և զամենայն անդամն խրատեցեք 'ի բարիս շարժել, և 'ի չարիս անշարժ մնալ, և ողջախոհութք և որբութք յաշխարհական ցանկութեանց, և զրօսանաց զմիտմն ամփոփելով, և ապա յերկնային խորհրդոյն սպասաւորութիւն մերձենայցէք : Օ ի մի 'ի դատաստան անձանց ուտիցէք և ըմպիցէք զմարմնն և զարիւն տեառն ըստ առաքելոյ, այլ 'ի քաւութիւն մեղաց, և 'ի մաքրութիւն հոգւոց, ձեզ և ժողովրդեան ձերում : Եւ մի լիցի՝ որպէս լուաք զոմանց աներկեղ քահանայից՝ որ 'ի քաղաքս բնակեն, եթէ յառաւուտէ մինչեւ ցժամ պատարագին 'ի վաճառափողոցս քաղաքին շրջին 'ի տուրեառութիւն վաճառաց, յորս բազում նետք հարկանին յոգիսն ընդ մուտս զգայարանացն, 'ի տեսանել և 'ի լսել, 'ի խօսել և 'ի գործել զանսպատշան, և անտի դարձեալք՝ մոտանել յանդգնին յեկեղեցիս, և յայլոց քահանայից կազմեալ նշխարաւ՝ առանց սաղմոսաց և աղօթից՝ մատուցանեն զպատարագն : Որոց պատուիրեմք՝ յայսմէետէ, 'ի բաց կալ յայդպիսի աներկեղ և չար սոլորութեց, և նախ սրբել զմիտմն, գիշերոյն և տուննեանն ազօթիւք, որպէս վերագոյնն գրեցաք, և ապա մոտանել յեկեղեցի սուրբ, և յանդիման լինելայ՝ սրբով պատարագաւան :

Վ'ի ոք 'ի քահանայից առանց գիտելոյ զմոստովանութիւն մարդոյ՝ զհաւատոյն և զգործոցն, կամ իւր ինքեան, կամ այլում քահանայի, տացէ նմազհաղորդութիւն մարմնոյ և արեանն Քնի՝ 'ի յառողջութեան կամ 'ի հիւանդութեան, և կամ գիտելով զանարժանութիւն ուրուք՝ տայ յաղաքս մարդահանձութեան զանձային խորհուրդն, ծածկելով այնու զկարծիս չարութեան՝ որ զնմանէ : Օ ի այն պիսին է, որ տայ զսրբութիւն շանց, և առաջի արկանէ զմարդարիտ՝ խոզաց :

Վ'ի ոք 'ի քահանայից պատարագողաց ոխակալութիւն ունելով 'ի սրտին ընդ ումեք, մատիցէ յանձային խորհրդոյն կատարումն, և անընդունելի առնիցէ

զպատարագն առաջի այ, այլ նախ հաշտեսցի ընդ.
 Եղբօրն՝ ըստ հրամանին՝ ՎՌՇի, և ապա եկեալ մա-
 տուցէ զպատարագն : ՚ Այն սահման և՝ ի վերայ
 հաղորդականացն եղիցի . բայց այս օրէնք առ հա-
 մապատիւ եղբարսն է՝ քահանայից առ քահանայս,
 և աշխարհականաց առ աշխարհականս : Իսկ եթէ
 քահանայն ընդ բանիւ արարեալ զոք՝ ի ժողովրդա-
 կանացն վասն պատուիրանազանց լինելոյ յօրէնս
 այ, և նա հապարտացեալ՝ ոչ գայ յուղութիւն, և
 ոչ խնդրէ թողութիւն՝ ի քահանայէ անտի, քահա-
 նայն առանց խղձի մատուցէ զսուրբ պատարագն,
 և ընդ դատապարտութեամք է այն՝ որ ոչ ուղղե-
 ցաւ, և ոչ խնդրեաց զթողութիւն : ՚ Վանզի և
 ՎՌՇ ոչ վայրապար հրամայէ առնել թողութիւն
 տրտմեցուցանողին, այլ եթէ անկեալ առաջի խոս-
 տանայ ապաշխարել, յայնժամ, ասէ, չնորհեսցի առ
 'ի քէն թողութիւն յանցանացն՝ զոր առ քեզն յան-
 ցեաւ : Իսկ եթէ մեղուցեալն առաջի անկեալ քա-
 հանային և խոստանայ գալ յուղութիւն, և քա-
 հանայն յաղագս մարմնական ինչ պատճառի ոխա-
 կալ լինելով՝ ոչ առնիցէ թողութիւն, չէ պարտ
 նախ քան զհաշտելն մատուցանել պատարագ :

՚ Ա և առ քահանայս բազում պատճառս յօդէ
 սատանայ խուղովելոյ ընդ միմեանս, և վիճաբանելոյ,
 և յօխակալութե և՝ ի նախանձու ախտս տանջելով
 զոդին զամենայն ժամանակս, որ և առ տգետս և
 վայրենաբարոյս առաւել զօրանայ : ՚ Ա՝ որ վասն
 յափշտակելոյ ՚ ի ժողովրդենէ միմեանց ագահութե
 ախտիւ, և է՝ որ յաղագս հարստահարելոյ զընկերն
 փառասիրութե աղագաւ, և յայլ ևս յոլսվագոյն
 ատելութե սլատճառաց, լուծանի ՚ ի նոցանէ սիրոյն
 պատուիրան, և ՎՌՇի աշակերտութեն նշան, առ
 որս ասաց, թէ « Զայսմ ծանիցէ աշխարհ զձեզ՝
 եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս »:
 Որոց և մեք զառաքելականն աւանդեմք պատուի-
 րան, եթէ « Շաբեգակն ՚ ի վերայ բարկութե ձերոյ
 մի մոցէ, և մի տայք տեղի սատանայի » . այս ինքն՝ զի
 թէ զիսաղաղութիւնն զոր ետ ՎՌՇ աշակերտացն,
 և նոքօք մեզ, փութայ հանել՝ ի ձենջ խուղովարան,

և զիսուվութիւնն իւր փոխանակ խաղաղութեանն սերմանել՝ ի միջի ձերում, մի տայք նմա տեղի՝ երկար ժամանակաւ բնակել՝ ի յոգիս ձեր, զի մի ըզտաձարդ այ՝ որ 'ի ձեզ՝ չարին առնիցէք բնակութիւն, ատելութեն և ոխակալութեն։ Այլ ընդշարժել բարկութեն եռանդան՝ բոցոյն՝ որ 'ի փշմանէ անտի նորա բորբոքի, չի ծուցէք զնա խաղաղարար ջրով հոգւոյն նախ քան զմտանելարեգականն, որպէս զի խաղաղասէր լինելովն՝ որդիք այ լինիջիք, ըստ երանութեանն խոստման, զշմարիտ որդւոյն այ զգործ արդեամբք ՚ի ձեզ կատարելով, այն՝ որ արար խաղաղութիւն յերկինս և յերկրի արեամբ խաջն իւրոյ։

Իսկ եթէ ոք 'ի քահանայից խուվելոց ընդ ընկերի՝ սիրէ զատելութիւն քան զսէր, և զիսուվութիւն քան զխաղաղութիւն, և ոչ լուծանէ զտրտմութեան պատճառն, և հաշտեսցի ընդ եղքօր իւրում 'ի խոնարհել միոյն և 'ի իննդրել զհաշտութի, մի իշխեսցէ քահանայադորձութի առնել, որչափ զգեն տրտմութեն և բարկութեն յինքն բնակեցուցանէ. զի «Օ ի՞նչ հաղորդութի է լուսոյ ընդ խաւարի, ասէ առաքեալն, կամ ՚ի՞նի ընդ Ռելիքարյոյ»։ ՚ի անզի գրեալ է, թէ որպէս որ զսէրն ունի զած յինքն բնակեցուցանէ, զի ած սէր է. նոյնպէս և որ զատելութիւնն ունիցի՝ զստանայ յանձն իւր դարմանէ, զի կերակուր է նորա ատելութին. որպէս և ամենայն գործք չարեաց։ Ա ասն որոյ ամենայն ոք 'ի ձէնջ որքան ատելութեն ախտիւտայ տեղի սատանայի ընդարձակագոյն յինքեան, ՚ի՞նի մարմնոյն և արեանն ոչ է արժանի բնակութեան. և թէ ոխակալութեան և նենդութեն հոգւով յանդկնի առնուլ զնա, նման լինի զուդայի մատնչի, որ յետ պատաւոյն՝ ապա եմուտ 'ի նա սատանայ։

Հւ արդ աղաչեմ զամենեսեան զձեզ՝ դժուարաշարժս լինել՝ ի վիճաբանութիւնս և 'ի կոիւս, և գիւրաշարժս 'ի հաշտութիւն և 'ի խաղաղութիւն։

(1) Հինգ օր. Եռանդ բայոյն։

Եշտ մի ոք որ զօրաւորն է՝ ի մարմնական յառաջաւ գիմութիւնս՝ ջանայ զրկել զմնկերն և անիրաւել, զի մի զայն՝ որ առնե իրաւունս զրկելոց՝ զած, դաւ տաւոր և դատախազ իւր կացուցանե, և զոր 'ի յանցաւոր կեանս զրկեաց, 'ի յանանցն վաշխիւ հատուցանե :

Վայլ աւագագոյնքդ՝ 'ի ձենջ և հաստատունքդ յիւ մաստութի, շահեցարուք զկրսերագոյնսն և զպակասամիտսն, ներող լինելով առ նոսին և երկայնամիտ, որով և վարձս ընկաւ լիք յայ ՚ի շահել զեղբարսն : Իսկ կրսերագունիցդ պատուեր տամբ ըզխոնարհութիւն և զչնազանդութիւն ցուցանելաւագագունիցն, և իմաստնոց քահանայիցն : Եշտ յայսպիսի բարեկարգութի լինելով ձեր՝ անուանն այ փառաւորութեան լինիք պատճառք առ արտաքինսն, և ժողովրդեան ձերոյ՝ բարեացնախանձու : Իսկ եթէ 'ի վիճմունս, և 'ի հակառակաբանութիս և 'ի հայհոյութիւնս միմեանց տեսանեն զձեզ, յորս են բազումք՝ մանաւանդ թէ ամենեքեան՝ բայց 'ի սակաւուց, անունն այ վասն ձեր հայհոյի 'ի տեսողացն արտաքնոց, և ժողովուրդ ձեր առաւել խոտորին՝ ի պատուիրանացն այ, և զպատիժ դատաստանին դուք կրէք զմիւրելոցն ձերով պատճառաւ յուղիդ ձանապարհէ անձային օրինայցն :

Ո՞ն ոք 'ի ձենջ սիրեսցէ զկուրութիւն տգիտութե քահանայական ուսմանց յաղագս ծուլութե, կամ աշխարհական զբաղմանց + այլ թէ և ոչ ամենեցուն ամենայն չնորհօք կատարեալ լինել հնարէ, զոր և անձային օրէնքն պահանջեն 'ի քահանայից, սակայն 'ի հարկաւորսն պարտին անթերի լինել. այս ինքն զեկեղեցական զիրս ուղիղ ընթեռնուլ, և զմանը ուսմունս ձայնաւորացն պաշտել յեկեղեցիս . և ապա գալ՝ 'ի ձեռնադրութիւն քահանայութեան : Ի այց լսեմք զոմանց սուտ քահանայից, զի ոչ միայն յայլ ուսմանէ են տգետք յաղագս հեղդութեան, մանաւանդ թէ վասն անհաւատութե, այլ և զսաղմոնն Պաւթի ոչ դիտեն բովանդակ, առանց որայ՝ զնոսին զհարիւր և զյիսունան խօսել բերանով ընդ այ, ոչ մատչի պատարագ ըստ աւան-

դութեան կամսնի հարցն սրբոյ ։ Ամանք և ոչ
պրանս աղօթից սրբոյ պատարագին դիտեն՝ի բե-
րան , և սուտ պատարագաւն խաբել կարծեն զան-
խաբելին ած , և զմարդիկ , և զհոգիս ննջեցելոցն ,
առ աչս մարդկան կեղծաւորելով . որոց դատաս-
տանն առաւել է քան զամենայն մեղաց՝ առաջի ած .
որբ և ոչ իսկ են արժանի այլ ևս մատուցանելոյ
պատարագ , թէ և յետյանդիմանելոյն առնուցուն
՚ի բերան : Այլ թէ կամիցին զոգիս իւրեանց փըր-
կել՚ի դատապարտութենէ՝ մեծաւ ասլաշխարու-
թեամբ , թէ արդեօք քաւեսցին յառ ած մեղա-
նացն :

Ո՞ի ոք ՚ի քահանայից վայրապար և առանց մե-
ծի զգուշութե՝ կատարեսցէ զսուրբ մկրտութիւնն ,
իբրև զաշխարհական ինչ գործ համարելով , և մի
լնդ ածային բանիցն՝ բանս ծիծաղականս և կա-
տակերգութիւնս խառնեսցէ , որպէս լսեմք զոմանց
տգիտաց և աներիեղից՝ զի առնեն , զի մի ինքեանց
դատապարտութեան լինիցի այն պատճառ , և ե-
րախայիցն անմեղաց՝ թերակատար զշնորհս հոգւոյն
սրբոյ լնդունելոյ : Այլ որպէս զսուրբ պատա-
րագն՝ այնպէս երկիւղիւ կատարեցէք զպաշտա-
մունան , և զընթերցմունս ածաշունչ բանիցն , և
զամենայն կարգաւորութիւնսն սուրբ մկրտութեն
խորհրդոյ . և եթէ այսպէս առնիցէք՝ հաւատա-
ցէք , զի որպէս էջ հոգին սուրբ՝ ՚ի վերայ փառակ-
ցին իւրոյ ՚ի Հորդանան , նոյնպէս և ՚ի վերայ ամե-
նայն ուղղափառ հաւատով մկրտելոց իջցէ ; զորս
և յորդեգրութիւն ած հայր վերակոչէ չնորհօք՝
որպէս զընութեամբ որդին , և լինիք գուք արբա-
նեակք , և սպասաւորք հոգւոյն սրբոյ՝ յածարարու-
թեանն չնորհ , մանաւանդ թէ իբրև զմանկաբարձս
որդւոցն այ , ձեռօք ձեր կատարելով և բաւնալով
՚ի մօրէ նոցին՝ յաւաղանին ծոցոյ :

Եւ մի ոք ՚ի քահանայից յետ հաց ուտելոյ՝ իշ-
խեսցէ առնել մկրտութիւն առողջից մանկանց ,
բայց թէ յերկեղէ մահու : Այլ նախ կատարեսցէ
զմկրտութեանն գործ , և ապա մատուսցէ զպատա-
րագն սուրբ՝ յորմէ և զմկրտեալն հաղորդեցուոցէ :

Եշտ մի յանհաւատից արանց, կամ կանանց, որք ոչ
են երկրպագուք ՎՌՇի, առցե ոք կնքահայր ման-
կանց մլրտելոց. զի զոր ինքեանք ոչ ունին՝ այլում
զիարդ կարեն տալ, զխոստովանութին՝ որ 'ի սուրբ
երրորդութիւնն, յորժամ պահանջլէ քահանայն 'ի
դէմն մլրտելոցն զդաւանութին հաւատոյն : Ա ան-
որոյ մի տայք տգիտաց աշխարհականաց յաղաղս
մարմնական՝ ինչ սիրելութեան զայս առնել. և
եթէ յանդգնին՝ դուք մի յանձն առնուք զմլրտելն,
զի մի թերի առնից էք զայն՝ որ մլրտինն՝ 'ի կատար-
մանէ, և մի ծիծաղելիս զմեծ խորհուրդն անդային
կացուցանէք առաջի անհաւատիցն . որ թէ հնար-
էր՝ և ոչ միում 'ի նոցանէ արժան էր լինել մերձ
յաւաղանն սուրբ 'ի մլրտութեանն ժամու, զի մի
վասն հակառակացն ճշմարտութեան՝ հոգին սուրբ
հեռասցի 'ի մլրտելոցն : Եշտ մի ոք 'ի ձէնջ ըստ հար-
կի պահանջեսցէ զինս արծաթոյ անգին չնորհին
վասն մլրտութեանն, կամ մահու հաղորդ տալոյ,
այլ որ ունին և տան սիրով որպէս զնուէր եկե-
ղեցւոյ առելք, և որ աղքատ լինին՝ մի բռնա-
դատէք :

Ասեմք և յաղագս զծնունդս այլազգեացն մլրտելոյ,
որ սովորութեամբ բերի 'ի հին ժամանա-
կաց, և է ընդդէմ հրամանին ՎՌՇի, որպէս ասաց՝
“ Ոչ տալ զսրբութիւն շանց ” . զոր արժան էր խա-
փանել, և ոչ թօղացուցանէլ. զի զի՞նչ օգուտ է
այլով բերանով խոստովանել զՎՌՇ, և զգենուլ
զնա մլրտութեամբն՝ մինչ անքանն է և անզգայ, և
յորժամ զարգանայ հասակաւ՝ մերկանալ զարձեալ
ուրացութեամբն, և լինել հայհոյիւ անդային խոր-
հրդոյ սնօրէնութենորա՝ ըստ գենին իւրեանց,
փոխանակ փառաբանիչ լինելոյ : Որով առաւել
դատաստանաւ դատելոց են յաղագս եղծանելոյ
յինքեանս զտիրական պատկերն, զոր վերստին նը-
կարագրեաց 'ի նոսսա աւաղանն սուրբ, քան զամե-
նեին ոչ դրոշմեալոն . այլ զի դոյ 'ի նմա մամն բար-

(1) Երկու օր . յաղագս մարհական ընլաւիրութեան :

(2) Լին օր . մահու հաղուբու դաշտ :

ւոյ, այսինքն՝ զի՞ ի մկրտելոց անտիքազմաց՝ ի տղայաւ կան հասակին հասանէ վախճան մահու, և այնոքիկ ոչ ընդ կորուսեալմն՝ այլ ընդ փրկեալմն արժանաւորին փրկութեան, և զի զսակաւմն զայնոսիկ յափշտակելով՝ ի սատանայէ՝ խառնեմք ՚ի գունդն՝ քնի, վասն այնորիկ ոչ իրաւունս համարեցաք զամենակին խափանելն։ Ի՞այց զայս միայն վասն սորին իրի պատուէր տամք քահանայիցդ, մի վասն ագահ հութեան ախտի յորդորել զնոսին, և կամ յօժարութեամբ ընդունել, այլ դժուարաւ և՝ ՚ի հարկէ բերիլ յայնպիսի իրս։ Օ ի թէ հաստատուն մնալոց էին ՚ի հաւատո՞քարի էր յորդորումնն և յօժարութիւնն ձեր. բայց զի ապրեալքն ըստ մարմնոյ՝ անդրէն ընդ ջուրսն են անցանելոց, և՝ ՚ի լուսակիզն յօդեաց՝ ՚ի սեռութիւն այծից փոփոխելոց, ըստ սրբոյ լուսաւորցին մերոյ տեսլեան, նորին աղագաւաննօդուտ է ջանն՝ որ վասն նոցին, զի շահն սակաւ է, և վնասն յոլով։

Ո՞ի ոք ՚ի ձենջ գաղտ պսակ դիցէ ումեք, այլ եթէ ծնողս ունիցի, և միաբան իցէ և ոչ բաժանեալ, գիտութեամբ և կամաւ նոցին եղիցի։ Իսկ եթէ ոչ ընդ ծնողօք՝ հասարակաց տեսութք յայտնի դիցի պսակն, զի վկայեսցի յամենեցունց՝ թէ ուղիղ է, և ոչ ընդգէմ օրինացն այ. որով և երդոցն ձայնք և նուագարանացն՝ զնոյն նշանակեն, իբրև թէ վկայս պսակելոցն զամենեցունց լսելիս և զտեսանելիս կացուցանելով։ Իսկ գաղտնին՝ անվըկայ է և անհաստատ, և ոչ ընդ օրինօք, յորմէ պատուէր տամք ՚ի բաց հրաժարել, և ոչ յանդըգնել յայսպիսի իրս վասն ագահշութեան։

Ո՞ի և կնաթողաց արանց՝ կամ այրաթողաց կանանց՝ առանց կանոնական հրամանին դիցէ ոք պսակ, զի մի լուծջլք դուք ՚ի քահանայական կարգել ըստ կանոնաց, և եղեալ պսակն քակտեսցի. և եթէ բռնանան և ոչ բաժանին՝ ընդ պունիկս համարեալ լիցին։

Ո՞ի և այնոցիկ՝ որք առեանգստ ասին, գնիցէք պսակս. զի հակառակ օրինաց այ է, և բիւր չարեաց պատճառք՝ ՚ի սատանայէ շարժեալք ՚ի մօլե-

կան ախտան . և բազումք այն իսկ են՝ որ յետ սուտ պսակին՝ յորժամբ յագին դիւական տուփմամբն՝ մեծաւ ատելութեամբ բաժանին՝ ի միմեանց , և պսակադիրքն այսպիսեացս՝ կցորդ չարեաց նոցին լինիցին :

Ո՞ի և տղայոց անմեղաց՝ յաղագս ագահութեան հայրենի ժառանգութեն , կամ վասն պյլ ինչ պատճառի պսակ դիցէ ոք՝ ի քահանայից , զի բազում վնասք լինին յայնցանէ՝ ի պատճառս բաժանման յետոյ՝ ի միմեանց : Այլ ժամանակ պսակի է՝ ի զարդանալ արութեն հասակին , ի հնգետասանին ամաց լրումն առնն , և յերկոտասանին՝ կամ ևս առաւել կնոջն , որպէս զի կարող լինիցին ըստ բանաւորաց՝ հաճութեամբ զուգել ընդ միմեանս , առ՝ ի հաստատուն լինելոյ զուգութեանն , և մի ըստ անբանից առանց կամաց և յօժարութեան՝ անհաստատ զոլով , և առ ժամայն պատահումն : Եշ այրն աւագագոյն պարտ է լինել ըստ ժամանակի քան ըզկինն , որպէս զի դամ նախ ստեղծեալ այ , և ապա զիշւայ :

Ո՞ի ոք՝ ի քահանայից՝ ի բռնութէ բռնաւորաց՝ առանց կամաց առնն և կնոջն պսակ դիցէ , որպէս լսեմք՝ ի կողմանս հայաստանեաց լինել , որ ընդ իշխանութեամբ այլազգեաց են : Օ ի պսակն այն անհաստատ է և լուծանելի , և պսակադիրքն ոչ առանց պատժոց , թէ և ակամայ է գործն , և կաշուատուքն բռնաւորաց վամն ջատագով լինելոյ նոցին յանիրաւ գործն յայն՝ առաւել դատապարտութեն և անիծից են արժանի , զի զօրէնս այ և զդատատանս եկեղեցւոյ լուծանել փութան բռնութեամբ աւագաց : Ա ասն որոյ՝ առանց խղջոյ է լուծումն այնպիսւոյ պսակին . քանզի չէ ըստ հրամանին այ , այլ՝ ի մարդկային բռնութենէ :

Ո՞ի ոք համազգեաց , որոց արեան մերձաւորութիւն իցէ , պսակ օրհնութեան դիցէ . այլ մինչեւ՝ ի յերկուց կողմանցն զարբորդ ազգին գլխաւորութիւնն կատարեալ ունիցին : Եշ թէ զինչ պատճառաւ զըորեակ թիւն կանոնադրեցին հարքն սուրբք սահման ամսւանութեան՝ ծանուսցուք զի գիտիցէք :

Վանզի քնութիւն մարմնոյ 'ի չորից տարերաց
գոլովէ, յիրաւի և մարմնական ազգակցութիւնն
մինչև 'ի չորրորդ թիւն ժամանէ, որ է այսպէս : 'Ի
միոյ հօրէ երկուց եղբարց բաժանեալ, հաւասար
ունին յինքեանս զհօրն գոյացութիւնս . իսկ առ 'ի
նոցանէ ծնունդքն՝ զկէս արեան եղբայրութեանն .
և երրորդ ծնունդն՝ որ եղբարցն որդւոց, զկիսոյն
կէս արեանն միայն . իսկ չորրորդ ծնունդն՝ որ 'ի
նոցանէ, զըրեակ մասն արեանն մնացելոյ : Եւ այս
էս սահման և կէտ արեան մերձաւորութեան : Եւ
քանզի ամենայն փոյթ այ և ածայնոցն՝ յաղագս սի-
րելոյ է զմիմեանս մարդկան, վասն այնորիկ իրա-
ւունս համարեցան որք հոգւովն օրինադրեցին, զօ-
տարացեալմն 'ի միմեանց միանալ սիրով՝ ամուսնու-
թեանն կապակցութեամբ : Իսկ զմերձաւորսն ա-
րեամբ՝ բաւական վարկան համազգութքն միայն
ունել զհալորդութիւն սիրոյ առ իրեարս : Եւ այս
էս առաջին պատճառ՝ ոչ տալոյ թոյլ համացեղիցն
ամուսնութեան . են և այլք յոլովք, զորս իմաստ-
նոց թողաք քննել :

Եւ արդ՝ որ այսպիսի ընտրութք ըստ օրինայն
այ լինիցի պսակն, որպէս և զրեցաք, մի յայլում
ժամու դիցէ զայն քահանայն, բայց յառաւօտէ ա-
ւուրն մինչև ցժամ ձաշցն . և կերեալ և արբեալ
զոք՝ մի թողուցուք յեկեղեցին, և մի յանառակ
կանանց կամ յարանց, որ յայլում ժամու չեն ար-
ժամի եկեղեցւոյ, զի մի պղծեսցի նոքօք տաճարն
այ, և աղտեղասցի պսակն օրհնութե : Եւ 'ի ժամ
կատարելոյ զսուրբ պսակներդք գուսանացն լւեալ
դադարեսցէն, մինչև ելցեն յեկեղեցւոյն, զի մի
դիւական երգքն խառնեսցին ընդ ածային երգոցն :
Եւ 'ի բուն բարեկենսդանին օրէ սկսեալ՝ մինչև ցլ-
կատարումն պահոց շաբաթուն՝ որ յետ պենտակո-
տէին է, մի ոք 'ի քահանայից տգիտութեամբ պսակ
դիցէ ումեք, և ոչ յամենայն կիւրակէս տարւոյն՝
որպէս հաստատեցին կանոնաւ սուրբ հարքն առա-
ջինք : Վանզի պահոց քառամնորդացն աւուրք՝ նգոյ
և տրտմուել է, և խորհուրդ չարչարանաց տեառն,
և ոչ դինարբութեան և ուրախութեան հարսա-

նեաց : Խակ յինունքն և կիւրակէքն ունին զօրինակ
երկնաւոր փեսային ՎՌՇի հարսանեաց և հարսին
եկեղեցւոյ , որ լինելոց է 'ի հանդերձեալ աշխար-
հին՝ յորժամ խառնեալ միանան ազգ արդարոց
մարդկան ընդ ինն դասս հրեշտակաց , զոր և անուն
խսկ աւուրցդ յայտ առնէ , լինունք վերակոչելով ,
որով և զհաւատացեալս ամենայն՝ մանկունս առա-
գաստի հարսանեաց անուանեաց տէրն , որոց հրա-
մայէ՝ ոչ պահել որչափ զիիեսայն ընդ ինքեանս ու-
նիցին . որ են աւուրք յարութեան նորա մինչեւ 'ի
վերանալ նորին յերկինս : Ա ամն այսր պատճառի՝
ոչ պատշաճ համարեցան հարքն սուրբք 'ի հոգեոր
հարսանեացն օրինակի աւուրմն՝ յորում ասացաւ 'ի
տեառնէ ոչ արանց կանայս առնել , և ոչ կանայք
արանց լինել զմարմնականս զայս կատարել հար-
սանիս , որ է ախտաւոր և ծննդական :

Եւ որոց 'ի հարսանիսն երթիցեն քահանայք՝ զայս
խրատ պատուիրանի աւանդեմք : Ո՞ի յապաղել
անդր ընդ գինարբու աշխարհականացն մանկունս ,
յորում յոլովս մեղանչեն անպատրաստքն՝ որք դե-
գերինն 'ինմա 'ի տեսանելն 'ի լսելն և 'ի խօսել զան-
ուղղայս . այլ յորժամ զբաւ լինիցի կերակրոյն , և
մինչ յերիս միայն արբումն բաժակի՝ յառնել վաղ-
վաղակի 'ի սեղանոյ անտի , զի մի ընդ գինեմոլսն
յարբեցութեան ըմբունեալ՝ այսն լինիցի արտաք-
նոց տեսողաց , ոչ միայն ինքն , այլ և ամենայն քա-
հանայք միովն : Եւ ծանրագոյն ապաշխարութք ,
թէ արդեօք քաւեսցէ զարբեցութեն մեղս , վերըս
տին արժանի լինել քահանայագործութեան :

Ո՞ի 'ի քահանայից զստանայական յանցանս
յինքեան ցուցցէ , այն՝ որ հակառակ եկաց այ և
կործանեցաւ , և ընդդիմակաց լինիցի եպիսկոպո-
սին իւրոյ 'ի բանս կամ 'ի գործս , որպէս Լորիս և
Դարդան Ո՞ոլսիսի և Վհարովնի , զի մի զնոցին կոր-
ծանումն ընկալցի յայ . մանաւանդ այնոքիկ՝ որք
յանդգնին կապալս յարուցանել 'ի վերայ եկեղեց-
ւոյ , կամաճեցուցանել զյառաջազունից եղեալսն ,
և այսու պատճառաւաւ արտաքսեն զեպիսկոպոսունս
յաթուոց բռնութեամբ այլազգեաց , և ինքեանք

լինին հրամանատարք ժողովրդոց, և կապալատուք փոխանակ նոցա : Որք անձամբ զանձինս՝ ՚ի ներքոյ առնեն աններելի գատաստանացն այ, և անիծից գատապարտութեան : Շայնալիսիքն ոչ են արժանի՝ ՚ի կեանս իւրեանց քահանայագործուի առնելոյ, և ոչ ՚ի մահուն՝ հաղորդի, կամ քահանայական թաղման :

Դարձեալ, մի ոք՝ ՚ի քահանայից կամ՝ ՚ի ժողովը դոց զեկեղեցւոյ գատաստան՝ առ մարմնական իշխանս գատեսցի կամ առ սյլազգիս կամ առ քրիստոնեայս, զի մի գատապարտեսցի յառաքելսական և՝ ՚ի կանոնական հրամանացն : Որպէս և գրէ Պաւուզոս առ կորնթացիսն, թէ « Իշխէ՞ ոք՝ ՚ի ձէնջ, եթէ իրք ինչ իցեն ընդ ընկերի իւրում, գատել առաջի անիրաւաց, և ոչ առաջի սրբոցն : Եւ հարքն սուրբք՝ ՚ի կանոնս իւրեանց՝ լուծանել հրամայեն ՚ի քահանայութենէ՝ որ զայս առնեն :

Դարձեալ՝ մի ոք՝ ՚ի քահանայից հոգաբարձու քաղաքի կամ գեղջլ լինիցի, կամ գաւառապետ աշխարհական իշխանաց, կամ զրող հարկաց և սակից, կամ յայլ ինչ գործակալութիւն աշխարհի լինելով։ Կանզի անկարելի է ըստ տէրունական հրամանին՝ երկուց հակառակ տէրանց ծառայել, և հաճոյանալ տան այ՝ որ է եկեղեցի այ կենդանւոյ, և տան աշխարհակալաց : Ա ամսն որոյ՝ ընտրեսցէ այնալիսին՝ ՚ի միոյն՝ ՚ի բաց կալ, կամ յաշխարհի հոգաբարձութենէն, կամ՝ ՚ի քահանայական գործոյն : Խակ եթէ ընդ աշխարհական հոգոցն յանդգնի և զքահանայական պատիւն ունել, և զտեսընութի ժողովրդոց, բռնութիւն է այն, և ոչ հրամանաւն այ և մեր, որ և գատելոց է այնպիսին ընդ կրկին յանդգնութեն :

Լսեմք զոմանց քահանայից՝ ձիավարժս լինել և զէնս առնուլ ըստ զինուորաց, և՝ ՚ի խրախնանութիւնս խաղուց ձիընթացից ընդ նոսին արշաւել երիվարօք՝ ՚ի յորս երէոց, և՝ ՚ի նետաձգութիւնս, և յամենայն ինչ յայսպիսիս, որ նոցայն գործոյ է անկ և ոչ եկեղեցւոյ սպասաւորաց, զի զէն զինուորութեն մերոյ ոչ է մարմնաւոր, որպէս հրամայէ առաքեալ, այլ հոգեւոր և անձային, որովք պատերազմիմք՝ ոչ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ

իշխանութիւնս և ընդ պետութիւնս, ընդ այս չարութեան՝ որ 'ի ներքոյ երկնից : Ա ամս որոյ աղաւեմք՝ 'ի բաց լինել յայսմհետէ 'ի յանկարգ սովորութենէ աստի, և բայց թէ 'ի ձանապարհի՝ եթէ 'ի հետիոտս և թէ երիվարաւ՝ առնուլ զէնս, յաղագս երկեղի ինչ եղելց կարծեաց, և այն՝ պարկեշտութեամբ, և ոչ ըստ զինուորութեան կարգի՝ կապարձիւք, և կազմեալ սուսերաւ : Վայլ ոչ ևս է արժան առնուլ զէնս կարգաւորաց, կամ արշաւանս առնել երիվարօք՝ ըստ մանկական բարոյից, 'ի բամբասանաց պատճառս տեսողաց : Օի զորս խրատէ Պաւոս զզէնն լուսոյ զգենուլ, այս ինքն զուղիղ հաւատս և զգործս բարեաց, և նոքօք կռուել ընդ բնութեանս մերոյ թշնամոյն, չէ արժան զիսաւարայինս զայս զէն ստանալ յանձին, և պատերազմել սոքօք ընդ համազգեաց մերոց մարդկան, կամ խոցոտել զանբանից կենդանեաց հոյլս, և կամ սիդաքայլ երիվարօք յօրանալ, բայց թէ 'ի տկարութէ : Վահանդի յայսցանէ և 'ի սոյնպիսեացն՝ արդելուն զմեզ անձային պատուիրանքն :

Վահանայ, եթէ զոք 'ի ժողովրդենէ իւրմէ՝ վասն պատուիրանազնց լինելոյ՝ ընդ բանիւ առնիցէ, և նորա յամառեալ մնայ 'ի յանցանսն, և ոչ դառնայ, այլ ոք 'ի քահանայից անտի մի իշխեսցէ ընդունել զնայեկեղեցի իւր, որպէս սովոր են ումանք 'ի տգետ քահանայից յինքեանս ձգել զայնպիսիմն, և որ զայս առնէ, նա տայ նմա 'ի մեղաց անտի անդարձ լինել, և զանձն իւր կցորդ պատուհասի յանցանաց նորա առնիցէ : Վայլ վասն այսպիսի իրաց եղելոց՝ այս օրէնք հաստատեսցի 'ի միջի ձերում, զի զորոշեալն 'ի միոյ քահանայէ, և ամենայն քահանայակիցն նորին նմանապէս 'ի բաց որոշեսցեն յինքեանց, մինչև զղջացեալ յանցաւորն դարձցի յանուղայ դնացից իւրոց, և առաջի անկեալ ինդրեսցէ զթողութիւն, և ուխտ գիցէ այ ապաշխարել, և այլ ոչ ևս 'ի նոյն սովորութիւն չարեաց անկանել : Եւ յորժամ յիւրոյ քահանայէն այսպիսի օրինակաւ ընկալցի զթողութիւն, յայնժամ և այլ քահանայքն ընկալցին զնա սիրովն այ : Վայս օրէնք ուղ-

ղութեան և 'ի մէջ՝ եպիսկոպոսաց հաստատեսցի .
որպէս զի զառ 'ի միոյ եպիսկոպոսէն բանադրեալն
'ի քահանայից կամ յաշխարհականաց , այլ ոք յեւ
պիսկոպոսաց ոչ ունի իշխանութիւն լուծանելց ,
բաց 'ի բանադրողէ անտի :

Վւանդեմք և զայս ևս պատուիրան ամուրեաց
քահանայիցդ՝ որ ըստ աշխարհի , զի որում 'ի մանա-
կական հասակին հասանէ վախճան ամուսնոյն , թէ
կամեսցի զոգի իւր ապրեցուցանել 'ի մեղաց և 'ի
բամբասանաց , և սուրբ խորհրդոյն արժանաւու-
րապէս սպասաւորել , հրաժարեալ յաշխարհէ՝ ըստ
կանոնական հրամանին՝ 'ի կարգ կրօնաւորութեան
մոցէ : Օ ի 'ի մէջ աշխարհի՝ սովորական ընդելու-
թեամբ լինելով 'ի տեսութիւնս , և 'ի խօսակցու-
թիւնս ընդ կանայս , մանաւանդ խօստովանութե-
նոցին լինել ընդունող ըստ օրինի քահանայութէ ,
անհնար է սրբութք ծառայել այ . ապա թէ ընդ
անձուկ ձանապարհն գնալ դժուարանայ , զլայնն և
զարձակն սիրելով , լուել արժան է նմա 'ի սրբոյ պա-
տարապէն սպասաւորութէ , թէ և 'ի յայտնի վա-
տութիւնս ոչ բամբասի : Քանզի ոչ կարէ յերի-
տասարդական հասակին՝ մաքրապէս սպասաւորել
սրբութեցն . մանաւանդ՝ որ ոչ երկեղածութեամբ
և պարկեշտութք և պահօք և աղօթիւք զգուշա-
նայ անձին իւրում , այլ աներկեղութք վարի 'ի կե-
րակուրս և յըմպելիս , և յամենայն տեսակս ընդ-
արձակ վարուց : Իսկ որոյ մերձ 'ի ծերութի՝ հա-
սանէ վախճան ամուսնոյն , և վստահ լինի յանձն
իւր 'սրբութք և անարատ վարուք և առանց բամ-
բասանաց սպասաւորել այ , որպէս զի գովութիս
ընկալցի 'ի տեսողաց և մի բամբասանս , այնպիսին
կացցէ յեկեղեցւով իւրում որբան ախորժէ :

Հյւ արդ քահանայիցդ առ 'ի խրատ զոր գրեցաք
սակաւուք , ոչ իշխանաբար հրաման տալով՝ այլ
ծառայակցապէս աղաշելով , բաւական լիցի առ 'ի
մէնջ : Իսկ զպակասեալն 'ի մերոցս՝ ունիք հմտա-
նալ կատարելապէս 'ի հարցն առաջնոց կանոնական
գրոց , որովք օրինադրեցին զմանկունս եկեղեցւոյ
'ի փառս այ :

ԱՐ ԻՇԽԱՆՍ ՈՐ ԷՍՏ ԱՇԽԱՐՀԻ :

ՓՈԽԵՍՑՈՒՔ զածային պատուիրանացն խրատ և առ ձեզ՝ որ ըստ աշխարհի ունիք զքաղաքավալարութիւն : Եւ նախ և առաջին առ իշխանութ , որք ՚ի նուաղեալ ժամանակիս տիրէք ՚ի տեղիս տեղիս բազմաց , և կամ սակաւուց զօրաց և գաւառաց : Օ որս աղաչեմք մի անհնաղանդ լինել օրինացն այ . այլ որպէս կամիք զի ծառայք ձեր զկամն հրամանի ձեր ըստ հնաղանդութեամբ և անթերի կատարեսցեն , որք թէ և զմի ինչ ՚ի հրամայելոցն անկատար թողուն՝ պատուհաս կրեն ՚ի ձէնչ , նոյնպէս և դուք՝ վասն զի բնութեամբ ծառայք էք այ՝ ծառայեցէք տեառն երկիւղիւ և հնաղանդութեամբ . զի մի պատուհասիցիք իբրև զապստամբեալս ՚ի տեառնէ , այլ որպէս զմուերիմ ծառայս պատիւ ընդունիցիք յերկնաւոր թագաւորէն :

Եւ արդ՝ առաջին զայս պատուիրան աւանդեմք ձեզ . մի անիրաւաբար վարիք առ հնաղանդեալսդ ծանր և դժուարակիք հարկադրութեամբ ⁽¹⁾ , զոր ոչ կարեն բառնալ , այլ օրինօք դատեցէք , և ըստ չափոյ զօրութեան զիւրաբանչիւր ոք : Օ մտաւ ածէք , զի և ձեր տէր զոյ յերկինս , և ակնառութիւնէ առաջինորա , որպէս և առաքեալ ասէ :

Վի զոք զրկէք ՚ի մարդկանէ , և մի նեղէք զաղքատս և զտնանկս , զի մի բողոքեսցեն առաջի այ վասն ձեր , և ած լսէ նոցա , ըստ իմաստնոյն Վազամնի . զի ասէ՝ թէ և Վի տար պատճառս աղքատին անիծաննել զքեզ , զի մի արարիչ նորա լուիցէ նմա , և հատուսցէ քեզ չարիս :

Վի չար և անիրաւ գործակալս և գաւառապետս կացուցաննէք ՚ի վերայ աշխարհի ձերոյ , զի մի յանիրաւութենէ նոցա՝ զոր գործեն , դուք դատիք յայ հանդերձ նոքօք . այլ զարդարամիտս և զարդարադատս ընտրեցէք , ունել ՚ի վերայ մարդկան զդոր-

(1) Ուս օք . Դժուարակիէն հարիառութիւն :

ծակալութիւն, զի մի զարքունական սահմանեալ իրաւունսն վաստակաւորայն՝ թողեն, վասն սակաւ կաշառոցն զբազումն, և կամ ինքեանք դողասցին. և մի առաւելքան զհրամայեալսն՝ նեղեցեն զնոսա և առցեն: Օ ի անիրաւութիւն են երկու կողմանքն առաջի այ. այլ այնպէս իրաւագատ լինիցին, զի տացեն զկայսերն՝ կայսեր, և զայն՝ այ:

Վի զոք անիրաւութք դատիք, այլ ուղիղ դատաստան արարէք, զի և ձերն դատաստան քաղը ըութեամք լինիցի յայ և մի խստութեամք: Վի վասն կաշառաց, կամ վասն սիրելութե միոյ կողմանն, կամ վասն ատելութե և ոխակալութեան, կամ վասն պատուոյ երեսաց, 'ի միոյն աչառելով զանիրաւն արդարացուցանէք 'ի դատաստանի, և զարդարոյն թիւրէք զիրաւունս, զի մի անիծից օրինացն այ որ յաղագս այսոցիկ՝ պարտականս զանձինս առնիցէք:

Վի անտես առնէք զայրւոյն և զաղքատին զիրաւունսն, յորժամ աղաղակենս առաջի ձեր՝ վասն զրկողաց իւրեանց, այլ դատ արարէք որբոյն, և տուք իրաւունս այրւոյն, որպէս ասէ ած մարդարէիւն, և ունկնդիր լերուք աղաղակի նոցա, և փրկեցէք զնոսա 'ի նեղաց իւրեանց, և զյափշտակեալ ինս նոցա դարձուցէք յանիրաւացն. յայնժամ և ած լսող լինի աղաշանաց ձերոց, և կատարէ զինդրուածս սրտից ձերոց:

Վի որպէս զանբան կենդանիս, որ բնութեամք ծառայք են մարդկան, ծառայեցուցանէք զմարդիկ՝ որ ընդ իշխանութեամք ձերով լինին՝ 'ի գործիստ և անսերելի, որպէս և Փարաւոն՝ զորդիսն Իսրայէլի, և զայն՝ առանց կերակրուր տալոյ նոցին, այլ ներելով և քաղցրութեամք, և սակաւօրեայ ժամանակաւ, և առատագոյն կերակրովք լցուցանել զնոսա յաշխատութիւն անդը, և չափով և մի յանչափս, որպէս զի կարող լինիցին վաստակօք իւրեանց՝ զաղքատանաց կեանս զտանց և զորդւոց իւրեանց լցուցանել, և զարքունական հարկս հատուցանել:

Ո՞ի զվարձս վաստակաւորաց ձերոց հատանեք իշխանաբար, որպէս զայնոսիկ՝ զորոց ամբաստանեն առաքեալքն և մարդարեքն, թէ «Օ քիեան 'ի ձենջ աղաղակէ, և բողոք հնձողացն եհաս յական-ջըս, տեառն զօրութեանց »: Ի՞ւաւական լիցի ձեզ՝ զի վաստակօք նոցա մեծանայք, և առաւել քան զչափն փափկանայք, և այն զի ոչ թէ այլ բնու-թի է նոցա և այլ ձեր, այլ 'ի միոյ կաւոյ և 'ի խառ-նուածոյ: «Քանզի նմանապէս է տերանց և ծա-ռայից, փարթամաց և աղքատաց սկիզբն գալոյ յաշխարհ, և կատարած ելիցն յաշխարհէ: Ա ասն զի զուգահաւասար ամենեքեան ծննդեամբ մտա-նեն յերկիր, և մահուամբ ելանեն 'ի սմանէ: Իսկ մեծութիւն և փոքրկութիւն, բարձրութիւն և խո-նարհութիւն, բարեբախտութիւն և պանդիխտու-թիւն, 'ի մէջ ծննդեանն և մահուանն պատահեն մարդկան, որ են իբրև զերազք զարթուցելոց, որ-պէս 'ի փորձոյ անտի՝ յայտնի է ամենեցուն, իմաստ-նոց և տգիտաց, զի ոչ ինչ 'ի սոցանէ ունի զհաս-տատութիւն:

Ա ասն որոյ մի վասն անցաւորիս կենաց՝ կորու-սանեք զյաւիտենական զկեանմն. զի թէպէտ և «Քա գժուարաւ՝ ասաց՝ մեծատանց յարքայութիւն երկ-նից մտանել, ըստ օրինակի ուղտոյ ընդ ծակ աս-ղան. այլ եթէ զմեծութիւն ձեր ըստ կամացն այ 'ի գործ արկանեք, գժուարինն ձեզ դիւրին լինիցի: Օ ի և Վերահամ մեծատուն էր, և ոչ միայն ար-քայութեանն մտանելոց արժանացաւ, այլ և գոգ-նորա արքայութիւն այ եղեւ և անուանեցաւ, և հանգիստ ամենայն արդարոց: Խոյնպէս և Հովք, և ամենայն մեծատուն արդարքն՝ ըստ ասելոյն 'ի տեառնէ, թէ «Տեսանիցէք զՎերահամ, և զՎ-սահակ, և զՀակովք, և զամենայն արդարսն՝ յար-քայութեան այ »: Վ, յսպէս և գուք՝ եթէ ըստ նո-ցին օրինակի գնայք 'ի ճանապարհս արդարութե: Օ ի ոչ զոք զրկէին, և ոչ զոք նեղէին, ոչ զուրուք զինչս յափշտակէին, և ոչ ումեք առնեին ինչ անի-րաւութիւն, և կամ նենգութի, այլ և յիւրեանց արդար ստացուածոցն՝ զքաղցեալս կերակրէին, ըզ-

մերկս զգեցուցանէին, զհիւրս ընդունէին, զկարօտութիւն կարօտելոց՝ լցուցանէին, նեղելոց բաւական լինէին, և տկարաց զօրացուցիչ, զաղքատն և դժնանկն ոչ միայն ինքեանք ոչ նեղէին, այլ և փըրկէին 'ի նեղաց իւրեանց : Եշտ որպէս ոչ եղեւ նոցա մարմնաւոր փարթամութիւնն արգել և խափան ժառանգելոց զարքայութիւնն երկնից, նոյնպէս և ոչ ձեզ լինիցի պատճառ չարեաց մեծութիւնդ, եթէ կամիցիք արդարութեամբ վարել զդա, որպէս և նոքա . այլ մանաւանդ բարւոյ առիթ լինի՝ ըստ իմաստնոյն, զի ասէ, թէ “ Փրկանք առն մեծութիւն իւր ” :

Իսկ այն՝ որ փոխանակ զիւրն տալոյ կարօտելոց՝ զնոցայն յափշտակէ, և կողոպտէ զնոսա . և փոխանակ հիւրընկալ լինելոյ և հանգուցիչ աշխատելոց 'ի ձանապարհի՝ գողակից լինի գողոց, և դարանակալ 'ի ձանապարհի այնոցիկ՝ որք անմեղութեամբ գնան ընդ ուղիղ ձանապարհս իւրեանց, և զտուն իւր յանիրաւ ստացուածոց անտի ընու, և մեծանալ կարծէ . թողից ասել զանթողլին յանցանք, որք ոչ միայն զինչն յափշտակէն, այլ և զարիւնն անմեղաց հեղուն, զի մի դատախազ լինիցին յափշտակողաց ընչից իւրեանց, և զայն ոչ ածեն զմտաւ՝ եթէ այլ դատաւոր կայ դիտող ամենայնի, յորմէ ոչ կարեն թաքուցանել զգաղտնիս չարեաց իւրեանց, յաղագս այսպիսեաց մեծատանց՝ յիրաւի հրամայէ ՎՌՌ դժուարաւ մտանել յարքայութիւնից . որոց ոչ արքայութիւնն է օթեան, այլ հուր գեհենին . և ասպնջական՝ որդն անքուն, և տարտարուն յաւիտենական : Եշտ այս յիրաւի . զի թէ որք յիւրեանց արդար ընչիցն ոչ կերակրեն ըզքաղեալս, և ոչ զգեցուցանեն զմերկս, և ոչ ժողովն զօտարս, լեկոց են 'ի ՎՌՌ յաւուր դատաստանին՝ եթէ “ Երթայք յինէն, անիծեալք, 'ի հուրն յաւիտենից , . ապա որք աղքատին առաւելքաղի լինին պատճառ, և տառապելոյն՝ մերկութեան, և օտարին՝ կորստեան ընչիցն և անձինն, և փոխանակ զբանտարկեալսն տեսանելոյ և միսիթարելոյ բանիւ և արդեամբք, արձակելոյ անմեղաց՝

բանտից և կապանաց լինին առիթ, ուր արդեօք
իմանի տեղի և չափ տանջանաց այնպիսեացն, ե-
թէ ոչ ընդ սատանայի և հրեշտակաց նորա, զորոց
և զկամն կատարեցին:

Ա առն որոյ աղաչեմ՝ի բաց լինել ամենեցուն
ձեզ՝ի կորստական գործոց յայսցանէ: Իշւ մի ոք
պատճառեսցէ զպատճառոս մեղաց ասելով զի ե-
թէ ոչ զրկեմք, և ոչ յափշտակեմք, զիշխանութի
մեր ոչ կարեմք հաստատուն ունել: Իշւ առ այս՝
առաջին զայս ասեմք, զի թէ անկարելի էր որոց
զիշխանութին ունին՝հաճոյ լինել այ, ապա զիարդ-
բազումք՝ի թագաւորաց և յիշխանաց գովելիք ե-
ղեն այ և մարդկան, որք և յիշատակին՝ի գիրս
սուրբս: Դարձեալ, թէ և անհնարելի էր՝ ըստ ա-
սելոյ ձեր՝ առանց զրկանաց իշխանութիւն վարել,
ապա որ իմաստունն է՝ փախչել արժան էր յանցա-
ւոր իշխանութիւննէն, և ոչ վասն այնորիկ՝ անանց
տանջանօք ընդ սատանայի տանջիլ: Շայց ոչ է
անհնարին առանց անիրաւութեն վարել զիշխանու-
թիւն, այլ դիւրին և հեշտալի է, որք սիրեն և
կամին. և մեք վկայեմք առաջի այ, և երաշխաւոր
լինիմք ամենեցուն: Օ ի եթէ ոք զտուն իւր մաք-
րեսցէ՝ի զրկանաց, և զիրաւամբք ստացուածս միայն
ժողովեսցէ անդ, թէ և սակաւ թուի թէ իցէ, ա-
ռաւել շահեկան լինիցի և պատճառ հարստութեն,
քան զբազումս անիրաւաբար ստացեալս: Իշւ զայս
իմաստունն Սողոմոն յայտ արարեալ ասէ, թէ
“ Ի՞նէ ծք տեառն՝ի տունս ամբարշտաց, յարկք ար-
դարոց օրհնին,,,: Քանզի սակաւ ինչ անիրաւն՝ըզ-
բազում իրաւամբք ստացեալսն նման հրոյ կիզէ և
ապակամնէ, զի անիծիւք և դառնութեամբ է ժո-
ղովումն անիրաւին՝ի զրկելոց անտի, և ընդ աղ-
քատացն անիծից և այ անէծքն մտանեն՝ի տունս
զրկողաց: Խսկ տուն արդարոյն, զի սուրբ է՝ի զըր-
կանաց, և կերակրիչ է քաղցելոց, ընդ օրհնութիւնս
աղքատացն և այ օրհնութիւնն մտեալ՝ի ծածուկ
և անյայտ՝ զասկաւն բազմացւցանէ, որպէս զսա-
րեփթացի այրւոյն, և զսոմնացւոյն, և զորս տէրն
կերակրեաց յանալատին:

յշ մի ոք յանմուաց և՝ ի մարմնասիրաց զբազում
ինչ տեսանելով զրկողաց և ամբարշտաց, և զսա-
կաւո՝ որոց իրաւամբք ստանան, այպահնիցէ զբա-
նիւք մերովք . այլ լուիցէ այնպիսին անձահօր մար-
դարէին Դաւթի՞ զի ասէ, “ լ աւ է, սակաւիկ ինչ
արդարոյն քան զբազում մեծութիւն մեղաւորաց ”:
“ Այնպէս և որդւոյ նորին Ոողոմնի . “ Դրդարոյն,
ասէ, ամենայն աշխարհ լի է ընչիւք, իսկ ամբարըշ-
տին և ոչ դանկ մի ու յշ դարձեալ . “ լ աւ է, ասէ,
բանջարօք կերակրել հանգերձ արդարութե՛ քան
մեծամեծ զենլեօք՝ անիրաւութե՛ ”: Եշ յիրաւի
է այս . զի որք յիրաւացի և յարդար ընչից իւ-
րեանց կերակրին, ոչ ինչ կրեն պատիժս յայ . իսկ
այնք՝ որ՝ ի զրկանաց, կամ՝ ի գողութէ, և՝ ի յափըշ-
տակութենէ լուն զեղանս իւրեանց, զամենայնն
զոր առատապէս վայելեն յայլոց իրաց, տոկոսեօք
ունին հատուցանել՝ ի դատաստանին աւուր :

Ո՞ի և զպահս հաւատոյ լուծանէք՝ ի ձուկն և՝ ի
գինի իշխանաբար, զի մի ընդ անժուժկալսն դա-
տիցիք : Դարձեալ և զայս ասեմք, զի ստութիւնն
և խաբէութիւնն՝ զոր Դ՛Շ հրամայեաց թէ ի չա-
րէն է՝ ի սատանայէ, թէպէտ և ամենայն մարդոյ
վնասակար է, բայց առաւել մեծամեծաց և իշխա-
նաց . զի փոքրն, վասն զի անզօր է, ջանայ ստութե՛ն
զբան իւր հաստատել և հաւատալի առնել . իսկ
մեծն՝ ի ձեռս իւր է առնելն զոր կամիցի իշխանա-
բար, յորժամ զիրաւունսն արհամարհիցէ : Դար-
ձեալ ռամիկ մարդոյ, եթէ ստութիւն ինչ խօսի, և
թէ այլ ինչ վատթար իրս գործէ, ոչ լինի այնքան
յայտնի, և ոչ հրապարականախատ լինիցի : Իսկ
զմեծին և զփոքր մի սխալանքն՝ ի հայհութիւն և
’ի թշնամանս բարձրացուցանեն մերձաւորք և հե-
ռաւորք, այլ և սիրովքն չարի օրինակ չարութեան
առնուն զաւ՝ ի մեծամեծաց եղեալ պատուիրանա-
զանցութիւնս ինչ : Ո ամն որոյ աղաչեմ, մի եղիցի
առ ձեզ բան խարէութեան և ստութեան, մի առ
ձեր հնազանդեալսն, և մի առ արտաքինմ : Դ յլ
որոց խոստանայք բանիւ զբարիս՝ զնոյն և գործուլ
կատարէցէք, զի այն է հաճոյ առաջի այ և մարդ-

կան, և գովութեան պատճառ ձեզ յամենայն ըերանոյ :

Ղա և զգիսուորաց ձերոց և զամենեցունց՝ որք ծառայենն ձեզ, զսահմանեալ հռոգմն մի պակասեցուցանեք, զի զրկանք մեծ է այն, և անիրաւութիւն : Վանդի որպէս նոքա պարտական են վասն պարգեացն՝ որ ՚ի ձէնջ՝ զարիւնս իւրեանց հեղուլ վասն ձեր, նոյնպէս և դուք պարտիք զխոստացեալ թոշակն նոցին հատուցանել անթերի : Ղշ մի ինչ բռնութեամբ առաւելքան զբաժն կնայք առ նոսա, զի մի յերկեղի կողոպտելոյ, և բանտ և պատուհաս կրելոյ ՚ի ձէնջ անիրաւաբար գաղտնի փախչին, և ուրացողք լինին երդմանցն՝ որ առ ձեզ, և երկու կողմանցդ լինիցին մեղք, նոցա և ձեզ : Ղ յլ եթէ հաւանիք խորհրդակցութեան մերոյ և խրատու, զայս սահման դիք ամենեցուն՝ որք ծառայենն ձեզ . զի որչափ կամք լինին մարդոյ կալ ՚ի ծառայութեան ձերում, հաւատարմութեամբ ծառայեսցեն ձեզ, և առանց նենգութեան . և որ ոք յօժարի ելանել ՚ի ծառայութենէ ձերմէ, յայտնի հրաման խնդրեսցէ ՚ի ձէնջ՝ առանց երկեղի . և դուք մի սաստիւ և բռնութեամբ լինիք արգելող, բայց եթէ սիրով և իւրով կամաւ զայն՝ որ ոչ կամիք դուք գնալ ՚ի ձէնջ . և այլոցն քաղցրութեամբ տոնք հրաման, և եթէ ինչ պարտիցէք, հատուցէք նոցա : Ղ յորժամ այսպիսի իրաւունք տեսանեն ՚ի ձէնջ լեալ, կամ ոչ գնան բնաւ, և կամ թէ գնան փութով դարձեալ առ ձեզ գառնան, և ազատէք զնոսա և զձեզ ՚ի խղձէ երդմնազանցութեանն, և լինի այն մեծ վարձուց պատճառ ձեզ յայ :

Ղարձեալ՝ մի եղլցի ձեզ յօժարութեամբ դիմել յերդմունս յանունն այ, և յաւետարանն սուրբ, և ՚ի խաչ, առանց մեծագոյն հարկի : Վանդի Վանդի հրամայէ յաւետարանին՝ ուր երդումն լինի, թէ ամենեին մի երդնուցուս՝ ոչ միայն յարարիչն, այլ և ոչ յարարածս, ոչ յերկինս և ոչ յերկիր, և ոչ ՚ի գլուխ քո . այլ այնպէս ցուցէք ամենեցուն զձեզ չշմարտախօս լինել, մինչ զի լոկ բանից ձերոց որպէս երդման հաւատասցեն մարդիկ : Ղակ եթէ

ծանրագոյն ինչ հարկ լինիցի երդնը, մի ոք մեղեցէ զանթողլի յանցանսն՝ ուրանալով զերդմունսն, և երդմազանց լինելով. զի առաւել չար է ուրացութիւնն՝ որ յերդմունսն է, քան զայն՝ որ յերկեղէ մահու՝ առաջի անհաւատից ուրանան: «Ի՞անզի այն՝ ի բռնութենէ և յերկեղէ տանջանաց և մահու. և այս կամաւորութեամբ, և վասն սակաւ ինչ կորստական շահի. և է զանազանութիւն սոցա՝ որպէս կամաւ մեղքն և ակամայ:

Եւ ոչ միայն առ հաւատակից քրիստոնեայս պարտ է առանց ստութեան պահել զերդմունսն, այլ և առ այլազգիս. և մանաւանդ առ նոսա առաւել, զի մի անուանն այ և հաւատոյս քրիստոնեութեա պատճառ լինիք հայհոյելոյ ՚ի նոցանէ: «Օ ի թէ կռապաշտ թագաւորին՝ լաքուգոդոնսորայ երդմազանց լինելով Հրէիցն, մատնեաց ած զքաղաքն և զազգն՝ ի ձեռս նորա, քանին ևս՝ ի նորումն պատուհասէ ած զայնոսիկ, որ ստեն և ուրանան զերդմունսն՝ որ առ նոսա: Եւ մի ոք զայն առաջի դիցէ, եթէ վասն զի նոքա ստեն երդմանցն՝ որ առ մեզ, պարտ է՝ զի և մեք առ նոսա զնոյնս արասցուք: Այլ չէ մերս երդւմն և նոցայն հաւասար. զի մերս առ Ճշմարտութիւնն է, և նոցայն՝ ոչ նոյնպիսի: Ա ասն որոյ և մեք սրպէս զծառայս գիտող կամաց տեառն իւրոյ և ոչ արարող՝ բազում ըմպեմք գանս, և նոքա օրպէս զտգէտս՝ սակաւս:

Դարձեալ աղացեմք, մի առ բարկութիւն շարժելով, և ոչ ուղղագատ իրաւամբք, կամ խրատ ինչ առնէք մարդոյ, կամ մահու վճիռ տայցէք: «Ի՞անզի նոր օրէնքս ոչ հրամայեն զայնոսիկ, և հին օրէնքն՝ թէպէտ և հրամայէ, բայց ոչ վայրապար այլ ըստ յանցանացն արժանաւորութեան զիւրաքանչիւրսն դատել՝ ի խրատ և ՚ի մահ: Ա ասն որոյ և դուք՝ որ յիշնանութեանդ էք, թէպէտ և զնոր օրէնքս անկարելի ասէք պահել, զէին օրինացն հրամանս՝ որ վասն այսպիսի իրաց է, կատարեցէք: Խակ եթէ առանց օրինաց դատիք զմարդիկ անիրաւաբար՝ ՚ի սպանումն և ՚ի խրատ, գիտասթիք հաստատուն, զի խնդրելոց է՝ ՚ի ձէնջ ած յաւուրն դա-

տաստանի զարիւն սպանելոցն, և զհատեալ անդամն խրատելոցն :

Կա և զայս ևս պատուիրան աւանդեմք ձեզ, մի լինել վրիժառուք և քինախնդիրք, որով զիշխանսն Խարայելի նախատէ մարգարէն Խսայիաս. այլ ըստ հրամանին Քնի՝ ներող և երկայնամիտ լերուք առամենեսեան, որ մեղուցեալ իցեն ձեզ, զի և դուք ընկալջիք առ ՚ի նմանէ զքաղցրութիւն և զբարեցրութիւն, ըստ ասելցյն, թէ “ Ո՞ի դատիք և ոչ դատիցիք, մի պատժէք և ոչ պատժիցիք . զի որով չափով չափէք, չափեսցի ձեզ ” :

ԽՈՍԻՄՔ ըստ կարգի և առ դասս զինուորացդ ,
որք ընդ ձեռամբ էք իշխանութեց և պետութեց :
Եւ նախ և առաջին զառաքելականն առ ձեզ բար-
բառիմք բան , որ պատուիրէ ձեզ հնազանդ լինել
տերանց ձերոց յամենայնի . “ Ո՞՞ առ ականէ ծա-
ռայել՝ որպէս մարդահաճոյք , այլ միամտութեամբ
սրտիւ որպէս այ : Օ ի և այնմ , ասէ , տէր է հա-
տուցանող . այս ինքն թէ որ հաւատարմութեամբ
ծառայէ զայն , ընդ որոյ իշխանութք անկեալն է ,
թէ և 'ի նմանէ պակասութիւն ինչ լինիցի ինքեան ,
մի ասէ տրտմեսցի , զի ած է որ հատուցանէ նմա-
փոխարէնս բարեայ՝ ըստ ուղիղ վաստակոց իւրոց :
Խակ որ նենգաւոր գտանիցի բանիւ , կամ գործով ,
կամ անձին տեառն իւրոյ , կամ տեղւոյ ամրականի
նորա , կամ ընչից նորին , այ է այն նենգութիւն ,
և ոչ մարդոյ . և յայ ընդունելոց է զվրէժ հատուց-
ման չարեաց իւրոց . որ և 'ի հաւատոյն որոշեալ է
այնպիսին , և չար քան զանհաւատսն է : Վանզի
նոքա թէպէտ և 'ի չշմարիտ հաւատոյ և յօրինաց
այ մոլորեալք են , բայց զհնազանդութիւն տերանց
իւրեանց , և զմտերմութիւն հաստատուն բերեն
յանձինս :

Եւ զի՞նչ ասեմք առ քրիստոնեայ իշխանս ունել
միամտութիւն և սէր , յայտնի և ծածուկ . այլ թէ
և 'ի քրիստոնէից ոք ընդ այլազգուոյ է իշխանութք ,
և 'ի նորին պարգեաց կերակրի և զգենու , զնոյն
հաւատարմութիւն պարտ է ցուցանել նմա , և զա-
ռանց նենգութե ծառայութիւն : Օ ի և յօրժամ
գրէր զայսոսիկ առաքեալն Պաւղոս , թէ “ Ծա-
ռայք , հնազանդ լերուք տերանց ձերոց ” , ոչ եթէ
քրիստոնեայք էին տեարք ծառայիցն , այլ կռա-
պաշտք : Ինայց այսու յայտնի կամեցաւ ցուցանել
հեթանոսացն զշմարիտ օրէնս քրիստոնէից , եթէ
ատելի է օրինաց մերոց նենգութիւն տերանց , և
սիրելի է հաւատարմութիւնն , զի մի բանս հայհոյ-

ութե յօրէնս և'ի հաւատս մեր խօսեսցին, յօրժամ՝
'ի քրիստոնէից զոք տեսցեն նենդաւորս գտեալ առ-
նոսա :

Եւ եթէ կարգիցիք 'ի տերանց ձերոց 'ի գործ վե-
րակացութե, կամ առաքիցիք 'ի տնօրէնութի ինչ
բանի, արդարութք և իրաւամքք՝ առ հնազան-
դեալն վարեցարուք: || ՚ զոք նեղելով անողորմա-
բար արտաքոյ իրաւանց, և մի զոք զբարտելով
անկարեկից բնութք, ցուցանելով զձեղ առ նոսա
օրինօք դահճաց, և մի առաւել քան զհրամայեան
ձեղ առնիցէք, ըստ սրբոյ Ոկրտցին խրատու, այլ
թոշակօքն ձեր բաւականասջիք, և ողորմութեամք
և սիրով գնացէք առ ամենեսեան, զի և դուք ողոր-
մութիւն գտանիցէք յայ:

Եւ մի յաղագս զինուորութեղ արհամարհէալ
զպատուիրանս այ՝ լինիցիք անհնազանդք առաջնոր-
դաց, որք խրատեն զձեղ պահել զպատուիրանս այ,
կամ զառւրք պահս անօրինաբար լուծանէք, կամ
զյափշտակութիւն ընչից աղքատաց, և զանպարտ
արեանցն հեղմունս ոչ մեզս համարիք. զի բաց 'ի
հասարակաց պատերազմական սպանմանցն՝ որք հրա-
մանաւ թագաւորացն լինին, այլոցն՝ որ 'ի ձէնցն
լինին՝ ամենեցուն համարս պահանջելոց է 'ի ձէնց
անձ, ձանր և անաշառ դատաստանաւ:

՚ յոնպէս և զորս քան զսահմանեալ հռոգսն ձեր՝
անիրաւաբար և բռնութք յաղքատաց յափշտա-
կէք, կամ 'ի տերանց ձերոց ընչից գողանայք, ու-
նիք տալ զվճարն առանց պակասութե՝ յաւուրն
դատաստանի: ՚ յա և քան զայլ հասարակաց ժողո-
վարդականսդ՝ ձեղ առաւել պարտ է երկնչել յայ,
և զպատուիրանս նորա պահել. զի յամենայն ժամ
ընդդէմ սրոյ թշնամեաց ունիք պատերազմել: || ՚ ո-
րոյ՝ առաւել քան մարմնական զինուք՝ հաւատոյ
զինովն վառեցարուք, այս ինքն անձպաշտութեամք
և արդարութք և սրբութք, պահօք և աղօթիւք,
և ողորմութք, որպէս զի անձ լիցի ախոյեան 'ի պա-
տերազմունսն, և զմշնամիսն վանեսցէ առաջի ձեր:

ՊԱՏՈՒԵՐ տամբ և քաղաքայնոցդ, և որք 'ի վաշառափողոց նստիք՝ գնել և վաշառել, և առ արուեստաւորսդ, զի ուղղութքը տանիցիք զկեանս ձեր, և անարատ քաղաքավարութքը : Եւ մի ոք խարէութքը և նենդաւորութեամբ վաճառեսցէ զստացուածս իւր անմեղ գնողաց : Վանաւանդ ստախօսութքը և սուտ երդմամբ զուամիկսն և զանդէտսն խարելով, զի 'ի դատաստանին աւուր՝ ընդ գողս և ընդ յափշտակողս դատելոց է այնպիսին : Եւ առնու ած զբարեգործութիւնն իւր, և տայ զրկելոցն ինմանէ :

Եւ մի եղիցի առ ձեզ կշիռ մեծ և փոքր, և չափ կրկին, զի պիղջ են երկոքին առաջի տեառն՝ որպէս ասաց Վողոմնն . այլ արդարութքը և զորդութքը վաճառեցէք զգործս ձեռաց ձերոց, և զնիւթ վաճառոյ ձերոյ, զի մի անէծք զրկելոցն այրեսցէ զգոյս ձեր, այլ օրհնութին այ մասցէ 'ի տունս ձեր :

Եւ մի արհամարհէք զշնականսն իբրև զանդէտս, յաղագս պարզամտութեն իւրեանց . քանզի առաւել սիրէ ած զարդարամիտ կեանս նոցա, քան զարատաւորս և զիսարեբայս 'ի մարդկանէ :

Վի տայք զարծաթ ձեր 'ի վարձու, ըստ մարդարէին, այնոցիկ՝ որք նեղին 'ի բռնութէ իշխողաց, և ուտէք զաղքատութէ վաստակս նոցա 'ի շահս վաշխիցն . այլ որպէս եղբարք՝ կարեկիցք և օգնականք լերուք միմեանց : Եւ զոր տայք նոցա փոխ՝ զայն միայն պահանջեցէք 'ի նոցանէ, և շահիցիք զվարձս յայ բազմապատիկ՝ յանանց կեանսն, որպէս և հրամայէ Վայ ոչ միայն առանց վաշխից տալ, այլ թէ ։ Տուք այնոցիկ՝ յորոց ակն ոչ ունիցիք առնուլ, ։ Վայլ և յամենայն գոյից ձերոց տուք ողորմութիւն կարօտելոց և աղքատաց, զի այնու սրբեսցի ամենայն ինչ ձեր, և առնուցուք զփոխարէինն 'ի Վայ յաւուրն դատաստանի :

ԱՌ ԵՐԿՐԱԳՈՐԾՎ, ԵՒ ՀԱՄՈՒՔՆ
ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆՆԴ:

Լուսրութեա և երկրագործք և համօրէն ժողովը գլանքականքդ, զիսրատ պատուիրանին այ՝ զոր աւանդեմք ձեզ, Որոց մանաւանդ՝ առաւել պիտանացու է դեղ հոգեօրական՝ առ՚ի բժշկութի ոգւոց, զի և դուք առողջանայցէք՝ ի մեղացն հիւանդութենէ:

Որով աղաչեմք զձեղ՝ մի անցաւոր կենացս հեշտութեամք մարմնոյ՝ զյաւիտենական հեշտութիւնն հոգւոց, զոր յարքայուեն երկնից վայելեն սուրբքն, կորուսանէք: Եւ զի տաճար էք այ՝ որպէս ասաց առաքեալն, և հոգի այ բնակեալ է՝ ի ձեզ՝ մկրտութք աւազանին, մի ապականէք պղծալից պոռնկութք և շնութք զտաճարդ այ, որ են հոգիք ձեր, զի մի ապականեացէ զձեղ ած՝ ի դատաստանին աւուր՝ հրով գեհենին, որպէս և գրէ Պաւղոս:

Եւ մի արբենայք գինւով՝ յորում զեղխութի և յիմարութիւն է, որ է մայր պոռնկութի, և ամենայն պղծութի, և անիրաւութի, և վիշման, և աղտեղի բանից անարգանաց, յորմէ և սպանութիւնք լինին. զի մի արտաքս անկանիցիք յարքայութեն այ ժառանգութի ընդ սպանողս, և ընդ չարգործս՝ ըստ առաքելական բանիցն: Եւ եթէ ոք՝ ի ձէնց մեղաւ այսոքիւք այ, և կամ այլ ինչ յանցանօք, մի կացցէ հանապազ՝ ի նոյն աղտեղի սուլորութիւնն մինչև՝ ի վախճանին օր, այլ՝ ի ձեռն խոստովանութի և ապաշխարութեան քաւեսցէ զյանցանս իւր, և գործեացէ յայսմհետէ փոխանակ չըրին զբարիս:

Դարձեալ՝ մի զլեզուս ձեր առնէք գործի սատանայի, ՚ի ձեռն չար և դառն իշոյցաց. մանաւանդ՝ որ զհաւատ և զհոգիս անարգեն, և զմկրտութիւն աւազանին, և զմկրտիչ քահանայն, և զերես, և զբերան, որ քան զուրացութիւն և զթլփատութի մեծ են այս յանցանք. զի այլազգիք՝ որ ուրանաւ

տան քրիստոնէին զհաւատն, զանձ ոչ տան անարդէլ: Իսկ այս՝ որ զհաւատն անարդէ, ոչ զմարդանարդէ, այլ զանձ: զի հաւատ ամենայն ածապաշտի՝ ած է: Եւ որ զմկրտութիւն և զմկրտիչ քահանայն անարդէ, առ հոգին սուրբ է անարդութիւնն այն, զի նովալա ծնանին մկրտեալքն աւազանաւն: Եւ որ զհոգի մարդոյ և զերես անարդէ, նոյն՝ առ ած վերանայ հայհութիւնն, զի հոգին յայ է փռում, և երեսն՝ պատկեր է այ, նոյն և բերանն՝ ընդունող է մարմնոյ և արեանն Քո: Եւ արդ՝ մի տրտմեցուցանէք զհոգին սուրբ այ, այսպիսի զազիր և աղտեղի բանիւք, զի մի հեռացցի ՚ի ձէնջ այ հոգին՝ որ բնակեաց ՚ի ձեզ յաւազանին, և փոխակ մոցէ և բնակեցէ ՚ի սիրտս ձեր հոգին սատանայի:

Դարձեալ և զայս պատուեր առ հասարակ ամենայն հաւատացելոցդ աւանդեմք, զի զմանկունս ձեր երկիւղիւն այ սնուցանիցէք, խրատելով զնոսա ՚ի մանկական տիոց լինել ածասէր, ողորմած, աղօթասէր. և ուսուցէք նոցա զբանս աղօթից, և սաստեցէք չոփորել ՚ի խօսս աղտեղիս և ՚ի յիշոցատուութիւնս, զի ՚ի մանկութենն ժամանակ առաւել տնկի խրատ ծնողացն ՚ի միտս մանկանցն, անջնջելի յիշատակաւ, ընդ որում և վարձս բարեաց ընկալնիք փոխարէն ՚ի տեառնէ:

Եւ գլուխ ամենայն բարեաց՝ զսէր առ միմեանս կալջիք, և առ աղքատս և մերկս և հիւրս և բանտեալս և հիւանդս՝ զկարեկցութիւն և զողորմութիւն, որով արքայութեն լինիջիք ժառանգորդս ՚ի Քո Հո:

ԱՌ ԿԱՆԱՆՑ ԴԱՍՍ :

ՊԱՏՈՒԿԻ տամք և կանանց աղջի՝ պարկեշտութք և բարեձեռութք լինել յամենայնի, որպէս և վայելէ քրիստոնէից . և առաւելքան ոսկւով և արծաթով, ամօթխածութեամք և պատկառանօք զարդարել զանձինս ձեր : Եւ մի ոք 'ի գայթագետութեամբ պատճառս մեղաց անմիտ երիտասարդաց՝ այլագունեսցէ զգոյն երեսաց իւրոց օտար գեղօք, զի մի զիւր հոգին և զցանկացողին ինքեան՝ արկցէ 'ի գուբն անօրէնութեան :

Եւ մի ոք նմանող լիցի օձին՝ գործի լինելով սատանայի, զոր և կաւատն անուանեն : Օի որպէս նա Եւայի ջամբեաց զպտուղն մահու խաթէութեամբն, նոյնպէս և սա՝ զանմիտ կանանց և զարանց տայ Ճաշակել զպտուղն մահաբեր մեղաց : Որ 'ի սկզբանն քաղցը երեւի անմտաց, և յետ կատարմանն՝ դառն քան զեղի : Որ և զանէծս օձին ժառանգեսցէ այնպիսին յայ, զորոյ և զգործն ըստացաւ :

'Կարձեալ' մի ոք 'ի ձենջ սատանայական կախարդութեան, և աղանդոց գեղատուութեան զհետ երթիցէ : Օի այլ մեղք՝ 'ի գործսն է ֆամն, և այդ՝ 'ի հաւատն : Վաճաղի կախարդութիւնն 'ի սատանայէ է . և եթէ ոք ոչ նախ հեռանայ յայ, և առնէ զինքն սատանայի պատօնեայ և երկրագու, ոչ յաջողին կախարդութիւնքն : Ո ասն որոյ աղաշեմք, 'ի բաց լինել յայսպիսի մեծ և աններելի չարեաց, զի մի ընդ սատանայի դատապարտեսցի այնպիսին 'ի հուր գեհենին : Օի այս գործ կուապաշտիցն է և ոչ քրիստոնէից, զոր Վ՛՛ եբարձ դալստեամբն իւրով յաշխարհէ, զկուոցն մոլուին, և զգործս նորին չարութեն : Արդ՝ մի ոք վերստին դործակից լիցի սատանայի՝ չար գործովք կախարդութեն, և ընդ նմին այրեսցի 'ի հուր գեհենին յափտեան :

Եպ և այլ ինչ բաղումն գրել առ ձեզ յածային

պատուիրանաց՝ առ 'ի զգուշութիւն մեղաց, և յա-
մենայն չար դործոց, բայց զոր պակասն է 'ի զրոյս՝
ունիք ուսանել 'ի քահանայիցդ և յեպիսկոպո-
սացդ, որք կարգեալ են յայ տեսուչք հոգւոց ձե-
րոց, օր ըստ օրէ համառօտել ձեզ զբանն շշմար-
տութեն : Եւ մեք աղաջեսցուք զտէր, զի հանցէ 'ի
ձէնչ զսիրտ քարեղէն, և տայէ ձեզ սիրտ մարմնե-
ղէն, լինել երկիր արգաւանդ, և արդիւնացուցա-
նել զսերմն բանիս մեր՝ յոգիս ձեր, և տալ պտուղ
բազմապատիկ՝ 'ի չափ երրորդին : Որով զուարթա-
դին և անտրտում երեսօք ասասցուք յաւուրն դա-
տաստանի առաջի արդար դատաւորին, “ Այս ես
և մանկունք իմ՝ զոր ետուր ցիս ” . և դասեսցուք
ընդ աջեայսն 'ի յաւիտենական կեանսն ձեօք հան-
դերձ, 'ի ՎՌԱ ՀՅԱ 'ի տէր մեր, որ է օրհնեալ յա-
ւիտեանս, ամէն :



9890





